

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱԽԱԼՍԱՐԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ  
ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ  
ԳԻՆԱՄԻԿԱՆ՝ ՆՏ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ  
ՇԱՆԵՐԻ ՏԵՄԱՆԿՅՈՒՆԻՑ

(Փորձագիտական հոդվածների ժողովածու)

ՆԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ N 1

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ**  
**Հայ-քրդական առնչությունների բաժին**

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ N 1**

**ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ**  
**ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀՀ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ**  
**ՇԱՀԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

**(Փորձագիտական հոդվածների ժողովածու)**

**ԵՐԵՎԱՆ**  
**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**  
**2018**

ՀՏԴ- 93/94:32.001  
ԳՄԴ- 63.3+66.0  
S 260

*Տպագրության է. երաշխավորել ԵՊՀ  
գիտական խորհուրդը*

**Գրախոսներ՝**

պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ բոթակից անդամ Ա. Հ. Սիմոնյան  
պ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Կ. Կարապետյան

**Փորձագիտական խմբի ղեկ. և գիտ. խմբագիր**

պ.գ.թ., դոցենտ Վ. Ս. Պետրոսյան

**Հրատ. խմբագիր**

բ.գ.թ. Մ. Վ. Հովհաննիսյան

S 260 Տարածաշրջանային զարգացումների դինամիկան՝ ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից: Փորձագիտական հոդվածների ժողովածու/ Խմբ.՝ Վ. Պետրոսյան: -Եր.: ԵՊՀ հրատ., 2018, 96 էջ + 8 էջ ներդիր:

ԵՊՀ ՀՀԻ հայ-քրդական առնչությունների բաժնի փորձագետների հոդվածների ժողովածուն առնչվում է քրդագիտական և տարածաշրջանային արդի հիմնախնդիրներին: Իրականացված հետազոտությունները ներառում են Իրանի Իսլամական Հանրապետությունում քրդական և ազարիական գործոններին, Կովկասում (մասնավորապես Ադրբեջանում) գործող իսլամական արմատական կառույցներին, քրդական խնդրի ամերիկյան ընկալումներին, ինչպես նաև Իրաքյան Քուրդիստանում իրականացված անկախության հանրաքվեին վերաբերող հիմնախնդիրները:

Գիտական հոդվածները գրված են վերլուծական զեկուցագրերի ոճով և նախատեսված է միջազգայնագետ-դիվանագետների, արևելագետների, պատմաբանների և տարածաշրջանագետ-մասնագետների լայն շրջանակի համար:

ՀՏԴ- 93/94:32.001  
ԳՄԴ- 63.3+66.0

ISBN 978-5-8084-2341-1

© ԵՊՀ հրատ., 2018

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Առաջաբան .....	5
<b>Փորձագիտական հոդվածներ</b>	
<b>Վ. Ս. Պետրոսյան</b>	
Ամերիկայի Միացյալ Նահանգներն և Իրաքյան Քուրդիստանի անկախության նախագիծը .....	6
<b>Ս. Ս. Գրիգորյան</b>	
Իսլամական ծայրահեղ արմատական դրսևորումներն Ադրբեջանում .....	26
<b>Ա. Հ. Գաբրիելյան</b>	
Էթնիկ ֆրակցիաների ստեղծման գործընթացը ԻԻՀ մեջլիսում (ազարիների և քրդերի օրինակով) .....	45
<b>Վ. Ս. Պետրոսյան</b>	
Իրաքյան Քուրդիստանի անկախության հանրաքվեն. նպատակներն ու արդյունքները .....	69

## Առաջաբան

Ներկայացվող հոդվածների ժողովածուն ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-քրդական առնչությունների բաժնի կողմից հիմնված «Տարածաշրջանային զարգացումների դինամիկան՝ ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից» վերտառությամբ գիտագործնական և փորձագիտական նշանակություն ունեցող գիտական հոդվածների շարքի առաջին հատորն է: Այն կազմվել է արևմտյան վերլուծական կենտրոնների զեկույցների տեսքով և նվիրված է Մերձավոր և Միջին Արևելքի ներկայիս հիմնախնդիրներին: Հեղինակների հետազոտական մշակումների համար պարտադիր պայման է եղել թեմայի կարևորումը՝ ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից: Արդիականությանը, գործնական ուղղվածությանն ու նշանակությանը զուգահեռ փորձագիտական հոդվածների վերոհիշյալ ժողովածուում պահպանված է նաև ներկայացվող հետազոտությունների գիտականությունը:

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-քրդական առնչությունների բաժնի կողմից «Տարածաշրջանային զարգացումների դինամիկան՝ ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից» վերտառությամբ շարքի շրջանակներում պատրաստվող հետազոտություններն ու հրապարակումները կունենան ոչ միայն տեսական, այլև կիրառական մեծ նշանակություն:

### **Վահրամ Պետրոսյան**

*պարունական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ԵՊՀ ՀՀԻ հայ-քրդական առնչությունների բաժնի վարիչ,  
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի  
միջազգային հարաբերությունների և  
դիվանագիտության ամբիոնի վարիչ*

**ԱՍԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՆ ԵՎ ԻՐԱՔՅԱՆ  
ՔՈՒՐԴԻՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ**

*(Հեղինակ՝ ԵՊՀ ՀՀԻ հայ-քրդական առնչությունների բաժնի վարիչ,  
ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության  
ամբիոնի վարիչ, պ. գ. ք., դոցենտր Վահրամ Պետրոսյան)*

**Քանալի բառեր՝** *Քուրդիստանի ռեզիստան կառավարություն (ՔՌԿ), «Քուրդիստանի ղեմնկրարական կուսակցություն» (ՔԴԿ), «Քուրդիստանի հայրենասիրական միություն» (ՔՀՄ), «Փոփոխություններ» («Գորբաև») կուսակցություն, «Քուրդիստանի խլամական միություն» (ՔԻՄ), «Քոնալա-յե Էսլամի», «Արդարություն և զարգացում» կուսակցություն (ԱԶԿ), «Քուրդիստանի աշխարհավորական կուսակցություն» (ՔԱԿ կամ PKK), «Նոր սերունդ» կուսակցություն:*

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ**

Փորձագիտական զեկույցի ձևով մշակված վերլուծական հոդվածում դիտարկվում են ԱՄՆ-ի կողմից Իրաքյան Քուրդիստանի (Քուրդիստանի ռեզիստան կառավարության) անկախության գաղափարին աջակցելու օգտին և հիշյալ գաղափարին դեմ հանդես եկող ճամբարների կողմից բերվող համապատասխան փաստարկները:

**ԽՆԴՐԻ ԷՌԻԹՅՈՒՆԸ**

Ամերիկայի Միացյալ Նահանգները հսկայական ռեսուրսներ է ծախսել Իրաքյան երկու պատերազմներում (1991, 2003) և որոշակիորեն նպաստել Հյուսիսային Իրաքում քրդական ինքնավարության (1992 թ.), իսկ հետագայում՝ նաև Իրաքի կազմում Քուրդիստանի ռեզիստան ֆեդերալ միավորի՝ Քուրդիստանի ռեզիստան կառավարության (ՔՌԿ) ստեղծմանը: Վերջինս կարևորում է ԱՄՆ-ի դիրքորոշումն ու գիտակցում, որ վաստակելով ԱՄՆ-ի աջակցությունը Քուրդիստանի անկախության հարցում՝ Քուրդիստանի ռեզիստան կառավարությունն ապահովում է մի ամբողջ շարք այլ պետությունների ճանաչումն ու ստանում անվտանգության որոշակի երաշխիքներ:

ԱՄՆ-ն 2017 թվականի սեպտեմբերի 25-ին պաշտոնապես հանդես եկավ Իրաքյան Քուրդիստանում անցկացված անկախության հանրաքվեի դեմ ու չընդունեց վերջինիս արդյունքները: Սակայն ՔՌԿ (գերազանցապես՝ ՔԴԿ) ղեկավարությունն ամենևին չի հրաժարվել Քուրդիստանի անկախության գաղափարից, այլ մարտավարական նպատակներով հիշյալ հարցն առժամանակ դուրս է բերել այսօրվա քաղաքական օրակարգից: Հետևաբար Իրաքյան Քուրդիստանի անկախության նախագծի վերաբերյալ ոչ միայն պաշտոնական, այլև փորձագիտական փաստարկներն ավելի քան արդիական են:

Ներկայացվող հոդվածում քննարկվում են ՔՌԿ անկախության օգտին հանդես եկող և ԱՄՆ-ի աջակցությունն այս հարցում ակնկալող քուրդ և քրդամետ (օտարազգի), ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից ՔՌԿ անկախությանն աջակցություն ցուցաբերելու դեմ հանդես եկող կամ վերջինիս՝ ԱՄՆ-ի շահերին հակասելու գաղափարն առաջ քաշող քաղաքական գործիչների և փորձագետների փաստարկները:

**I. ՔՌԿ անկախության օգտին հանդես եկող քուրդ և քրդամետ գործիչների փաստարկները**

Քուրդ և քրդամետ մի շարք գործիչներ, ձգտելով հասնել քրդական անկախության հարցում ԱՄՆ-ի աջակցությանը, առաջ են քաշում հետևյալ փաստարկները:

➤ **Իրանի գործոնը:** Իրաքյան Քուրդիստանի անկախացումն անմիջապես կանոնադրված կազմի իրանական զարգացումների վրա՝ ստիպելով Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) քրդական բնակչությանը հետևել իրաքյան քրդերի օրինակին: Առնվազն Իրանի հյուսիսարևմտյան կարևորագույն նշանակություն ունեցող հատվածում բնակչության 7 տոկոսի անջատողական շարժման ծավալումն ու հնարավոր անջատումը (նույնիսկ Խորասանի քրդերի պետականամետ լինելու դեպքում և անկախություն ստացած ՔՌԿ-ի բացահայտ աջակցության բացակայության կամ բացառապես լրյալ չեզոքության պայմաններում) զգալիորեն կթուլացներ Իրանում կենտրոնական իշխանությունը: Ի տարբերություն արտաքին ռազմական հարձակման, որի դեպքում, բազմաթիվ դիտորդների գնահատմամբ, կարող էին

տեղ գտնել Իրանի ժողովրդի համախմբումն ու միավորումը, իրանցի քրդերի ներքին ու ավանդական անջատողական շարժումը կհանգեցնեք Իրանի այլ ոչ պարսկական փոքրամասնությունների անջատողական տրամադրությունների ակտիվացմանը: Այս շրթայի գործարկումն էական սպառնալիք կհանդիսանար ԻԻՀ-ի համար, որտեղ ոչ պարսկական փոքրամասնությունները կազմում են երկրի բնակչության գրեթե կեսը: Նման զարգացումների դեպքում ԻԻՀ կառավարությունը հարկադրված կլինեք բացառապես կենտրոնանալ երկրի ներքին քաղաքական և սոցիալական խնդիրների վրա, իսկ ռեժիմի գոյատևումն ու վերջինիս պահպանումը կվերածվեք գերխնդրի: Սա անհամեմատ ավելի քիչ նյութական, մարդկային ու ժամանակային ռեսուրսներ կթողնեք ԻԻՀ-ին՝ արտաքին քաղաքական ակտիվության, տարածաշրջանային ազդեցության ծավալման և միջուկային սպառնալիքային ձեռքբերման համար<sup>1</sup>:

➤ **ԻԻՀ-ն և տարածաշրջանային անվտանգությանն առնչվող այլ գործոններ:** Իրանի արտաքին-քաղաքական հնարավորությունների և ազդեցության կրճատումն էականորեն կնվազեցնի ու կսահմանափակի տարածաշրջանային որոշակի, ամերիկյան որակմամբ՝ ահաբեկչությունը հովանավորող պետությունների և ահաբեկչական որակվող կազմակերպությունների, այդ թվում՝ Սիրիայի, Հեզբոլլահի և Համասի հնարավորություններն ու կշիռը: Եթե Իրաքյան Քուրդիստանի անկախությունը հանգեցնեք առնվազն Իրանի և Սիրիայի քրդական բնակչության անջատողականության հաղթանակին կամ նրանց վերամիավորման տարբերակին, այն գործնականում վերջ կդնեք Սիրիայի՝ որպես ահաբեկչական կառույցներին աջակցող պետության ավանդույթին կամ նույնիսկ Սիրիայի՝ որպես աշխարհաքաղաքական սուբյեկտի ավարտը կհանդիսանար:

Այս արդյունքներն իրենց հերթին կնպաստեին Լիբանանի ազատագրմանը արտաքին և ներքին ահաբեկչական տիրապետությունից, կկանխեին մեկ այլ քաղաքացիական պատերազմն այնտեղ, կվերականգնեին վերջինիս տնտեսական և ժողովրդավարական զարգացման ընթացքը, ինչ-

<sup>1</sup> See Michael S. Bernstam, Considering Kurdistan, Harvard International Review/HIR (March 6, 2011)- <http://hir.harvard.edu/article/?a=2804>:

պես նաև Լիբանանի՝ որպես Մերձավոր և Միջին Արևելքի առևտրի և ֆինանսական հանգույցի դերն աշխարհի քարտեզի վրա:

Սիրիայի և Հեզբոլլահի թուլացումը կամրապնդեք սուննի մահմեդական, դրուզական և մարոնի քրիստոնյա խմբակցությունների սկզբունքորեն արևմտամետ և քվազի-ժողովրդավարական դաշինքը՝ նպաստելով Լիբանանի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ամրապնդմանը: «Չուգահեռաբար, քանի որ Իրանը Համասին ցուցաբերվող իր աջակցությամբ պաղեստինյան միասնական ազգ-պետության ստեղծման համար եղած ամենամեծ խոչընդոտն է, Քուրդիստանը պատմության ուժով կդառնար դեպի Պաղեստինի ազգ-պետության ստեղծումը, Իսրայելի անվտանգությունն ու այս երկուսի միջև խաղաղության հաստատումը տանող ամենակարճ ու ամենավստահելի ճանապարհը»<sup>2</sup>:

➤ **Անկախ քրդական պետությունը ֆինանսական բեռ չի հանդիսանա միջազգային հանրության համար:** ՔՌԿ տարածքում առկա խոշոր նավթային պաշարները էական տնտեսական հիմք կդառնան երկրի զարգացման համար: Կոստվոյի դեպքում ԱՄՆ-ն պարտավորված էր օգնել վերջինիս՝ գործելու որպես անկախ պետություն՝ հսկայական ֆինանսական օգնության տրամադրմամբ: Ի հակադրություն Կոստվոյի մոդելի՝ քրդական պետությունը (Իրաքի կազմից դուրս գալու դեպքում), թեև կզրկվի իրաքյան բյուջեի 17 % մասնաբաժնից, այդուհանդերձ կարող է տնտեսապես անկախ բարգավաճել՝ ֆինանսական բեռ չդառնալով թե՛ ԱՄՆ-ի, թե՛ միջազգային հանրության համար<sup>3</sup>:

➤ **Անկախ Քուրդիստանը կայունության գործոն կհանդիսանա ողջ փարսածաշրջանի համար:** Մասնավորապես Հարավարդի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսոր Ալան Դերշովիցը, քննարկելով քրդական պետության ստեղծման հավանականությունը, այն տեսակետն է առաջ քաշում, որ անկախ Քուրդիստանը կնպաստի Մերձավոր Արևելքում

<sup>2</sup> Michael S. Bernstam, Considering Kurdistan, Harvard International Review/HIR (March 6, 2011)- <http://hir.harvard.edu/article/?a=2804>.

<sup>3</sup> See Philip S. Hadji, The Case for Kurdish Statehood in Iraq (September 2015), Case Western Reserve Journal of International Law (September 2015), Vol. 41:513, pp. 538-539, <http://scholarlycommons.law.case.edu/cgi/viewcontent.cgi?article=1269&context=jil>:

լարվածության թուլացմանը<sup>4</sup>: Ռեալպոլիտիկի շահերի տեսանկյունից, եթե Արևմուտքը ցանկանում է Մերձավոր Արևելքում ստեղծել նավթի անվտանգ, կայուն և բարեկամական դիրքորոշմամբ մատակարար, Քուրդիստանը կարող է ստանձնել այդ դերը: Ռազմավարական առումով արևմտամետ Քուրդիստանը՝ որպես Իրաքի կոնֆեդերատիվ միավոր կամ որպես առանձին պետություն, կդառնա Մեծ Մերձավոր Արևելքի անվտանգության հիմնական ամրոցը: Կարևորվելով ներկայումս՝ այն ապագայում ավելի մեծ դերակատարում կունենա, քանզի չի կարելի անտեսել Սաուդյան Արաբիայում, Եգիպտոսում և տարածաշրջանի այլ երկրներում ջիհադական հեղափոխականների կողմից իշխանությունը վերցնելու հավանականությունը<sup>5</sup>:

➤ **Անկախ քրդական պետությունը կլինի ժողովրդավարությունն աջակցող պետություն:** ԱՄՆ նախկին նախագահ Ջորջ Բուշ Կրտսերը հետևողականորեն պնդում էր, որ իրաքյան պատերազմի և Իրաքում Միացյալ Նահանգների շարունակական ներկայության ամենամեծ արդարացումը ժողովրդավարության տարածումն է Իրաքում և Մերձավոր Արևելքի մնացյալ տարածքներում: Թեև ժողովրդավարության տարածումը գովելի նպատակ է, քիչ հավանական է, որ ժողովրդավարությունը զարգանա ու կայանա կրոնադավանական և միջհամայնքային բռնության բարձր գործակից ունեցող տարածքներում: Աջակցելով քրդական տարածքների անկախությանը՝ ԱՄՆ-ն թույլ կտա, որ ժողովրդավարությունն ավելի ամուր հիմքեր ստեղծի Իրաքի ամենակայուն հատվածում: Ավելին, Իրաքի քրդական շրջանը ժողովրդավարության ավելի մեծ փորձ ունի, քան Իրաքի ցանկացած այլ հատված<sup>6</sup>: 1992 թվականից սկսած մինչ օրս Իրաքյան

Քուրդիստանի տարածքում անցկացվել են հինգ խորհրդարանական ընտրություններ: Քուրդ և քրդամետ գործիչները պնդում են, որ եթե Միացյալ Նահանգներն իսկապես հավատարիմ է Մերձավոր Արևելքում ժողովրդավարության տարածման գաղափարին, քրդական պետականության աջակցումը լավագույն հնարավորությունն է՝ տեսնելու ժողովրդավարության տարածումն այնտեղ<sup>7</sup>:

➤ **Անկախ քրդական պետությունը կլինի աշխարհիկ պետություն:** Իրաքյան ՔՌԿ տարածքում ժողովրդավարության, մասնավորապես **աշխարհիկ ժողովրդավարության** կայացումն արտացոլում է ամերիկյան արժեքները, քանզի աշխարհիկությունն ու կրոնի ազատությունը արտահայտում են ամերիկյան արժեքները և ամուր ներդրված են ԱՄՆ Սահմանադրության մեջ: Եվ իրաքյան քրդերը հիմնականում հաղորդակից են այդ արժեքներին: Ի հակադրություն քրդերի՝ Իրաքի շիադավանները գտնում են, որ Իրաքի օրենքների հիմքը պետք է լինի իսլամը: Այդ համոզմունքն է, որ ստիպեց Իրաքի ղեկավար շրջանակներին իրենց վերապահումներն «արտահայտել կրոնի ազատության առնչությամբ»: Կառավարության շրջանակներում կրոնի պատշաճ դերի վերաբերյալ դիրքորոշումներում առկա ու խոր արմատներ գցած բաժանարար գծերը կարող են կաթվածահար անել ու հարվածի տակ դնել ողջ Իրաքի համար պատասխանատու ցանկացած կենտրոնացված կառավարության արդյունավետությունը: Մինչդեռ անկախ քրդական պետությունը կառավարման համակարգում ծանրաբեռնված չի լինի կրոնի դերի վերաբերյալ սուր պայքարով<sup>8</sup>:

➤ Վերոհիշյալի արդյունքում, Քուրդիստանի անկախության կողմնակիցների կարծիքով, «Քուրդիստանի տարբերակը կնպաստի ընդհանուր տնտեսական և սոցիալական զարգացմանը Մերձավոր Արևելքում: Քրդերը հիմնականում արևմտամետ են՝ բացառությամբ Թուրքիայում գործող որոշ

<sup>4</sup> St'u Amerikanский профессор: Независимый Курдистан — фактор стабильности во всем регионе,- Ria Taza (Сентябрь 07, 2016), <http://riataza.com/2016/09/07/amerikanskiy-professor-nezavisimiy-kurdistan-faktor-stabilnosti-vo-vsem-regione/>:

<sup>5</sup> St'u Michael S. Bernstam, Considering Kurdistan, Harvard International Review/HIR (March 6, 2011)- [http://hir.harvard.edu/article/?a\\_2804](http://hir.harvard.edu/article/?a_2804):

<sup>6</sup> 2015 թվականից սկսած՝ Իրաքյան Քուրդիստանի օրենսդիր մարմնի՝ խորհրդարանի աշխատանքները պարալիզացվեցին, երբ ՔՌԿ-ի կողմից որվեց «Գորրանի» պատգամավորների (այդ թվում՝ Քուրդիստանի խորհրդարանի խոսնակ Յուսիֆ Մուհամմադի)՝ էրբիլ մուտք գործելու արգելքը: Դժվարություններ առաջացան մաս գործադիր իշխանության հետ կապված, երբ նախագահական ճգնաժամի պայմաններում Քուրդիստանի վարչապետ Նեչիրվան Բարզանու իրահանգով կառավարության կազմից դուրս բերվեցին «Գորրան» կու-

սակցության պաշտոնյաները: Goran claims MPs blocked from Erbil by KDP, Rudaw (October 12, 2015), <http://www.rudaw.net/english/kurdistan/121020152>; St'u նաև՝ Hevidar Ahmed, PM Barzani sacks Goran ministers from KRG cabinet, Rudaw (October 13, 2015) <http://www.rudaw.net/english/kurdistan/131020151>:

<sup>7</sup> St'u Philip S. Hadji, The Case for Kurdish Statehood in Iraq (September 2015), Case Western Reserve Journal of International Law (September 2015), Vol. 41, Issue 2, pp. 537-539, <http://scholarlycommons.law.case.edu/cgi/viewcontent.cgi?article=1269&context=jil>:

<sup>8</sup> St'u Philip S. Hadji, The Case for Kurdish Statehood in Iraq (September 2015), Case Western Reserve Journal of International Law (September 2015), Vol. 41, Issue 2, pp. 537-539, <http://scholarlycommons.law.case.edu/cgi/viewcontent.cgi?article=1269&context=jil>:

կոմունիստական քրդական խմբերի: Նրանք հենվում են իրենց սեփական ուժերի վրա, ձեռներեց են, կրոնական դաշտում՝ էթնիկապես և քաղաքականապես հանդուրժող, հակված են դեպի աշխարհիկ կյանքը և սոցիալապես արդիական են: Նրանց կանայք, օրինակ, օգտվում են տղամարդկանց հավասար իրավունքներից: Քուրդիստանը կարող է օրինակ ծառայել մահմեդական հասարակությունների արդիականացման համար: Եթե Արևմուտքը ցանկանում է Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանային նոր մոդել ստեղծել, Քուրդիստանն այն դառնալու բնական թեկնածու է: Եթե Արևմուտքը ցանկանում է ստեղծել աշխարհիկ սուննի մահմեդական հանրապետություն, որ հակակշռեր ծայրահեղական ազդեցությունների, ապա Քուրդիստանը կարող է հասնել այդ նպատակին»<sup>9</sup>:

**➤ Անկախ Քուրդիստանը կդառնա ԱՄՆ-ի ամենավարակների ռազմարդարական ու փնտնասական գործընկերներից մեկը Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանում:** Դեռևս 1970-ական թվականների սկզբներին պատերազմի թակարդում հայտնված լեգենդար Մուստաֆա Բարզանին, ԱՄՆ-ից ավելի մեծ աջակցություն ակնկալելով, հաճախ էր հայտարարում, թե «ինքը չի վստահում ոչ մի այլ խոշոր տերության»՝ բացառությամբ Միացյալ Նահանգների, և Իրաքյան Քուրդիստանը «պատրաստ է դառնալ ԱՄՆ 51-րդ նահանգը»՝ այստեղի «նավթային հանքավայրերը դնելով ԱՄՆ տրամադրության ներքո»<sup>10</sup>: Մուստաֆա Բարզանին նաև նշում էր, որ «ԱՄՆ-ն կարող է ապավինել ընկերոջ աջակցությանն ՕՊԵԿ-ում այն բանից հետո, երբ նավթով հարուստ Քուրդիստանը հասնի իր անկախությանը»<sup>11</sup>:

Այսպիսով՝ քուրդ և քրդամետ գործիչները ձգտում են հասնել քրդական անկախության հարցում ԱՄՆ-ի աջակցությանը՝ պնդելով, որ անկախ

քրդական պետությունը կլինի աշխարհիկ սուննի մահմեդական հանրապետություն, իր ինքնակառավարման գործընթացներում ժողովրդավարությանն աջակցող, ամերիկյան արժեքներին համահունչ պետություն, որը ֆինանսական բեռ չի լինի միջազգային հանրության համար և կայունության գործոն կդառնա ողջ տարածաշրջանի համար:

ԱՄՆ-ի կողմից Իրաքյան Քուրդիստանի հնարավոր անկախության ճանաչման օգտին հանդես եկող կամ դա միանգամայն հավանական համարող փորձագետներն առաջ են քաշում նաև մի շարք այլ փաստարկներ. այն է՝ նման քայլով ԱՄՆ-ն.

- կամրապնդի իր դիրքերը Միջին Արևելքում՝ տարածաշրջանում ունենալով երկրորդ Իսրայելը,
- ի վիճակի կլինի հյուսիսային Իրաքում ստեղծել իր զորակայանները կամ ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների ծայրահեղ վատթարացման դեպքում Ինջիրլիքից այստեղ տեղափոխելու իր ավիագորակայանը,
- հնարավորություն կստանա իր վերահսկողությունը հաստատելու Իրաքյան Քուրդիստանի հարուստ նավթային ու գազային ռեսուրսների նկատմամբ,
- ամերիկամետ քրդական կառավարության դեպքում Իրաքյան Քուրդիստանն աստիճանաբար կվերածի ամերիկյան առաջակետի՝ էապես սահմանափակելով Իրանի Իսլամական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ազդեցությունը<sup>12</sup>:

Վերոհիշյալ փաստարկների համատեքստում շրջանառվում է նաև այն տեսակետը, որ քրդական պետության ստեղծումն առնվազն թույլ կտա ԱՄՆ-ին «դրական նոտայով» դուրս գալ Իրաքից<sup>13</sup>:

## **II. ԱՄՆ-ի կողմից ՔՌԿ անկախությանն աջակցություն ցուցաբերելու դեմ հանդես եկող կամ վերջինիս՝ ԱՄՆ-ի շահերին հակասելու գաղա-**

<sup>9</sup> Michael S. Bernstam, Considering Kurdistan,- Harvard International Review/HIR (March 6, 2011) <http://hir.harvard.edu/article/?a=2804>.

<sup>10</sup> Մեջբերումն ըստ՝ Lokman I. Meho and Michel G. Nehme, The Legacy of U.S. Support to Kurds: Two Major Episodes, p. 22, <http://staff.aub.edu.lb/~lmeho/meho-nehme-legacy-of-us-support-to-kurds.pdf>, տե՛ս նաև Edmund Ghareeb, The Kurdish Question in Iraq (Syracuse, NY: Syracuse University Press, 1981), p. 140:

<sup>11</sup> Մեջբերումն ըստ՝ Lokman I. Meho and Michel G. Nehme, The Legacy of U.S. Support to Kurds: Two Major Episodes, p. 22,- <http://staff.aub.edu.lb/~lmeho/meho-nehme-legacy-of-us-support-to-kurds.pdf>, տե՛ս նաև Edmund Ghareeb, The Kurdish Question in Iraq (Syracuse, NY: Syracuse University Press, 1981), p. 140:

<sup>12</sup> Տե՛ս *Альмир Хабидуллин*. Независимость Иракского Курдистана - в чем выгода США? «Islam Review», 02 июля 2014 ([http://islamreview.ru/politics/neza\\_visimostirakskogokurdistanavcemvygodassa/](http://islamreview.ru/politics/neza_visimostirakskogokurdistanavcemvygodassa/)):

<sup>13</sup> Տե՛ս *Philip S. Hadji*, The Case for Kurdish Statehood in Iraq (September 2015), - Case Western Reserve Journal of International Law (September 2015), Vol. 41, Issue 2, pp. 537-539, <http://scholarlycommons.law.case.edu/cgi/viewcontent.cgi?article=1269&context=jil>:



**փարն առաջ քաշող քաղաքական գործիչների և փորձագետների փաստարկները**

Այդուհանդերձ ուսաստանյան և արևմտյան փորձագիտական որոշակի շրջանակներում առաջ քաշվող փաստարկների գերակշիռ մասը խոսում է հոգուտ այն պնդման, որ ԱՄՆ-ին ձեռնտու չէ Քուրդիստանի անկախացման հեռանկարը: Հիշյալ փաստարկներն են.

➤ Նման դեպքում անխուսափելիորեն ի հայտ կգա նոր ճգնաժամ, և ԱՄՆ-ն հարկադրված կլինի միջամտելու դրան, մինչդեռ ներկայումս նա փորձում է դուրս գալ Աֆղանստանից և գտնել սիրիական խնդրի լուծումը: Նա վերափոխում է Միջին Արևելքում իր գործնական ներկայության ձևաչափը՝ կիրառելով «օֆշորային հավասարակշռման» մոտեցում, ինչպես դա եղավ Լիբիայում: ԱՄՆ-ի համար հույժ ծախսատար է միջամտել ճգնաժամներին՝ ցամաքային զորքերի կիրառմամբ, ուստի նա չի ցանկանա Իրաքում ունենալ ամերիկյան ցամաքային զորքերի առկայություն պահանջող ևս մեկ ճգնաժամ<sup>14</sup>:

Մասնավորապես բերվում են մի շարք փաստարկներ ի հիմնավորումն այն գաղափարի, որ Քուրդիստանի ռեզիոնալ կառավարության (ԲՌԿ) անկախացման դեպքում անկայունությունը կխորանա:

✓ Թեև ԲՌԿ-ն տնտեսական և ռազմաքաղաքական ոլորտում սերտորեն համագործակցում է Թուրքիայի հետ, որոշակի համագործակցային հարաբերություններ ունի Իրանի Իսլամական Հանրապետության հետ, նախկինում համագործակցել է նաև ծանր վիճակում հայտնված սիրիական իշխանությունների հետ և խորացնում է իր հարաբերությունները արաբական աշխարհի պետությունների հետ, այդուհանդերձ, դրանցից և ոչ մեկը քրդական անկախ պետականության ստեղծման հեռանկարը չի դիտում որպես ընդունելի տարբերակ: Ըստ այդմ՝ աշխարհաքաղաքական առումով դեպի ծով ելք չունեցող Իրաքյան Քուրդիստանը կարող է հայտնվել մեծ հակամարտային ներուժ ունեցող թշնամական օղակում, ինչը մի շարք

<sup>14</sup> Տե՛ս *Emre Uslu*. An Independent Kurdistan? Not if the US Can Help It. «ALMONITOR», 12 September 2013 (<https://www.al-monitor.com/pulse/ar/politics/2012/05/us-is-the-biggest-obstacle-to-in.html>):

նոր խնդիրներ կստեղծի ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության համար<sup>15</sup>:

✓ Եթե ԱՄՆ-ն դիտվի որպես անկախ Քուրդիստանի ստեղծման հիմնական հովանավոր, ապա Քուրդիստանը կարող է դառնալ ԱՄՆ-ի նկատմամբ թշնամաբար տրամադրված ահաբեկիչների համար հրապուրիչ թիրախ: Կախված նրանից, թե ինչ մակարդակի կլինեն Վաշինգտոնի հետ հարաբերությունները, և երկկողմ համաձայնագրերում ինչ դրույթներ կներառվեն, ԱՄՆ-ն կարող է պարտավորություն ունենալ պաշտպանելու այդ նոր պետությունը և հարկադրված միջոցներ ձեռնարկի նրա անվտանգության ապահովման ուղղությամբ:

✓ Հնարավոր է նաև, որ անկախացումից հետո քրդական տարբեր կուսակցությունների ու խմբակցությունների միջև (ԲԴԿ-ԲՀՄ, ԲԴԿ-«Գորրան», ԲԴԿ-ԲԲԿ, ԲՀՄ-քուրդ իսլամականներ, ԲՀՄ-ԲԲԿ) գոյություն ունեցող ներքին մրցակցությունն ու թշնամանքը հանգեցնեն նոր պետությունում իշխանության համար սուր պայքարի ծավալման, ինչը ԱՄՆ-ին կկանգնեցնի այդ նոր քաղաքացիական պատերազմի խնդիրը լուծելու անհրաժեշտության առջև<sup>16</sup>:

➤ Ամերիկացի փորձագետ Փիթըր Վեբերն այն կարծիքին է, որ Քուրդիստանը մի կազմավորում է, որը ԱՄՆ-ին «կարող է տրամադրել գործողությունների համար հենակետ» կամ նրան զերծ պահել Սիրիայում ԻԼԻՊ-ի դեմ ցամաքային գործողությունների վարման անհրաժեշտությունից, քանի որ Սիրիայի «Դեմոկրատական միություն» կուսակցության (ԴՄԿ) գլխավորությամբ գործող Ժողովրդական պաշտպանության ջոկատներն (ԺՊՋ) ու իրաքյան քրդերի Փեշմարգաները ԻԼԻՊ-ին դիմագրավող ամենաարդյունավետ զինված խմբերն են<sup>17</sup>: Որպես այս կարծիքին հակակշիռ՝ առաջ է քաշվում այն տեսակետը, թե անկախ Քուրդիստանի ստեղծման դեպքում հիմնումից անմիջապես հետո նոր պետությունը, հավանաբար, մտահոգված կլինի իր անվտանգության ապահովման հարցե-

<sup>15</sup> Տե՛ս *Daniel Larison*. Why Backing Kurdish Independence Still Doesn't Make Sense. «The American Conservative», 1 October 2015 (<http://www.theamericanconservative.com/larison-whybackingkurdishindependencestilldoesntmakesense/>):

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>17</sup> Տե՛ս *Peter Weber*. How Obama can outpace Putin in the Syria crisis: Support an independent Kurdistan. «The Week» magazine, 1 October 2015 (<http://theweek.com/articles/580175/how-obama-outpaces-putin-in-syria-crisis-support-independent-kurdistan>):

րով և ավելի քիչ հակված կլինի միանալու ԱՄՆ-ի պատերազմական ծրագրերին: Հետևաբար, անկախ Քուրդիստանի ստեղծումն առնվազն ԱՄՆ-ի շահերի կամ ԻԼԻՊ-ի դեմ տարվող պատերազմի տեսանկյունից մեծ օգուտներ չի բերի<sup>18</sup>:

➤ Ինչ վերաբերում է Իրաքյան Քուրդիստանում ամերիկյան ռազմակայաններ ստեղծելու տարբերակին, ապա այն ևս չդարձավ կարևոր փաստարկ ԱՄՆ-ի համար՝ Իրաքյան Քուրդիստանի անկախության գաղափարը միանշանակ ընդունելու համար: Իրաքյան Քուրդիստանում ամերիկյան ռազմական բազաների տեղակայման գաղափարը նորույթ չէր, և այն, արժարժվելով դեռ 2006 թվականին, լիովին շրջանառության մեջ դրվեց 2007 թվականի մայիսի վերջերին Սուլեյմանիեում քրդերենի Սորանի բարբառով լույս տեսնող «Հավվաթի» շաբաթաթերթի կողմից, որը, իր իսկ պնդմամբ, հենվում էր անանում ռազմական աղբյուրների վրա: Նշվում էր, որ ամերիկյան զորքերը պատրաստվում են Իրաքյան Քուրդիստանում բացել երեք խոշոր ամերիկյան ռազմակայաններ՝ Էրբիլի, Դոհուկի և Սուլեյմանիեի շրջաններում: Նույնիսկ հստակորեն նշվում էին այդ երեք բազաների տեղադրման կոնկրետ վայրերը՝ Քարադաղում (Սուլեյմանիեից դեպի հարավ), Ջախոյի շրջանում (Դոհուկից հյուսիս) և Էրբիլի հարևանությամբ: Նշվում էր նույնիսկ ամենաանհավանական սցենարը, թե հնարավոր է 1992 թվականին Թուրքիայում բացված Ինջիրլիքի ռազմակայանը տեղափոխվի Իրաքյան Քուրդիստանի շրջան<sup>19</sup>: Այդուհանդերձ, Իրաքյան Քուր-

դիստանում ամերիկյան ռազմակայաններ հիմնելու գաղափարն ու դրա շուրջ քննարկումները (մոտիվացիաների, նպատակների ու ձևաչափի տեսանկյունից) քրդական շրջանակներում ընկալվեցին փոքր-ինչ այլ կերպ, քան կային իրականում: Այդ գաղափարի ամերիկյան ընկալումն այլ էր, և Ինջիրլիքի բազան տեղափոխելու խնդիրն ընդհանրապես չէր դրվում: Դեռ 2007 թվականի մայիսի դրությամբ ԱՄՆ-ի մի շարք քաղաքական գործիչներ ու փորձագետներ (Ջորջ Բուշ Կրտսերի իրաքյան քաղաքականության աջակիցների ու ընդդիմախոսների համբավ ունեցողները) լրջորեն դիտարկում էին Իրաքի տարբեր հատվածներում տեղակայված ամերիկյան ռազմական բազաները Իրաքյան Քուրդիստանի տարածքում վերադիրբավորելու ու վերակայանելու հարցը: Այդ գաղափարի կողմնակիցներն էին նախագահության հնարավոր թեկնածու համարվող, դեմոկրատ սենատոր Քրիստոֆեր Դոդդը, ՄԱԿ-ում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ռիչարդ Հուլբրուքը (վերջինս նախագահական ընտրություններում դեմոկրատների հաղթանակի դեպքում պետքարտուղարի իրական հավակնորդ էր համարվում), «Washington Post»-ի անվանի սյունակագիր, քաղաքական վերլուծաբան Չարլզ Կրոուֆհամմերը և ուրիշներ:

Իրաքի տարբեր ոչ քրդական շրջաններում տեղակայված ամերիկյան ռազմական բազաները Իրաքյան Քուրդիստան տեղափոխելու գաղափարի կողմնակիցները բերում էին հետևյալ փաստարկները.

- ✓ դրանով իսկ ամերիկյան զորքերն ու ռազմակայանները ամբողջովին դուրս չէին բերվի Իրաքից ու լիովին չէին հեռանա այդ երկրից, այլ թողնելով առավել վտանգավոր շրջանները (Անբարի շրջան, Բադդադ և այլն)՝ կվերադիրբավորվեին ավելի կայուն ու հարաբերականորեն անվտանգ շրջաններում:

<sup>18</sup> Տե՛ս Daniel Larison. Why Backing Kurdish Independence Still Doesn't Make Sense. «The American Conservative», 1 October 2015 (<http://www.theamericanconservative.com/larison/whybackingkurdishindependencestilldoesntmakesense/>):

<sup>19</sup> Նշվում էր, որ դա կարևոր ձեռքբերում կլիներ Քուրդիստանի ռեզիմնալ կառավարության համար, որի մի շարք պաշտոնյաներ արդեն իսկ ողջունեցին նման հեռանկարը և աջակցություն ցուցաբերելու պատրաստակամություն հայտնեցին, եթե միայն կոալիցիոն ուժերն իրենց դիմեն նման խնդրանքով: Այնուամենայնիվ, քուրդ ռազմական պաշտոնյաները նշում էին, որ հարցը չի բարձրագվել, և որ իրենք դա համարում են մի հեռավոր հնարավորություն: Մասնավորապես Քուրդիստանի ՋՈՒ մամուլ խոսնակ, գեներալ-մայոր Ջաբբար Յավարը հետևյալ պարզաբանումն էր տվել «Հավվաթիին»․ «Կոալիցիոն ուժերը մինչ օրս նման խնդրանքով չեն դիմել և ոչինչ չի նշվել նաև զինված ուժերի ընդհանուր հրամանատարության հետ Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանու հանդիպման ժամանակ: Սակայն մենք կողջունենք նման խնդրանքը, քանի որ մենք և ԱՄՆ-ն դաշնակիցներ ենք: Որքանով ինձ հայտնի է, այդպիսի խնդրանք առաջ չի բաշվել»: Իսկ այն հարցին, թե արդյո՞ք ԱՄՆ ուժերը լիազորված են միակողմանի նման գործողություններ իրականացնել, հիշյալ աղբյուրը տվել էր հետևյալ տեղեկատվությունը․ «Կոալիցիոն ուժերի հրամանատարության և Քուրդիստանի շրջանի նախագահի միջև կնքված հուշագրի համաձայն նրանք

պետք է տեղեկացնեն մեզ (նման գործողությունների վերաբերյալ): Որքանով ես գիտեմ, նմանատիպ ոչ մի ծրագիր օրակարգում չկա: Սակայն ես չգիտեմ, թե արդյո՞ք նման գործողությունը քննարկվում է ապագայի համար, կամ արդյո՞ք այն քննարկվել է ներքին հարբությունում (ենթադրաբար նկատի ունի Միացյալ Նահանգները)»: Ինչ վերաբերում է Ինջիրլիքին, ապա քրդական բարձրաստիճան ռազմական գործիչները մշտապես իրատեսական մոտեցում են ունեցել այս հարցում: Մասնավորապես գեներալ մայոր Ջաբբար Յավարը բացատրել էր Ինջիրլիքի ռազմակայանը Քուրդիստանի տարածաշրջան տեղափոխելու հավանականությունը՝ նշելով, թե «չի կարծում, որ ԱՄՆ-ն կանի դա, քանի որ Թուրքիան կարևոր երկիր է ԱՄՆ-ի համար և ՆԱՏՕ-ի անդամ երկիր է», մինչդեռ ՔՌԿ-ն «մի շրջան է՝ ֆեդերալ երկրի ներսում»: Տե՛ս U.S. to open three huge US military bases in Iraqi Kurdistan region: Opening three US military bases and transfer of Incirlik base to Kurdistan, Hawlati Weekly (May 31, 2007), Kurd Net <http://www.ekurd.net/mismas/articles/misc2007/5-independentstate1381.htm>, <http://www.middleeastinfo.org/forum/index.php?showtopic=13791>:

- ✓ Ի տարբերություն Իրաքյան այլ էթնիկ ու կրոնադավանական միավորների՝ իրաքյան քրդերը համակրանքով են վերաբերում ամերիկյան զորքերի ներկայության հեռանկարին<sup>20</sup>:

Նույնիսկ Ռամսֆելդի դոկտրինի<sup>21</sup> շրջանակներում ԱՄՆ-ի սահմաններից դուրս ռազմական բազաների տեղակայման համար սահմանված մի շարք նոր չափանիշներն էին համապատասխանում Քուրդիստանում ամերիկյան ռազմակայաններ ունենալու հեռանկարին: Այդ չափանիշներն էին.

- ✓ ԱՄՆ-ի զորքերը պետք է տեղաբաշխվեն այն վայրերում, որտեղ նրանք ցանկալի են, որտեղ նրանց ողջունում են, և որտեղ նրանք անհրաժեշտ են:
- ✓ ԱՄՆ-ի զորքերը պետք է տեղաբաշխվեն այնպիսի շրջապատում, որը նպաստում է նրա տեղաշարժին: Պետք է հաշվի առնվի, որ ընդունող որոշ երկրներ սահմանափակումներ են մտցնում ամերիկյան ուժերի տեղաշարժի ու կիրառման հարցերում:
- ✓ ԱՄՆ-ն պետք է լինի այն վայրերում, որոնք թույլ են տալիս ամերիկյան զորքերին լինել ճկուն ու մատչելի կիրառման համար:
- ✓ Պետք է օգտվել առաջապահ ուժերի հնարավորություններից, քանզի դրանք թույլ են տալիս անել ավելին՝ ավելի քիչ կորուստներով: Չիմյալ խմբավորումների ներկայության վրա հենվելն արտացոլում է անցած արդյունաբերական դարաշրջանի մտածելակերպը:

Սակայն հիշյալ գաղափարի հակառակորդները նշում են, որ Իրաքյան Քուրդիստանում ամերիկյան ռազմակայաններ հաստատելու տարբերակը սխալ հաշվարկված ծրագիր է և պայմանավորված է նորանոր ռիսկերով: Նրանց կողմից բերվում էին հետևյալ փաստարկները.

- ✓ Իրաքի ցանկացած շրջանում ԱՄՆ-ի երկարաժամկետ ռազմական ներկայությունը կարող է առաջ բերել Իրաքի արաբների և այլ մուսուլմանների դժգոհությունը, որոնք գտնում են, որ Միացյալ Նա-

հանգները կայսերական դերակատարում ունի հիշյալ տարածաշրջանում և մտադիր է վերսկսել Իրաքի օկուպացիան:

- ✓ Իրաքյան Քուրդիստանում նույնիսկ սահմանափակ թվով ռազմակայաններ պահելով՝ ԱՄՆ-ն միայն կհաստատի հիշյալ ընկալումը, ինչն էական վնասներ կարող է հասցնել մուսուլմանական աշխարհում ԱՄՆ-ի ունեցած դիրքերին:
- ✓ Իրաքյան Քուրդիստանում ամերիկյան ռազմակայանների առկայությունը կհանգեցնի նրան, որ Իրաքյան Քուրդիստանն արաբների կողմից կընկալվի իբրև ԱՄՆ-ի նոր արբանյակ-դաշնակից ու «երկրորդ Իսրայել»:
- ✓ Իրաքյան Քուրդիստանում ռազմական ներկայությունը կարող է հեշտությամբ ներքաշել ԱՄՆ-ին ՔՌԿ-ի ու Իրաքի կենտրոնական իշխանությունների միջև ներիրաքյան վիճելի տարածքների (առաջին հերթին՝ նավթաբեր Քիրքուկի) շուրջ պայքարի մեջ՝ ԱՄՆ-ին կանգնեցնելով հավանական ընդհարումների խնդրի առջև, որում ներքաշված լինեին վիճելի տարածքների քուրդ, եզդի-քուրդ, արաբ, թուրքման, ասորի և էթնիկ ու կրոնադավանական մյուս միավորների խմբակցությունները:
- ✓ ԱՄՆ ռազմակայանների ներկայությունը կարող էր ստիպել վերջինիս անմիջականորեն ներքաշվել ՔՌԿ-ի՝ պոտենցիալ լարվածություն պարունակող երկու հարևանների՝ Իրանի և Թուրքիայի հետ ունեցած հարաբերությունների շրջանակ: Իսկ ՔՌԿ-ԻԻՀ և ՔՌԿ-Թուրքիա հարաբերություններում ներքաշվելը լրացուցիչ մարտահրավերներ էր պարունակում ԱՄՆ-ի համար<sup>22</sup>:

Ինքնին իրատեսական չէր այն ենթադրությունը, որ ԱՄՆ-ն Թուրքիայում առկա ռազմակայանների փոխարեն ռազմակայան կամ ռազմակայաններ կհիմներ Իրաքյան Քուրդիստանի տարածքում: ԱՄՆ-ն կարող էր ռազմական բազաներ հիմնել այստեղ՝ ի լրումն Թուրքիայում ունեցած իր ռազմակայանների և ոչ թե ի հաշիվ վերջիններիս, քանզի հիշյալ իրողությունն իր հետ կհանգեցներ մի շարք արմատական փոփոխությունների ԱՄՆ-ի՝ Միջին Արևելքում ունեցած ռազմավարության մեջ՝ այստեղից բխող միանգամայն անկանխատեսելի հետևանքներով:

<sup>20</sup> Ted Galen Carpenter, *Withdrawing to Kurdistan Is No Withdrawal*, - Baltimore Sun (May 15, 2007), <http://www.cato.org/publications/commentary/withdrawing-kurdistan-is-no-withdrawal>.

<sup>21</sup> 2002 թվականի հուլիսին տեղ գտավ ԱՄՆ պաշտպանական գերատեսչության ղեկավար Դոնալդ Ռամսֆելդի ելույթն ամերիկյան կոնգրեսմենների առջև, որի արդյունքում մշակվեց Ռամսֆելդի դոկտրինը: Դոկտրինի աշխարհագրական չափման շրջանակներում Ռամսֆելդն առաջարկեց ԱՄՆ-ի սահմաններից դուրս ռազմական բազաների տեղակայման մի շարք նոր չափանիշներ, որոնք կիրառվեցին նաև նախագահ Օրամայի օրոք և առնվազն պաշտոնապես չեն մերժվել նաև նախագահ Թրամփի կողմից:

<sup>22</sup> Տե՛ս Ted Galen Carpenter, *Withdrawing to Kurdistan Is No Withdrawal*, Baltimore Sun (May 15, 2007), <http://www.cato.org/publications/commentary/withdrawing-kurdistan-is-no-withdrawal>:

Քիչ հավանական էր նաև, որ ԱՄՆ-ն ռազմակայան կամ ռազմակայաններ կհիմներ Իրաքյան Քուրդիստանի տարածքում՝ չունենալով համապատասխան համաձայնագիր Իրաքի կենտրոնական իշխանությունների հետ, այն է՝ անտեսելով Բաղդադի կարծիքն այս հարցում: Նման պայմաններում ԱՄՆ-ն ակնհայտ հարված կհասցներ Իրաքի՝ առանց այդ էլ խաթարված միասնականությանը՝ խրախուսելով ՔՌԿ անկախացման գործընթացը: Արդեն իսկ նման հարցադրումը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ն պատրաստ է մի կողմ դնել Իրաքյան Քուրդիստանում ռազմակայանի ստեղծման գաղափարը, եթե այն սպառնում է Իրաքի տարածքային ամբողջականությանը:

➤ ՔՌԿ անկախության գաղափարի նկատմամբ առնվազն զգուշավոր մտեցման համար ԱՄՆ-ն ունի նաև մեկ այլ պատճառ: Ռուսաստանը (ՌԴ-ն), Չինաստանը (ՉԺՀ-ն), Հնդկաստանը, Պակիստանը, Աֆղանստանը, Ինդոնեզիան և նախկին Խորհրդային Միության մի շարք երկրներ բավականին հիմնավորված մտահոգություններ կունենան իրենց միջէթնիկական ու ազգամիջյան կայունության տեսանկյունից: ԱՄՆ-ի կողմից Քուրդիստանի տարբերակի ընտրությունն ու այդ նպատակի հետապնդումը կարող է հակադրվել վերոհիշյալ երկրների շահերին և հանգեցնել այդ երկրներից շատերի հակադրմանը ԱՄՆ-ին: Ավելին, դրա նախադեպն արդեն իսկ եղել է Կոսովոյի անկախության ճանաչումից հետո, երբ ԱՄՆ-ի կողմից ձեռնարկված քայլերն առաջ են բերել մի շարք պետությունների դժգոհությունը՝ միևնույն ներքաղաքական պատճառներով<sup>23</sup>: Բացի դրանից, փորձագետների կարծիքով, «Քուրդիստանի ստեղծման տարբերակի աղետալի ազդեցությունը պայմանավորված է նաև Մերձավոր և Միջին Արևելքի, ինչպես նաև Հարավային Կովկասի տարբեր պետություններում արդեն իսկ լարված միջէթնիկական հարաբերությունների հետագա սրմամբ»<sup>24</sup>:

<sup>23</sup> Հակառակ ճամբարի ներկայացուցիչները բերում են վերոհիշյալի հետևյալ հակափաստարկը. «Իրականում էթնիկ անջատման ու բաժանումների բացասական և շղթայական հետևանքները սովորաբար սահմանափակվում են որոշակի ռեզիոններով: Մասնավորապես Խորհրդային Միության և Հարավսլավիայի լուծարումները հանգեցրին մի շարք ողբերգական քաղաքացիական պատերազմների, սակայն դրանք չհանգեցրին շղթայական ռեակցիայի իրենց ռեզիոնալ սահմաններից դուրս»: Michael S. Bernstam, *Considering Kurdistan*, Harvard International Review/HIR (March 6, 2011), <http://hir.harvard.edu/article/?a=2804>:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղում:

➤ Առանձնահատուկ կարևորություն է ստանում նորաստեղծ պետության ճանաչման խնդիրը: Անկախության հռչակման դեպքում մեծ թվով պետություններ, հավանաբար, չեն ճանաչի Իրաքյան Քուրդիստանը, քանի որ դրա ստեղծման հարցում իրենց առարկությունները կհայտնեն Իրաքի, Իրանի Իսլամական Հանրապետության, Թուրքիայի և Սիրիայի կենտրոնական իշխանությունները: Ավելին՝ բոլոր այն պետությունները, որոնց տարածքներում գոյություն ունեն անջատողական և ազգայնական շարժումների իրական կամ հնարավոր սպառնալիքներ, նույնպես չեն ցանկանա ճանաչել նորաստեղծ պետությունը<sup>25</sup>:

➤ ԱՄՆ-ն ցանկանում է Իրաքում շիական ազդեցությունը հակակշռել քրդերի և սուննի արաբների միջոցով: Սակայն Իրաքից սուննի քրդերի և սուննի արաբների (կամ նրանցից որևէ մեկի) անջատման և իրենց պետության ստեղծման դեպքում մնացած Իրաքը, մասնավորապես նավթով հարուստ Բասրայի շրջանը, կհայտնվի Իրանի լիակատար հովանավորության ներքո: Քրդերի անկախացման դեպքում կվերանա Իրանի ընդունած՝ «շիադավան կիսալուսնի ռազմավարության» ճանապարհին կանգնած ամենագորեղ պատենշներից մեկը: ԱՄՆ-ն չի կարող թույլ տալ, որ Իրաքի շիադավան շրջաններն անցնեն Իրանի անվերապահ վերահսկողության տակ: Այդ հարցում վճռորոշ դեր է տրվում Իրաքյան Քուրդիստանին, մասնավորապես նախագահ Մասուդ Բարզանուն: Քանի դեռ քրդերն ու սուննի արաբները Բաղդադում են, նրանք մշտապես կվերահսկեն իրանամետ շիադավան գործիչներին՝ սահմանափակելով Իրանի տարածաշրջանային նկրտումները:

Նախքան 2017 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած հանրաքվեն որոշ ամերիկյան փորձագետներ վստահ էին, որ Իրանն ընդհանուր առմամբ հակված է քրդերի անկախության գաղափարին<sup>26</sup>, քանզի դա կօգնի իրենց ավելի մեծ ազդեցություն ունենալ Իրաքի մնացյալ հատվածի վրա: Սակայն այս պնդումները չհաստատվեցին: 2018 թվականի մայիսի 12-ին

<sup>25</sup> Տե՛ս Daniel Larison. *Why Backing Kurdish Independence Still Doesn't Make Sense*. «The American Conservative», 1 October 2015 (<http://www.theamericanconservative.com/larison/whybackingkurdishindependencestilldoesntmakesense/>):

<sup>26</sup> Տե՛ս *Emre Uslu*. *An Independent Kurdistan? Not if the US Can Help It*. «ALMONITOR», 12 September 2013 (<http://www.almonitor.com/pulse/politics/2012/05/usisthebiggestobstacle.html#>):

կայացած խորհրդարանական ընտրություններից հետո Բաղդադում ԻԻՀ դիրքերն էլ ավելի ամրապնդվեցին: Իրաքի օրենսդիր և գործադիր մարմիններում ավելի մեծ չափով են ներկայացված իրանամետ շիադավանները, սուննիները և քրդերը (ի դեմս «Քուրդիստանի հայրենասիրական միություն» (ՔՀՄ) և «Փոփոխություններ» («Գորրան») կուսակցությունների): Բացի դրանից՝ Իրանը դեմ է ԲՌԿ անկախությանը, որովհետև չի ցանկանում, որ ստեղծվի ևս մեկ սուննիական պետություն: Իրանամետ ՔՀՄ-ն, Գորրանը, նույնիսկ «Նոր սերունդ» և «Քոմալա-յե Էսլամի» կուսակցությունները դեմ են Իրաքյան Քուրդիստանի անկախությանը, որի օգտին ավելի շատ հանդես է գալիս «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցություն» (ՔԴԿ) ու «Քուրդիստանի իսլամական միությունը» (ՔԻՄ): Նույնիսկ եթե ՔԴԿ-ն Իրաքյան Քուրդիստանը տանի անկախության ճանապարհով, Իրանը ձգտելու է հասնել Իրաքյան Քուրդիստանի տրոհմանը՝ դրանից անջատելով Սուլեյմանիան, որտեղ ավելի ամուր են ՔՀՄ-ի և նրանից անջատված ու ներկայումս Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանում ունեցած տեղերով երրորդ կուսակցության՝ «Գորրանի», ինչպես նաև նորաստեղծ «Նոր սերունդ» կուսակցության դիրքերը:

➤ Քուրդիստանի անկախության տարբերակին առնչվող ռիսկերը հատկապես զգալի են Իրաքում և Թուրքիայում: Փոխշահավետ ֆեդերալիստական կարգավորման բացակայության պայմաններում քրդական անջատողականությունն ու իռոնեցիզմը կարող են ապակայունացնել և մասնատել նրանցից յուրաքանչյուրին: Արևմտյան անվտանգության տեսանկյունից Թուրքիան գտնվում է հակասական վիճակում, և Միացյալ Նահանգների ու արևմտյան այլ երկրների կողմից Քուրդիստանի անկախության տարբերակին ցուցաբերվող աջակցությունը կարող է էլ ավելի թշնամացնել Թուրքիային և դրդել նրան գնալ Իրանի հետ ավելի սերտ քաղաքական դաշինքի կերտման ճանապարհով՝ արձանագրելով նաև հակաարևմտյան, հակաժողովրդավարական և պրո-ջիհադիստական ուղղվածության որոշակի ներքաղաքական տեղաշարժ<sup>27</sup>: Ինչ վերաբերում է Իրա-

<sup>27</sup> Սակայն Քուրդիստանի անկախության կողմնակիցների ճամբարը դրան արձագանքում է այն փաստարկով, որ քրդական խնդիրը երկար պատմություն ունի և կարող է լուծվել միայն իրենց՝ թուրքական կառավարության և թուրքական հասարակության կողմից: Եվ Քուրդիստանի անկախության տարբերակը միայն կմեծացնի դրա լուծման հրատապությունը:

քին, ապա էական հարված կհասցվի Իրաքի փխրուն կայունությանը, որի արդյունքում վերջինս կարող է հետագայում տապալվել: Հետևաբար ամերիկյան փորձագիտական շրջանակներում որոշակի ընկալում է գտել այն տեսակետը, որ Քուրդիստանի անկախությունը թեև հնարավորություն է տալիս խուսափելու երկակի ստանդարտներից և համապատասխանում է էթնիկ և ազգային բոլոր խմբերին հավասար վերաբերմունք ապահովելու չափանիշներին, արաբ-քրդական կոնֆեդերացիան, այդուհանդերձ, գործնական առումով ավելի արդյունավետ է:

➤ ԱՄՆ-ն Իրաքի քրդական շրջանը միշտ դիտել է որպես կայունության կղզյակ: Քրդական անկախության հռչակումը կնշանակի տարածաշրջանում տասնամյակների կտրվածքով ստեղծել նոր անկայունություն և նոր թշնամանք: ԱՄՆ-ն ցանկանում է թե՛ քրդական (ԲՌԿ) տարածքում, թե՛ վիճելի Քիրքուկում առկա էներգետիկ ռեսուրսներն անվտանգ կերպով հասցնել արևմտյան շուկաներ: Նա չի պատրաստվում թույլ տալ, որ Մասուդ Բարզանին, անկախություն հռչակելով, Իրաքի նավթային շրջաններում անորոշ ժամանակով ապակայունացնի իրավիճակը:

ԱՄՆ-ն գերադասում է գործ ունենալ ոչ թե անկայուն, այլ կայուն, թեկուզ և դեպի Իրան հակվող կառավարություն ունեցող Իրաքի հետ: Դա է պատճառը, որ ԱՄՆ-ն առժամանակ անուշադրության մատնեց Իրաքի նախկին վարչապետ ու փոխնախագահ Նուրի ալ Մալեքիի և մի շարք այլ իրաքցի գործիչների իրանամետ կողմնորոշումը<sup>28</sup>:

➤ Որպես Իրաքյան Քուրդիստանի անկախության նկատմամբ ԱՄՆ-ի բացասական դիրքորոշման փաստարկում է բերվում նաև Սաուդյան Արաբիայի գործոնը: Եթե քրդերը երկրի հյուսիսում հռչակեն իրենց անկախությունը, և Իրաքը բաժանվի երեք մասի, ապա շիադավանների շրջան մուտք գործելու մատչելիության պայմաններում իրանցիները կդառնան Սաուդյան Արաբիայի անմիջական ու ցամաքային հարևանները: Նման

Michael S. Bernstam, Considering Kurdistan, Harvard International Review/HIR (March 6, 2011)- <http://hir.harvard.edu/article/?a=2804>:

<sup>28</sup> St'u Emre Uslu. An Independent Kurdistan? Not if the US Can Help It. «ALMONITOR», 12 September 2013 ([http://www.almonitor.com/pulse/politics/2012/05/usisthebiggestobstacle\\_toin.html#](http://www.almonitor.com/pulse/politics/2012/05/usisthebiggestobstacle_toin.html#)):

իրադրությունն Իրանին կտա Սաուդյան Արաբիայի ու Ծոցի այլ երկրների շիադավաններին հրահրելու էական և համեմատաբար դյուրին իրագործելի հնարավորություն: Սաուդյան Արաբիան, որը միջամտեց Բահրեյնում տեղի ունեցող զարգացումներին՝ «արաբական գարնան» պտոթկունը կանխելու նպատակով, կանի հնարավոր ամենը՝ Իրաքի մասնատումն ու հատվածայնացումը կանխելու համար<sup>29</sup>:

Բարզանու կողմից Քուրդիստանի ռեզիմնալ կառավարության անկախության հռչակումը կնշանակեր ապակայունացնել ոչ միայն Իրաքի, այլև Սաուդյան Արաբիայի էներգետիկ ռեսուրսների արտահանումը: ԱՄՆ-ն չի կարող թույլ տալ նավթի ու նավթամթերքի գների կտրուկ աճ: Այդ է պատճառը, որ առնվազն այսօրվա դրությամբ Քուրդիստանի անկախացման համար ամենամեծ խոչընդոտներից է ԱՄՆ-ն<sup>30</sup>:

### Եզրակացություն

Այսպիսով՝ հիմնական խնդիրներից մեկն այն է, թե կարճաժամակետ, միջնաժամակետ և երկարաժամակետ հեռանկարում որքանով է ՔՌԿ նոր ղեկավարությունը պատրաստ հռչակելու Իրաքյան Քուրդիստանի անկախությունը, երբ դրան դեմ է հանդես գալիս ԱՄՆ-ն՝ ՔՌԿ ղեկավարությանը խորհուրդ տալով համագործակցել Իրաքի կենտրոնական կառավարության հետ<sup>31</sup>:

Առկա է մաս երկրորդ հարցադրումը՝ արդյո՞ք ԱՄՆ-ն հաստատում է Իրաքի և տարածաշրջանային այլ պետությունների տարածքային ամբողջականության պահպանման հարցում:

<sup>29</sup> St'ev Emre Uslu. An Independent Kurdistan? Not if the US Can Help It. «ALMONITOR», 12 September 2013 (<http://www.almonitor.com/pulse/politics/2012/05/usisthebiggestobstacle-toin.html#>):

<sup>30</sup> 2014 թվականին ամերիկյան կողմը նույնիսկ հրաժարվեց իր նավահանգիստներում ընդունել քրդական նավրով բեռնված տանկերը: Արգելքը սահմանվել էր ԱՄՆ-ի դատարարների կողմից իրաքյան իշխանությունների պահանջով, որոնք ՔՌԿ-ի Բաղդադը շրջացող նավթային մատակարարումները դիտում են որպես անլեգալ գործառույթ: Михаил Агаджанян, «Большая нефть» Курдистана между Израилем и Азербайджаном, сайт "Научного Общества Кавказоведов" Kavkazoved.info (18.08.2014), <http://www.kavkazoved.info/news/2014/08/18/bolshaja-neft-kurdistan-mezhdu-izrailem-i-azerbajdzhanom.html>.

<sup>31</sup> St'ev Emre Uslu. An Independent Kurdistan? Not if the US Can Help It. «ALMONITOR», 12 September 2013 (<http://www.almonitor.com/pulse/politics/2012/05/usisthebiggestobstacle-toin.html#>):

Ներկայումս ԱՄՆ-ն պաշտոնապես դեմ է քրդական անկախության գաղափարին, քանի որ պաշտպանում է բոլոր այն պետությունների տարածքային ամբողջականությունը, որոնցից «մեծ Քուրդիստանը» կարող է անջատվել: Սակայն հետագայում ամերիկյան քաղաքական գործիչները կարող են վերանայել իրենց տեսակետը, ինչպես դա բազմիցս եղել է միջազգային հարաբերությունների նորագույն պատմության ընթացքում.

- Նախագահ Հարրի Ս. Թրումենը հաղթահարեց ԱՄՆ պետական դեպարտամենտի առարկությունների արգելքն ու 1947 թվականին ձեռնամուխ եղավ հրեական պետության՝ Իսրայելի կերտմանը:
- Ուկրաինայի անկախության հանրաքվեից ամիսներ առաջ՝ 1991 թվականի օգոստոսի 1-ին, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ Ավագը Կիևում (Ուկրաինա) արտասանած իր ճառում զգուշացնում էր ուկրաինացիներին ձեռնպահ մնալ «ինքնասպան ազգայնականությունից» և դուրս չգալ Խորհրդային Միության կազմից: Ելույթը գրվել էր Քոնդոլիզա Ռայսի կողմից և զայրացրել ուկրաինացի ազգայնամուլներին ու ամերիկյան պահպանողականներին, իսկ պահպանողական «New York Times» պարբերականի սյունակագիր Վիլյամ Սաֆայրը այն անվանել էր «Chicken Kiev speech»՝ ի նշան բողոքի՝ ընդդեմ «վիթխարի սխալ դատողության»: Այդ անվան ներքո էլ ճառը մտավ պատմության մեջ: Սակայն 1991 թվականի դեկտեմբերի 1-ին Ուկրաինայում տեղի ունեցած հանրաքվեի արդյունքում ուկրաինացիների մեծ մասը (92.3%-ը) կողմ քվեարկեց Ուկրաինայի Գերագույն ռադայի՝ 1991 թվականի օգոստոսի 24-ին ընդունած անկախության հռչակագրին: Եվ Բուշ Ավագը հարկադրված էր իր աջակցությունը հայտնել Ուկրաինայի անկախացման գործընթացին:
- Միացյալ Նահանգներն ի սկզբանե դեմ էր Հարավսլավիայի կազմալուծմանն ու փլուզմանը, սակայն Խորվաթիայի և Սլովենիայի ճանաչումը Գերմանիայի կողմից ստիպեց ԱՄՆ Պետդեպարտամենտին վերանայել իր բացասական դիրքորոշումն այդ հարցում ու համապատասխան քայլերի դիմել<sup>32</sup>:

<sup>32</sup> Michael Rubin, Kurdistan Rising? Considerations for Kurds, Their Neighbors, and the Region, American Enterprise Institute, Washington, 2016, p. 117.

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԳՐԻՄՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱԳՐԵՋԱՆՈՒՄ

(Հեղինակ՝ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի  
հայ-քրդական առնչությունների բաժնի զիրաշխարհող,  
պ.գ.թ. Սարգիս Գրիգորյան)

**Բանալի բառեր**<sup>1</sup> ծայրահեղ արմատական կառույցներ, իսլամական ծայրահեղականություն, «Ալ-Չիհադ», «Հիզբ ալ-Թաիբի», «Անրառային եղբայրներ», «Ղարաբաղի պարտիզաններ», «Չայշ ալ-Մուհաջիբին ուս ալ-Անսար», «Աղրբեջանական ջամաա», «Ջուդեյլլահ», «Իսլամական պետություն», «Ջաբհաթ ալ-Նուսրա», «Ջունուդ ալ-Շամ», «Նուր ադ-Դին Չիբի»:

### Ընդհանուր դրույթներ

Սույն հետազոտությունում դիտարկվում են Աղրբեջանի Հանրապետությունում իսլամական ծայրահեղականության (սուննիական) ներկայիս դրսևորումներն ու աղրբեջանցի իսլամական ծայրահեղականների ակտիվությունը կոմկասյան և մերձավորարևելյան արդի զարգացումների համատեքստում:

### Խնդրի էությունը

#### Իսլամական ծայրահեղականությունն Աղրբեջանում

Կովկասում աճող իսլամական ծայրահեղ արմատական տրամադրությունները չէին կարող չազդել մուսուլմանական Աղրբեջանում իսլամի արմատական գաղափարների տարածման վրա, որը հատկապես նկատվեց Աղրբեջանի անկախացումից հետո: 1990-ական թվականներին աղրբեջանցի իսլամականներն ակտիվորեն ներքաշվեցին ոչ միայն Կովկասում տեղի ունեցող հակամարտություններում (Ղարաբաղյան հակամարտություն, Չեչենական պատերազմներ), այլև այլ տարածաշրջաններում ընթացող ջիհադին (Աֆղանստան, Պակիստան, Աֆրիկա և այլն)<sup>1</sup>: 1988-1994

<sup>1</sup> Տե՛ս Aaron Y. Zelin, The Clear Banner: The Forgotten Fighters: Azerbaijani Foreign Fighters in Syria and Iraq, Jihadology, February 2, 2015, <http://jihadology.net/2015/02/02/the-clear-banner-azerbaijani-foreign-fighters-in-2014/> (Մուտք՝ հոկտեմբերի 24, 2016 թ.), նաև՝ Youngman M., Cerwyun M., “Russian-Speaking” Fighters In Syria, Iraq And At Home: Consequences And

թվականներին՝ Ղարաբաղյան հակամարտության ժամանակ, Աղրբեջանի կողմից մարտնչում էին աֆղանական պատերազմն անցած բազմաթիվ ջիհադականներ<sup>2</sup>, որոնց որոշակի հատվածն Աղրբեջանից հետագայում տեղափոխվեց Չեչենիա՝ զինված գործողություններին մասնակցելու համար, իսկ մյուս մասը մնաց Աղրբեջանում՝ ակտիվ դերակատարում ստանձնելով երկրում արմատական շարժումների կայացման գործում<sup>3</sup>:

1990-ական թվականների կեսերին նկատվեց Աղրբեջանում գործող իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներով առաջնորդվող ջիհադականների (ինչպես աղրբեջանցի, այնպես էլ օտարերկրյա) ակտիվ ներգրավվածություն Կովկասում ընթացող գործընթացների մեջ<sup>4</sup>: 1990-ական թվականների կեսերին Չեչենիայում և Դաղստանում Խատարի (Սամիր Սալիհ Արդալլահ) և այլ իսլամական ծայրահեղ արմատական լիդերների ճամբարներում ռազմական պատրաստություն են անցել նաև մեծ թվով աղրբեջանցի իսլամականներ<sup>5</sup>:

Աղրբեջանում գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցները մասնակցություն ունեցան նաև Կովկասից դուրս իրականացված այնպիսի հնչեղություն ստացած ահաբեկչական գործողություններին, ինչպիսիք էին 1996 թվականներին Քենիայում և Տանզանիայում ամերիկյան դեսպանատների պայթեցումները և այլն<sup>6</sup>: Այդ համատեքստում պարզ է

Context (Full Report), Centre for Research and Evidence on Security Threats, November 20, 2017, pp. 18-19:

<sup>2</sup> 1990-ական թվականների սկզբին Աղրբեջանը Արցախյան պատերազմում դիմեց մուջա-հիդների օգնությանը, և այդ կոչն անարժազանք չմնաց: Քաբուլից Բաքու ուղիղ չվերթներով Աղրբեջանում էին հայտնվում, այնուհետև արցախյան ճակատ էին փոխադրվում հարյուրավոր մուջախիդներ (այդ թվում՝ Խատարի (Սամիր Սալիհ Արդալլահ), Շամիլ Բասսևր և ուրիշներ)՝ ջիհադական պայքարին մասնակցելու համար (տե՛ս Шерматова С., Терроризмъ секонд-хэнд, // Московские новости, 2001, 20 сентябрь):

<sup>3</sup> Տե՛ս Charalampidis I., Sponsored to Kill, Mercenaries and Terrorist Networks in Azerbaijan, M., 2013, pp. 20-21 (<http://karabakhfacts.com/wp-content/uploads/2013/02/Ioannis-Charalampidis-Sponsored-to-Kill-ENG.pdf>):

<sup>4</sup> Հատկանշական է ԱՄՆ պետարտադրության 1999 թվականին հրապարակած զեկույցը, որտեղ Աղրբեջանը բնորոշվում էր որպես ահաբեկչական խմբավորումներին հարող իսլամական ծայրահեղականների փկունքային աջակցության կենտրոն (տե՛ս Гос. Деп. США, Модели глобального терроризма, 1999; Зеркало, 01/04/02):

<sup>5</sup> Տե՛ս Youngman M., Cerwyun M., նշվ. աշխ., էջ 24-25:

<sup>6</sup> Քենիայում և Տանզանիայում ԱՄՆ դեսպանատների դեմ իրականացված ահաբեկչական գործողությունների հետաքննության արդյունքում բացահայտվել է, որ «ալ-Կաիդայի» առաջնորդ Ուսամա բեն Լադենը Աֆղանստանից դեպի Բաքու մոտ 60 հեռախոսագրով և կատարել: Նայրոբիի ահաբեկչական հարձակումից մեկ ժամ առաջ Աղրբեջանի մայրաքա-

դառնում, որ մուսուլմանական աշխարհի որոշ հատվածներում ակտիվ գործող իսլամական արմատական կազմակերպությունները (օրինակ՝ «Իսլամական ջիհադ», «ալ-Կաիդա» և այլն) Ադրբեջանում արդեն ունենին վաղուց գործող իրենց բջիջները:

Ադրբեջանում իշխանության բռնաճնշումների հետևանքով ընդհատակում շարունակեցին գործել իսլամական ծայրահեղ արմատական տրամադրություններով առաջնորդվող հետևյալ կառույցները.

«Ալ-Ջիհադը» 1995 թվականին Ադրբեջանում ստեղծված առաջին իսլամական ծայրահեղ արմատական կառույցներից էր, որի հիմնադիրը եզդիպտացի Իբրահիմ Այդարուսին էր: 1990-ական թվականների երկրորդ կեսից «ալ-Ջիհադը» որդեգրեց ահաբեկչական գործելաձև՝ հարելով «ալ-Կաիդային»:

«Հիզբ ալ-Թահրիրի» առաջին անդամներն Ադրբեջան ժամանեցին 2000 թվականին Հյուսիսային Կովկասից: 2001 թվականի օգոստոսին Ռուսաստանի քաղաքացի Աբդուրասուլ Աբդուբերիմովի կողմից ստեղծվեց այդ կառույցի ճյուղավորումն Ադրբեջանում: Նույն թվականին կառույցը ահաբեկչական հայտարարվեց, իսկ դրա 6 անդամները (5 ադրբեջանցի և 1 ուկրաինացի) ձերբակալվեցին Ադրբեջանի աշխարհիկ կարգերը տապալելու փորձերի և ահաբեկչություններ ծրագրելու համար<sup>7</sup>:

«Անտառային եղբայրները» ստեղծվել է Դադստանի հարավում: 2007-2008 թվականներին «Անտառային եղբայրներ» խմբավորումը ղեկավարեց ադրբեջանցի Իլգար Մոլաչինը<sup>8</sup>, ով Խատաբի (Մամիր Մալիի Աբդալլահ), Շամիլ Բասակի և մի շարք այլ իսլամականների ղեկավարությամբ ակտիվորեն մասնակցել է Չեչենական պատերազմներին: Իլգար Մոլաչինը ակտիվացրեց կառույցի գործունեությունը նաև Ադրբեջանում (առևանգումներ, փրկագների պահանջ, զինված հարձակում Բաքվի Աբու

Բաքր մզկիթի վրա և այլն)<sup>9</sup>: 2012 թվականի ապրիլին ադրբեջանական ուժային կառույցների կողմից հակաահաբեկչական գործողություններ իրականացվեցին Բաքու, Գյանջա, Սումգայիթ, Ջաբաթալա, Քախ, Շերի և Կուսար բնակավայրերում, որոնց հետևանքով ձերբակալվեցին 17 մարդ, սպանվեց «Անտառային եղբայրների» այդ ժամանակվա առաջնորդ Վուգար Պադարովը:

«Ղարաբաղի պարտիզաններն» Ադրբեջանում ակտիվորեն գործող իսլամական խմբավորումներից է: Կառույցը համալրված է ջիհադական պայքարի փորձ ունեցող ադրբեջանցի իսլամականներով, որոնք ներգրավված էին եղել ոչ միայն Աֆղանստանում և Չեչնիայում տեղ գտած զարգացումներում, այլև Լեռնային Ղարաբաղում հայկական ուժերի դեմ իրականացվող ռազմական գործողություններում<sup>10</sup>:

Ադրբեջանում իսլամական արմատականության տարածման գործում ակտիվ դերակատարում են ունեցել զանազան ոչ պետական մարդասիրական կառույցներ, որոնք ֆինանսավորվել են Ադրբեջանից դուրս գործող հիմնադրամներից և կազմակերպություններից: Ադրբեջանում գործող իսլամական արմատական կառույցներն օգտվել են «Միջազգային մարդասիրական հիմնադրամից», «Հիմնական օգնության հիմնադրամից» և այլ հիմնադրամներից տրվող ֆինանսական աջակցությունից: Հիշյալ հիմնադրամներն իրենց ներկայացուցչություններն ունենին նաև Բաքվում<sup>11</sup>: 1990-ական թվականների վերջում Բաքվում գործող որոշ «մարդասիրական» կառույցներ, որոնք ղեկավարվում էին սաուդյի և եմենցի կամավորների կողմից, օգտվում էին Մերձավոր Արևելքից եկող ֆինանսական հոսքերից: Ադրբեջանում գործող հիշյալ «մարդասիրական» կառույցների դրամական միջոցներից օգտվել են նաև հայտնի իսլամական առաջնորդները (Խատաբ (Մամիր Մալիի Աբդալլահ), Աբու Ռումար ալ-Սայֆ և այլն) Կովկասում (մասնավորապես Չեչնիայում) իրենց ռազմաքաղաքական ֆինանսավորման

դար Բաքվից դեպի Լոնդոն «ալ-Կաիդայի» կողմից հիշյալ ահաբեկչության պատասխանատվության ստանձնումը հաստատող արաբերեն ուղերձ է հղվել (տե՛ս Yunusov A., Islam in Azerbaijan, Institute for Peace and Democracy, Baku, Azerbaijan, 2004, pp. 245-247), նաև տե՛ս Demoyan H., The Islamic Mercenaries in the Karabakh War, The Way International Terrorist Networks Penetrated Azerbaijan, Yerevan 2004, pp. 5-17, [http://www.karabakhcenter.com/images/menus/315/the\\_islamic.pdf](http://www.karabakhcenter.com/images/menus/315/the_islamic.pdf)):

<sup>7</sup> Տե՛ս Азербайджан: независимый ислам и государство, Кавказский Узел, 16 июля 2008, <http://www.kavkaz-uzel.eu/articles/139308/#s19> (Մուտք՝ մայիսի 2, 2016 թ.):

<sup>8</sup> 2008 թ. սեպտեմբերի 7-ին Դադստանում Մոլաչինն ու նրա 3 զինակիցները ոչնչացվեցին իրավապահ մարմինների հետ բախման ժամանակ:

<sup>9</sup> Այդ տարիներին մասնաճյուղեր ստեղծվեցին Ադրբեջանի տարբեր հատվածներում: Սումգայիթ քաղաքում՝ ձևավորվեց «Սումգայիթի ցամախ», որը 2008, 2009, 2010 թվականներին մի շարք զինված գործողություններ իրականացրեց Ադրբեջանում:

<sup>10</sup> «Ղարաբաղի պարտիզանների» անդամներից շատերը 2004 թվականին ձերբակալվել էին ադրբեջանական իշխանությունների կողմից՝ մեղադրվելով ջիհադական պայքար ծրագրավորելու մեջ:

<sup>11</sup> Տե՛ս Боданский Й., Служба Исследований Конгресса США, Стратегическая политика, Oktober 9, 2001:



համար<sup>12</sup>: 1990-ական թվականների կեսերից Ադրբեջանում գործել են «Իսլամական ժառանգության վերականգնման միությունը», սաուդյան «Օգնության բաշխման միջազգային իսլամական կազմակերպությունը» և այլ կառույցներ, որոնք ոչ միայն զբաղվել են մզկիթների, կրոնական ուսումնական կենտրոնների կառուցմամբ և իրականացրել մարդասիրական բնույթի աշխատանքներ, այլև իսլամական արմատական գաղափարներ քարոզել Ադրբեջանում<sup>13</sup>:

2000-2017 թվականներին Ադրբեջանում իսլամականների ակտիվությունը չդադարեց: Նշված ժամանակահատվածում Ադրբեջանի իրավապահ մարմինների կողմից սուսնիական արմատական գաղափարներով առաջնորդվող ադրբեջանցի իսլամականների հանդեպ իրականացվել են որոշակի հետապնդումներ ու ձերբակալություններ: Այն փաստը, որ ձերբակալվածների խուզարկության ժամանակ հայտնաբերվել են ինքնաձիգներ, ատրճանակներ, նռնակներ ու այլ զինամթերք, խոսում է այն մասին, որ Ադրբեջանում զանազան իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների ծրագրերում ներառված է նաև ահաբեկչական գործողություններ իրականացնելու նպատակը:

Ադրբեջանական ՁԼՄ-ներում ժամանակ առ ժամանակ շրջանառվում է Սիրիա և Իրաք տեղափոխվելու, այնտեղ «անհավատների» դեմ կռվելու ցանկություն ունենալու մեջ մեղադրվող և ձերբակալված ադրբեջանցի իսլամականների մասին տեղեկատվությունը<sup>14</sup>: 2014 թվականի գարնանը Ադրբեջանի խորհրդարանի կողմից իրականացվեցին օրենսդրական փոփոխություններ, որոնց արդյունքում խստացվեց ահաբեկչության և վարձկանության համար նախատեսված պատիժը<sup>15</sup>: Մակայն վերոհիշյալ միջոցառումները հիմնականում մեծ ազդեցություն չեն ունենում արմատական գաղափարներով առաջնորդվող ադրբեջանցիներին զսպելու համար:

<sup>12</sup> St'u Youngman M., Serwyun M., նշվ. աշխ., էջ 18-20:

<sup>13</sup> St'u Ադրբայդջան: независимый ислам и государство, Кавказский Узел, 16 июля 2008, <http://www.kavkaz-uzel.eu/articles/139308/#s19> (Մուտք՝ օգոստոսի 2, 2016 թ.):

<sup>14</sup> St'u В Азербайджане обезврежена группа боевиков «Исламского государства», Haqqin.az, 2 сентября 2015 г. <http://haqqin.az/news/52186> (Մուտք՝ մարտի 24, 2016 թ.):

<sup>15</sup> St'u Фаик Меджил, В Азербайджане ужесточены меры наказания за наемничество и терроризм, ИА, Кавказский узел, 15 марта 2014 г. <http://www.kavkaz-uzel.ru/articles/239526/> (Մուտք՝ մարտի 24, 2015 թ.):

Ներկայում Ադրբեջանում ակտիվացող իսլամական ծայրահեղ արմատական տրամադրություններն ու այդ համատեքստում Մերձավորարևելյան և Կովկասյան տարածաշրջաններում ադրբեջանցի իսլամականների ակտիվ ներգրավվածությունը թույլ են տալիս ենթադրել Ադրբեջանում իսլամական ծայրահեղ արմատականության խորը արմատների մասին, որոնց հիմնական պատճառներից են՝

- Ադրբեջանի հասարակական-քաղաքական, տնտեսական ոլորտներում նկատվող խնդիրները, որոնք խորացնում են կենտրոնական իշխանությունների և հասարակական լայն շրջանակների միջև անջրպետը՝ նպաստելով հակասությունների խորացմանը:
- Ադրբեջանում սուսնիականների աճող թվաքանակը<sup>16</sup>, որը նպաստում է սուսնի-շիա ներիսլամական հակասությունների, ինչպես նաև իսլամական ծայրահեղ արմատական գաղափարների տարածմանը:
- 2011 թվականի սկզբից մուսուլմանական երկրներում սկսված վերափոխումներն իրենց ազդեցությունն են ունենում իսլամական ծայրահեղական նոր պիքի բարձրացման վրա մուսուլմանական աշխարհում, այդ թվում՝ Կովկասյան տարածաշրջանում, մասնավորապես Ադրբեջանում:
- 2011-2017 թվականներին Սիրիայում և Իրաքում տեղ գտած զարգացումները, դրանցում ակտիվացող իսլամական ծայրահեղ արմատականությունն ու Իսլամական պետության հռչակումը:

### ***Ադրբեջանից դուրս գործող ադրբեջանական իսլամական ծայրահեղ արմատականությունը***

Վերջին տարիներին ադրբեջանցի իսլամականներն իրենց ակտիվությամբ աչքի են ընկել նաև Կովկասի այլ հատվածներում: Մասնավորապես

<sup>16</sup> Ըստ պաշտոնական տվյալների՝ Ադրբեջանում շիադավանների և սուսնիականների տոկոսային հարաբերակցությունը կազմում է համապատասխանաբար 70 % և 30 % (Komite sedri, Azerbaycanda müsəlmanların 70 faizi şia, 30 faizi əhli-sünnədir, Metbuat.az, 28 November 2016, <http://metbuat.az/news/575941/komite-sedri-azerbaycanda-muselmanların-70-faizi-sie-30-faiz.html> (Մուտք՝ դեկտեմբերի 5, 2016 թ.)), սակայն ըստ Կովկասի մուսուլմանների վարչության առաջնորդ Ալլահշուրյուր Փաշազադեի՝ Ադրբեջանում շիադավանների թիվը կազմում է 65 %, իսկ սուսնիականներիը՝ 35 % (Аллашшукюр Пашазаде, Порядка 35% населения Азербайджана – сунниты, 65% – шииты, Report, 14 февраля 2015 г., <http://report.az/ru/religiya/allahshukyur-pashazadepredpolagaetsya-chto-v-azerbajdzhane-35-naseleniya-sunnity-a-65-shiity/> (Մուտք՝ փետրվարի 24, 2015 թ.):

աղբրեջանցի իսլամականների ակտիվությունը նկատվել է Պանկիսի կիր-  
ճում (որը գտնվում է երեք պետությունների՝ Վրաստանի, Ադրբեջանի և  
Ռուսաստանի հատման միջնամասում), և Վրաստանի ու Ռուսաստանի  
այլ հատվածներում<sup>17</sup>:

Վրաստանի հարավարևելյան, Հայաստանին սահմանակից Քվեմո  
Քարթլիի ադրբեջանական բնակչության շրջանում նույնպես նկատելի են  
իսլամական ծայրահեղ արմատական տրամադրություններ: Ըստ որոշ  
հասարակական կազմակերպությունների տրամադրած տվյալների՝ Քվեմո  
Քարթլիում ադրբեջանցի երիտասարդների արդեն մոտ 20 %-ը հարել են  
իսլամական ծայրահեղ արմատականությանը: Ըստ այլ տեղեկություննե-  
րի՝ Վրաստանում կան ադրբեջանական իսլամական ծայրահեղ արմատա-  
կանության ակտիվության երեք կենտրոններ՝ մայրաքաղաք Թբիլիսիի ար-  
վարձանում՝ *Պոնիչալայում* (հետաքրքիր է, որ 2013 թ. հուլիսին Պոնիչալա-  
յում այրվել էր Հայաստանից դեպի Ռուսաստան ուղևորվող բեռնատար  
ավտոմեքենա)<sup>18</sup>, որտեղ կան մոտ 50 ծայրահեղ արմատական ադրբեջան-  
ցիներ, որոնք կապված են Բաքվի իսլամական ծայրահեղականների հետ,  
Քվեմո Քարթլիի *Քեչալո* բնակավայրում, որտեղ կա իսլամական ծայրա-  
հեղ արմատականներից սպասարկող մզկիթ և *Քարաջալա* բնակավայրում,  
որտեղ նույնպես գործում է արմատականներին սպասարկող մզկիթ<sup>19</sup>:

Ադրբեջանցիները շարունակում են ակտիվություն դրսևորել նաև Մեր-  
ձավոր Արևելքում տեղի ունեցող ռազմական գործողություններում: Ադրբե-  
ջանցիների մասնակցությունը Մերձավոր Արևելքում տեղի ունեցող ռազ-  
մական գործողություններին վկայում է, որ Ադրբեջանում իսլամականների  
հավաքագրման ցանցային կայացած համակարգ է գործում, որի միջոցով  
ադրբեջանցի իսլամականները ֆինանսավորվում և տեղափոխվում են  
Մերձավոր Արևելք՝ ջիհադին մասնակցելու համար: Ֆինանսավորումն իրա-  
կանացվում է ինչպես առանձին անհատների, այնպես էլ առանձին կա-

<sup>17</sup> Տե՛ս Георгий Лебанидзе, Грузия пытается бороться с влиянием ИГИЛ, Ru.rfi.fr, 12 апреля  
2015 г., <http://ru.rfi.fr/kavkaz/20150412-gruziya-pytaetsya-borotsya-s-vliyanie-igil> (Մուտք՝  
մարտի 17, 2016 թ.):

<sup>18</sup> Թբիլիսիի Պոնիչալա բաղամասում ՀՀ-ից ՌԴ ուղևորվող բեռնատար ավտոմեքենա է  
այրվել է, «Արմենպրես», հուլիսի 19, 2013 թ., <https://armenpress.am/arm/news/726663/>:

<sup>19</sup> Տե՛ս Georgia's Muslim Community: A Self-Fulfilling Prophecy?, European Centre For  
Minority Issues, February 2012, pp. 4-14, [http://www.ecmi.de/uploads/tx\\_ifpubdb/Working\\_](http://www.ecmi.de/uploads/tx_ifpubdb/Working_Paper_58_En.pdf)  
[Paper\\_58\\_En.pdf](http://www.ecmi.de/uploads/tx_ifpubdb/Working_Paper_58_En.pdf) (Մուտք՝ հոկտեմբերի 24, 2016 թ.):

ռույցների ու հիմնադրամների միջոցով<sup>20</sup>: Ադրբեջանցիների տարանցիկ  
ճանապարհն անցնում է հիմնականում Թուրքիայի տարածքով<sup>21</sup>:

Մինչ 2013 թվականը Մերձավոր և Միջին Արևելքում գործում էին  
ադրբեջանական կամ վերջինիս բաղադրիչի գերակայությամբ առանձին  
կառույցներ: Վերոհիշյալ ժամանակահատվածում սիրիական հակամար-  
տությունում ներգրավված ադրբեջանցիները համախմբված էին հիմնակա-  
նում «*Ջայլ ալ-Մուհաջիրին ուս ալ-Անսար*» խմբավորման կազմում, մաս-  
նավորապես այդ կառույցի մաս կազմող «*Ադրբեջանական ջամաայի*»  
մեջ:

Ադրբեջանցի իսլամականներով համալրված հաջորդ կառույցը «*Չուն-  
դուլլահ*» խմբավորումն էր: Խմբավորման մեջ, ադրբեջանցիներից շատ,  
ներգրավված էին նաև թուրքեր: Խմբավորումը գործել է սիրիական ալ-  
Ռակկա նահանգում և ակտիվորեն մասնակցել է Սիրիայի հյուսիսում  
քրդաբնակ Քոբանիի վրա իսլամականների հարձակումներին:

Մյուս խմբավորումը, որը համալրված էր ադրբեջանցի և թուրք ջիհա-  
դականներով, Իրաքում ջիհադական պայքար մղող «*Խալաբն*» էր, որն  
այդպես էր կոչվում այդ խմբավորման առաջնորդի՝ Խատար ալ-Ազերիի  
անունով:

Որոշ ադրբեջանցիներ գործել են նաև «*Արու Քալիլ*» խմբավորման  
կազմում, որը հիմնականում չեչեններով էր համալրված:

Սիրիայում ադրբեջանցի իսլամական առաջնորդներից աչքի ընկան  
*Արու Յահյա ալ-Ազերին, Մուսաբ ալ-Ազերին, Մուհամմադ ալ-Ազերին,  
Ռուստամ Ասբերովը, Ռուվշան Բադալովը, Չոհրաբ Մամեդովը, Խալաբ  
ալ-Ազերին* և ուրիշներ<sup>22</sup>:

<sup>20</sup> Տե՛ս Россия зафиксировала перевод денег ИГИЛ из Азербайджана?, Грузия онлайн, 22  
ноября 2015, <http://www.apsny.ge/2015/conf/1448240387.php> (Մուտք՝ հուլիսի 3, 2016 թ.):

<sup>21</sup> Տե՛ս Вербовка террористов в Азербайджане, Voprosik.net, 31 августа, 2014, [http://voprosik-](http://voprosik.net/verbovka-terroristov-v-azerbajdzhanе/)  
[net/verbovka-terroristov-v-azerbajdzhanе/](http://voprosik.net/verbovka-terroristov-v-azerbajdzhanе/) (Մուտք՝ մայիսի 21, 2015 թ.):

<sup>22</sup> Նիրաբ Աշուրովը (սպանվեց 2013 թ. սեպտեմբերին) ադրբեջանցի խարիզմատիկ և  
հայտնի առաջնորդներից էր, ով հեղինակություն էր վայելում ոչ միայն ադրբեջանցի ջի-  
հադականների, այլև իսլամական այլ ծայրահեղ արմատական շրջանակներում: Ալ-  
Ազերին մի շարք ուղերձներով է հանդես եկել, որտեղ կոչ էր անում Ադրբեջանում գտնվող իր  
հայրենակիցներին տեղափոխվել Սիրիա և այլ ջիհադական ճակատներ:

Արու Յահյա ալ-Ազերիի սպանությունից հետո ադրբեջանական ջիհադականների ղեկա-  
վարությունը ստանձնեց Մուսաբ ալ-Ազերին (Մուսաբ Արդ ալ-Ռահիմ Արդ ալ-Մաջիդ), ով  
12 այլ ադրբեջանցիների հետ միասին սպանվեց քրդական զինված ստորաբաժանումների

Սիրիայում կառավարական ուժերին սատարող խմբավորումների կազմում ադրբեջանցիների (շիաներ) ներգրավվածության մասին փաստեր ևս կան, որոնց համաձայն՝ շիա ադրբեջանցիները Բաշար ալ-Ասադի շիա-ալաուիական վարչակարգին սատարելու նպատակով Սիրիա են ներթափանցել Իրանի, այնուհետև Իրաքի տարածքից<sup>23</sup>:

Սիրիական և իրաքյան կառավարական ուժերի դեմ պայքարելուց զատ՝ ադրբեջանցի իսլամականներն ակտիվորեն մասնակցել են տարբեր էթնիկ խմբերի դեմ իրականացված ռազմական գործողություններին<sup>24</sup>, որոնք ևս կարելի է դիտարկել ոչ միայն Սիրիայում և Իրաքում գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցների, այլև տարածաշրջանային ու արտատարածաշրջանային ուժերի կողմից ուղղորդումների համատեքստում:

2013 թվականի կեսերից իսլամականների վերահսկողության տակ անցան Սիրիայի էներգակիրներով հարուստ ալ-Ռակկա և Դեր Ջոր նահանգները: Այստեղից նավթի ու գազի վաճառքն անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ ապահովեց իսլամականների համար, որը հնարավորություն տվեց աշխարհի տարբեր հատվածներից Սիրիայում, իսկ 2014 թվականի

---

կողմից 2014 թվականի մարտին: Մուսաբ ալ-Ազերիի մահից հետո ադրբեջանցի ջիհադականների ղեկավարությունն անցավ Մուհամմադ ալ-Ազերիին:

«Ղարաբաղի պարտիզաններ» կոչված ադրբեջանցի իսլամականները նույնպես հեղինակություն էին վայելում Սիրիայի ջիհադականների շրջանում, որոնց մեջ էին նաև սիրիական հակամարտությունում աչքի ընկած Ռուստամ Ասբերովը (ով սպանվեց Սիրիայում 2013 թվականի դեկտեմբերին) և Ռովշան Բադալովը (ով սպանվեց Քոբանիում 2014 թվականի հոկտեմբերին):

Մեկ այլ ադրբեջանցի Չոհրաբ Մամեդովը բուրբ-ադրբեջանական խմբավորման («Չուհրուլլահ») առաջնորդն էր: Մյուս ազդեցիկ ադրբեջանցի իսլամականը Խատաբ ալ-Ազերին է, ով իր երիտասարդ տարիքին (մոտ 30 տարեկան) ունի մեծ հեղինակություն ադրբեջանցի ջիհադականների շրջանում՝ համարվելով ամենահայտնի ադրբեջանցի իսլամական առաջնորդը Սիրիայում և Իրաքում (տե՛ս Zelin A., The Clear Banner, The Forgotten Fighters, Azerbaijani Foreign Fighters in Syria and Iraq, Jihadology, February 2, 2015 (<http://jihadology.net/2015/02/02/the-clear-banner-azerbaijani-foreign-fighters-in-2014/>), Մուսաբ՝ մարտի 2, 2015 թ.):

<sup>23</sup> Տե՛ս Sabuhi Mammadli, Global Voice, Caucasus, Azerbaijanis on Both Sides of Syrian Conflict, Iwpr.net, <https://iwpr.net/global-voices/azerbaijanis-both-sides-syrian-conflict>, Մուսաբ՝ դեկտեմբերի 3, 2017 թ.):

<sup>24</sup> Բազմաթիվ ադրբեջանցիներ սպանվել են Սիրիայի քրդաբնակ Քոբանիի համար տեղի ունեցած ռազմական գործողությունների ժամանակ: Բացի դրանից՝ ասվածի հավաստումը կարող ենք գտնել նաև իսլամականների կողմից տարածված որոշ փաստարկերում, որոնք փաստում են Սիրիայի և Իրաքի քրդաբնակ ու եզդիաբնակ հատվածներում սպանված ադրբեջանցի իսլամականների մասին: Տե՛ս գեկույցի վերջում ներկայացված հավելվածը:

կեսերից արդեն Իրաքում հավաքվող ջիհադական ուժերին, այդ թվում՝ նաև ադրբեջանցի ջիհադականներին ֆինանսավորելու համար:

Իսլամականների ֆինանսավորման աղբյուրներ են եղել նաև մուսուլմանական տարբեր երկրներից հավաքագրվող ֆինանսական միջոցները (որոշ մուսուլմանական իշխանական շրջանակներից, տարբեր երկրների մուսուլմանական համայնքներից և անհատական նվիրատվություններից և այլ ճանապարհներով հավաքագրվող ֆինանսական ռեսուրսները): Ադրբեջանցի իսլամականները նույնպես ֆինանսավորում էին վերոհիշյալ ֆինանսական աղբյուրներից և հենց Ադրբեջանից հավաքագրվող նվիրատվություններից<sup>25</sup>:

2013 թվականի կեսերից հետո Սիրիայում և Իրաքում ներգրավված ադրբեջանցի իսլամականների շրջանում նկատվեցին փոփոխություններ. ադրբեջանցի իսլամականները հիմնականում համալրեցին ամենաազդեցիկ «Իրաքում և Շամում իսլամական պետություն» (այս կառույցը 2014 թվականի ամռանը վերանվանվեց Իսլամական պետություն) և «Ջարհաբ ալ-Նուսրա» (2016 թվականի հուլիսի 28-ին «Ջարհաբ ալ-Նուսրան» հայտարարեց իր լուծարման և նոր խմբավորման՝ «Ջարհաբ Ֆաթի ալ-Շամի» ձևավորման մասին, իսկ 2017 թվականի հունվարի 28-ին այն վերանվանվեց «Հայա Թահրիր ալ-Շամ») խմբավորումները<sup>26</sup>, որոնց կազմում շարունակեցին մասնակցել Սիրիայում և Իրաքում տեղի ունեցող ռազմական գործողություններին: Այդ կառույցների վերազգային բնույթն ու Մերձավորարևելյան տարածաշրջանից դուրս եկող նկրտումներն ընդգրկեցին նաև Ադրբեջանը, որտեղ ազդեցության տարածման փորձ արվեց այդ կառույցների կողմից<sup>27</sup>: Վերոհիշյալ կառույցները ոչ միայն արմատներ են գցել Ադրբեջանում<sup>28</sup>, այլև դիտարկել են վերջինս որպես տարանցիկ երկիր՝ իսլա-

---

<sup>25</sup> Տե՛ս Росфинмониторинг, 3,5 тыс. россиян направляли деньги террористам, Известия, 20 ноября, 2015, (<http://izvestia.ru/news/596157>, Մուսաբ՝ նոյեմբերի 21, 2015 թ.):

<sup>26</sup> Հիշյալ իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների հեղինակավոր, ազդեցիկ և համընդհանուր բնույթը ստիպել է ադրբեջանցիներին հրաժարվել առանձին էթնիկ խմբավորումներից՝ գործելով վերոհիշյալ կառույցների կողմից:

<sup>27</sup> Հատկանշական է. որ 2014 թվականին մի շարք լրատվական ռեսուրսներում տարածվեց «Իսլամական պետության» քարտեզը, որն ընդգրկում էր նաև Ադրբեջանը (МИБ о провокации иракских ваххабитов против Азербайджана, Haqqin.az, 13 июня 2014 г., <https://haqqin.az/news/24228> (Մուսաբ՝ հունիսի 24, 2015 թ.):)

<sup>28</sup> Տե՛ս В Азербайджане задержаны пятеро азербайджанцев, восставших в Сирии на стороне ИГИЛ, Gordonua.com, 17 октября 2015, <http://gordonua.com/news/worldnews/v-azerbaydzha>

մականների ջիհադական պայքարն աշխարհի այլ հատվածներում շարունակելու համար<sup>29</sup>:

Հիշյալ զարգացումներին գուգահեռ նկատվել է ադրբեջանցի իսլամականների արտահոսք հակառակ ուղղությամբ՝ Իսլամական պետությունից դեպի Թուրքիա, այնուհետև դեպի Ադրբեջան: Դրա հետ կապված՝ առկա է հետևյալ իրողությունը. Իսլամական պետությունը լքում են հիմնականում ռազմական գործողություններին ակտիվություն չդրսևորողներն ու քերացողները, որոնց թվում են նաև ադրբեջանցի որոշ իսլամականներ:

2016 թվականին հետաքրքրական տեղեկություններ հայտնվեցին ՋԼՄ-ներում (այդ թվում՝ հայկական ՋԼՄ-ներում) առ այն, որ Քառօրյա (Ապրիլյան) պատերազմի ժամանակ ադրբեջանական զինուժի կողմից կռվել են Իսլամական պետությունը լքած ադրբեջանցի իսլամականներ: Մի շարք լրատվամիջոցներում շրջանառվում էր այն տեղեկությունը, որ Իսլամական պետության ադրբեջանցի իսլամականների մոտ 60 հոգանոց զորաջոկատը հայտնվել է դարաբաղա-ադրբեջանական շփման գծում: Հիշյալ ադրբեջանցիների մասին առաջին անգամ խոսվեց Հյուսիսկովկասյան տարածաշրջանը ներկայացնող իսլամականների սոցցանցերում բողոքված գրառումներում, որտեղ նշվում էր, որ ադրբեջանցի իսլամականները ցանկացել են կռվել հայերի դեմ և լքել են Սիրիայի ալ-Ռակկա քաղաքը՝ տեղափոխվելով Ղարաբաղ: Այնուհետև այդ տեղեկատվությունը սկսվեց շրջանառվել ռուսական և հայկական որոշ լրատվամիջոցների կողմից<sup>30</sup>: Պատճառը հավանաբար շփման գծից ստացվող զարհուրելի տեսարաններն ու վայրագությունների մասին տեղեկություններն էին (հայ զինվորների զլխատված և կեղեքված մարմինների, տանջամահ արված տարեցների տեսարաններ և այլն):

Վերոհիշյալ տեղեկությունների իսկությունը վիճարկելի է, քանի որ.

nc-zaderzhany-pyatero-azerbaydzhanecv-voevavshih-v-sirii-na-storonc-igil-102506.html (Մուտք՝ ապրիլի 2, 2016 թ.):

<sup>29</sup> Այդ առումով հատկանշական է տարածված այն տեղեկությունը, որ Իսլամական պետությունը փորձում է օգտագործել Ադրբեջանը, Վրաստանը ու Կիպրոսը՝ որպես տարանցիկ ուղիներ՝ Ադրբեջանում և Կովկասում գտնվող իր կողմնակիցներին ուղղորդելու Թուրքիայում, Ադրբեջանում և աշխարհի այլ հատվածներում ահաբեկություններ իրականացնելու համար (ИГИЛ нацелилась на Азербайджан – шокирующее заявление, Minval.az, 7 декабря 2016, <http://minval.az/news/123602599> (Մուտք՝ դեկտեմբերի 14, 2016 թ.):)

<sup>30</sup> Ст'а Азербайджанский отряд ИГИЛ вернулся в Карабах, Regnum.ru, 4 апреля 2016 г., <https://regnum.ru/news/accidents/2111403.html> (Մուտք՝ ապրիլի 28, 2016 թ.):

- Ղարաբաղյան հակամարտությանը իսլամականների ներգրավվելու մասին անմիջապես կտեղեկացնեին Իսլամական պետությանը հարող լրատվամիջոցները, սակայն հիշյալ ՋԼՄ-ներում դարաբաղյան հակամարտությանը Իսլամական պետության ներգրավվածության վերաբերյալ տեղեկությունները բացակայել են:
- Կապված այն հանգամանքի հետ, թե իբր Իսլամական պետության կազմում կռվող ադրբեջանցիների խմբավորման սեփական նախաձեռնությունն է եղել դարաբաղա-ադրբեջանական շփման գծում հայտնվելը, ապա պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ Մերձավոր Արևելքում իրականացվող ջիհադում ներգրավված ադրբեջանցիների համար խնդիրը Սիրիայում և Իրաքում ստեղծված իսլամական խալիֆայության համար պայքարելն է, և ադրբեջանցի իսլամականներն այս փուլում դժվար թե թողնեին Իսլամական պետությունը և միանային դարաբաղյան հակամարտության ռազմական գործողություններին, առավել ևս, որ նման հրահանգ Իսլամական պետության ղեկավար շրջանակից չի եղել:
- Սիրիայում և Իրաքում կռվող ադրբեջանցի իսլամականների էթնիկ պատկանելության մասին եղած տեղեկություններից կարելի է ենթադրել, որ ադրբեջանցիների մեջ մեծ թիվ են կազմում երկրի հյուսիսում բնակվող սուննի լեզգիներն ու ավարները: Վերջիններս դժվար թե ցանկություն ունենային դուրս գալ Իսլամական պետությունից, տեղափոխվել դարաբաղա-ադրբեջանական շփման գիծ և ադրբեջանական զինուժի կողքին մասնակցել հայկական ուժերի դեմ կռիվներին:

Իսլամական պետության» և «Ջաբհաթ ալ-Նուսրա» իսլամական ծայրահեղ արմատական կառույցներին անդամակցելուն գուգահեռ ադրբեջանցի իսլամականները շարունակեցին ներգրավված լինել ընդդիմադիր այլ կառույցների («Չունուդ ալ-Շամ», «Նուր ադ-Դին Չինքի» և այլն) մեջ, որոնց գործողությունների արեալը հիմնականում ընդգրկում են Թուրքիայի հետ սահմանամեծ Սիրիայի հյուսիսարևմտյան տարածքները: Սիրիայի այս հատվածում թուրքոմանական գործոնի առկայությունը հնարավոր է դարձրել թուրքախոս իսլամականներին, այդ թվում՝ ադրբեջանցիներին, ինտեգրել Սիրիայի Լաթակիա, Իդլիբ, Հալեպ և ալ-Ռակկա նահանգներում ակտիվ գործող թյուրքական ծագմամբ ընդդիմադիր կառույց-

ների («Սուլթան Մուրադ», «Սուլթան Սուլեյման Շահ» և այլն) շարքերում և իրականացնել ջիհադական պայքար:

2016-2018 թվականներին ՋԼՄ-ներում դարձյալ հրապարակումներ եղան Սիրիայում ադրբեջանցի իսլամականների ու առաջնորդների վերաբերյալ, որտեղ խոսվել է ադրբեջանցի իսլամականների ակտիվության, այլ էթնիկ խմբավորումների շարքերում (հիմնականում ծագումով նախկին ԽՍՀՄ արեալը ներկայացնող իսլամականներից բաղկացած խմբավորումները) ադրբեջանցի ջիհադականների արդյունավետ ինտեգրվելու և ակտիվ ջիհադական պայքար մղելու մասին: Վերոհիշյալից բացի՝ ադրբեջանցի իսլամականներն իրենց հայրենակիցներին էին դիմում Սիրիայում և Իրաքում իրականացվող ջիհադին միանալու կոչերով: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ Մերձավորարևելյան տարածաշրջանում իրականացվող ջիհադին միանալու վերոհիշյալ կոչերը պայմանավորված էին նրանով, որ հիշյալ ժամանակահատվածում ադրբեջանցիների հոսքը դեպի Սիրիա նվազել էր, և ադրբեջանցի իսլամականները կարիք ունեին համարման, ինչի պատճառները հետևյալն են՝

- Թուրքիան ստիպված էր հնարավորինս վերահսկելի դարձնել Սիրիայի հետ սահմանային հոսքերը, ինչը նախկինում չէր նկատվում: Թուրքիայում հայտնված մի շարք ադրբեջանցիներ, որոնք Սիրիա ներթափանցելու նպատակ էին հետապնդում, ձեռքակալվեցին թուրքական իրավապահ մարմինների կողմից: Վերոհիշյալ միտումը դժվարացնում էր ադրբեջանցի իսլամականների մուտքը դեպի Սիրիա<sup>31</sup>:
- Սիրիայում և Իրաքում գտնվող իսլամական ծայրահեղ արմատական զանազան կառույցների կայանատեղիներին ուղղված կռաւիցիոն օդուժի ավիահարվածներն ու ցամաքային արդյունավետ գործողությունները զսպում են նաև ադրբեջանցի իսլամականների Մերձավոր Արևելք տեղափոխվելու ցանկությունը:

Եթե Սիրիայում և Իրաքում կռվող ադրբեջանցի իսլամականների էթնիկ կազմի մասին հստակ տվյալներ չկան (կարելի է ենթադրել, որ Մերձավոր Արևելքում ակտիվ գործող ադրբեջանցի իսլամականները հիմնա-

<sup>31</sup> Տե՛ս В Турции задержаны граждане Азербайджана, примкнувшие к ИГИЛ, Оху.az, 19 сентября 2016 г., <http://ru.oxu.az/society/149800> (Մուտք՝ նոյեմբերի 2, 2016 թ.):

կանում ներկայացնում են Ադրբեջանի հյուսիսային սուննիաբնակ հատվածը), ապա ադրբեջանցիների թվաքանակի մասին որոշակի տվյալներ առկա են: Մասնավորապես Ադրբեջանի Անվտանգության պետական ծառայության ղեկավար Մադաթ Գուլիևի պնդմամբ 2017 թվականի դրությամբ Ադրբեջանի շուրջ 900 քաղաքացի արդեն իսկ անդամակցել է Սիրիայում և Իրաքում գործող իսլամական ծայրահեղական կառույցներին<sup>32</sup>: Հատկանշական է նաև 2017 թվականի հոկտեմբերին տարածված այն տեղեկատվությունը, որ զգալի թվով ադրբեջանցի իսլամականներ են (300-1600) կանգնեցվել, հաշվառվել և ետ ուղարկվել Ադրբեջան թուրքական իշխանությունների կողմից<sup>33</sup>:

Ադրբեջանցի ծայրահեղ իսլամականների թիվը, մեր կարծիքով, գերազանցում է 1000-ի սահմանը: Հիշյալ պնդման համար հիմք են ծառայում հետևյալ իրողությունները.

1. բազմաթիվ ադրբեջանցի իսլամականներ դեռևս գտնվում են Թուրքիայում և ցանկանում մտնել Սիրիա, բայց չեն կարողանում (այս ադրբեջանցիները, իհարկե, ներառված չեն վերոհիշյալ 900-ի մեջ, քանի որ հավանաբար Թուրքիա են գնացել աշխատանքի կամ զբոսաշրջության պատրվակով):

2. Սիրիայում և Իրաքում գործում են ադրբեջանցի իսլամականներ, որոնք ներգրավված են թուրքական ծագմամբ ընդդիմադիր խմբավորումների շարքերում, և այդ կառույցներն Ադրբեջանի իշխանությունների կողմից չեն դիտարկվում որպես ծայրահեղական կամ ահաբեկչական:

3. Սիրիայում և Իրաքում գտնվում են Ադրբեջանի քաղաքացիներ, որոնք ինքնությունը, գտնվելու վայրը բացահայտված չեն, հետևաբար նրանց գործունեության մասին չէր կարող տեղեկացված լինել Ադրբեջանի պետանվտանգության ծառայությունը:

Ինչ վերաբերում է այն իրողությանը, որ Թուրքիայից զգալի թվով ադրբեջանցի իսլամականներ արդեն ետ են ուղարկվել Ադրբեջան, ապա

<sup>32</sup> Տե՛ս DTX reisi, Azərbaycanın 900-dək vətəndaşı Suriya və İraqda terrorçulara qoşulub, Apa.az, 03 Mart 2017, <http://apa.az/xeber-az/hadise/dtx-reisi-azerbaycanin-900-dek-vetendasi-suriya-ve-iraqda-terrorçulara-qosulub.html>, (Մուտք՝ մարտի 4, 2017 թ.):

<sup>33</sup> Տե՛ս Beyond the Caliphate, Foreign Fighters and the Threat of Returnees, The Soufan Center, October 2017, pp. 11-13, <http://thesoufancenter.org/wp-content/uploads/2017/10/Beyond-the-Caliphate-Foreign-Fighters-and-the-Threat-of-Returnees-TSC-Report-October-2017.pdf> (Մուտք՝ հոկտեմբերի 24, 2017 թ.):

կարելի է փաստել, որ անկախ նրանց հետագա ճակատագրից՝ նրանք վտանգ են ներկայացնում թե՛ Ադրբեջանի ներսում, թե՛ դրա սահմաններից դուրս:

### **Եզրակացություն**

1. Կովկասյան տարածաշրջանում նկատելի են իսլամական ծայրահեղականության դրսևորումներ, որոնք տեսանելի են ինչպես գաղափարախոսական տիրույթում, այնպես էլ առանձին ռազմական գործողությունների տեսքով: Հիշյալ իրողության ետևում կանգնած են ցանցային կառույցներ և ազդեցիկ իսլամական լիդերներ, որոնք աչքի են ընկնում Կովկասյան տարածաշրջանում և այդ տարածաշրջանից դուրս:

2. ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանում նկատվել է իսլամական ծայրահեղ արմատական տրամադրություններով առաջնորդվող կառույցների ակտիվություն: Հատկապես 2000-ական թվականների կեսերից ադրբեջանական ուժային կառույցների բռնաճնշումների և հետապնդումների հետևանքով վերոհիշյալ կառույցներն անցել են ընդհատակ, սակայն վերջիններիս գործառական ակտիվությունը դեռևս պահպանվում է:

3. Ադրբեջանցի իսլամականներն ակտիվ գործել և գործում են նաև Կովկասյան տարածաշրջանում, մասնավորապես Վրաստանում ու Ռուսաստանի կովկասյան տարածքներում:

4. Մերձավոր Արևելքում ընթացող ջիհադական պայքարում ակտիվորեն ներգրավված են Ադրբեջանից սերող իսլամականները: Սիրիայում և Իրաքում կռվող ադրբեջանցի իսլամականների էթնիկ կազմի մասին տեղեկությունները քիչ են: Ըստ ունեցած տեղեկությունների՝ նրանք հիմնականում Ադրբեջանի հյուսիսի՝ լեզգիաբնակ և ավարաբնակ շրջաններից են, որտեղ զգալի թիվ են կազմում սուննիադականները: Ադրբեջանական իրավապահ մարմինների կողմից վերոհիշյալ շրջաններում պարբերաբար անցկացվող ստուգումները, ձերբակալությունները, բռնությունները հատկապես սուննիական արմատական գաղափարներով առաջնորդվողների հանդեպ դավանական հետապնդումներն ու ճնշումները Ադրբեջանում իսլամի արմատական ուղղության և դրա վտանգավորության ցուցիչն են: Սակավաթիվ են Ադրբեջանում ծայրահեղ իսլամականների քանակի, տեղաբաշխումների, առաջնորդների ու էթնիկ պատկանելության մասին տվյալները: Այդուհանդերձ, բազմաթիվ փաստերը (Սիրիայի և Իրաքի ջիհադա-

կան պայքարն անցած իսլամականների վերադարձը Ադրբեջան, ձերբակալությունները և այլն) վկայում են Ադրբեջանում ակտիվ ջիհադական ներուժի մասին:

5. Ադրբեջանական իշխանությունների կողմից իսլամականների հանդեպ շարունակական հետապնդումներն ու ճնշումները նաև նպաստում են Ադրբեջանից դուրս իրականացվող ջիհադական այլ ճակատներում ադրբեջանցի իսլամականների թվաքանակի ավելացմանը: Հիշյալ փաստեց Մերձավոր Արևելքում ադրբեջանցի մեծաքանակ իսլամականների առկայության իրողությունը:

6. Մյուս կողմից՝ թուրք-սիրիական սահմանի վերահսկողության ուժգնացումը (հատկապես սահմանի թուրքական հատվածից) ու իսլամական ծայրահեղ արմատական կառույցներին ուղղված օդային հարվածներն ու ցամաքային արդյունավետ գործողությունները նվազեցնում են աշխարհի այլ հատվածներից, այդ թվում՝ Ադրբեջանից եկող իսլամականների ներհոսքը: Դրա հետ մեկտեղ, առկա տեղեկատվության համաձայն, 2016 թվականին Իսլամական պետությունը փորձեր է ձեռնարկել օգտագործելու Ադրբեջանում գործող իր կողմնակիցներին ահաբեկչական գործողություններ իրականացնելու համար:

7. Առկա են նաև ադրբեջանական քաղաքական և կրոնական գործիչների կողմից իսլամական ծայրահեղ արմատական վտանգավոր միտումները երկրից դուրս ուղղորդելուն միտված քայլերը, որոնք ներառում են ադրբեջանցի իսլամականների ներուժն այլ երկրներում կիրառելու ուղղորդումները (այդ թվում՝ նաև դեպի դարաբաղյան հակամարտություն):

8. Ուղղորդվող ջիհադական ներուժի թիրախում են հայտնվում Մերձավորարևելյան տարածաշրջանում, հատկապես ռազմական գործողությունների թատերաբեմում հայտնված էթնոդավանական փոքրամասնությունները: Թուրք և ադրբեջանցի ծայրահեղ իսլամականներից բաղկացած խմբավորումներն իրենց գործողություններով սպառնալիք են հայկական համայնքների համար. ոտնձգություններ են իրականացնում սիրիահայերին պատկանող պատմամշակութային հուշարձանների հանդեպ (Ջեսսարի հայկական եկեղեցիների ավերումներն ու թալանը, Դեր Ջորի Սրբոց նահատակած եկեղեցու պայթեցումը, ժամանակին ընդդիմադիր ուժերի կողմից վերահսկվող Հալեպի որոշ հատվածներից կառավարական ուժերի

վերահսկողության տակ գտնվող Հալեպի հայաբնակ թաղամասերի ին-տենսիվ ոմբահարումները և այլն):

9. Ռազմական փորձ ձեռք բերած ադրբեջանցի իսլամականների որոշ հատվածի վերադարձը Մերձավորարևելյան տարածաշրջան ազդեցիկ իսլամական ծայրահեղական կառույցների կողմից հետագայում դիտարկվում է որպես միջոց՝ ոչ միայն Կովկասում, այլև հենց Ադրբեջանում ազդեցության տարածման համար: Բացի դրանից՝ Մերձավոր Արևելքում կովող իսլամականները տարբեր թելերով կապված են միմյանց, և այդ կապը կարող է օգտագործվել արդեն աշխարհի տարբեր հատվածներում գտնվող ջիհադականների ուղղորդման համար:

10. Իսլամի ծայրահեղ արմատական ուղղությունը շարունակելու է ակտիվ մնալ Ադրբեջանի Հանրապետությունում: Իշխանությունների կողմից բռնաճնշումների պարագայում շարունակվելու են արմատական դրսևորումները, որից ապահովագրված չէ նաև Ադրբեջանը:

11. Միրիայում կառավարական ուժերին սատարող խմբավորումների կազմում շիա ադրբեջանցիների ներգրավվածության մասին փաստեր ևս կան:

### ***Առաջարկություններ***

***Վերոհիշյալից էլնելով անհրաժեշտ ենք համարում.***

- Միջազգային որոշակի հարթակներում բարձրաձայնել Կովկասյան տարածաշրջանում ակտիվացող իսլամական ծայրահեղ արմատական կառույցներում ադրբեջանցիների ակտիվ մասնակցության իրողությունը:
- Տարբեր ձևաչափի միջազգային երկկողմ և բազմակողմանի հանդիպումներում շեշտադրումներ անել ադրբեջանցի իսլամականների թվաքանակի (մոտ 1500), Մերձավոր և Միջին Արևելքի տարբեր հատվածներում ներգրավվածության մասին: Այդ ցուցանիշներով ադրբեջանցի իսլամականները չեն զիջում մի շարք մուսուլմանական երկրներին:
- Ուշադրություն սևեռել այն հանգամանքի վրա, որ Ադրբեջան են վերադառնում Միրիայի և Իրաքի ջիհադական պայքարն անցած և ռազմական փորձ ձեռք բերած իսլամականներ: Ավելին, վերադառնում են նաև ռազմական փորձ չունեցող, սակայն իսլամական ծայ-

րահեղ արմատական գաղափարներ կրող ադրբեջանցիներ, որոնք որոշակի վտանգ են ներկայացնում ոչ միայն Կովկասյան, այլև Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանների համար: Իսլամականների ծրագրերում առկա է նաև Ադրբեջանի Հանրապետության՝ տարանցիկ երկրի վերածելու սպառնալիքը, որտեղից իսլամականները կարող են ահաբեկչություններ ծրագրել և իրականացնել աշխարհի այլ հատվածներում:

**ՀԱՎԵԼՎԱԾ 1**

2015 թվականի մարտին սպանված զինյալների մասին Իսլամական պետության տարածած փաստաթղթերից է, որը փաստում է, որ ադրբեջանցիներ Աբու Մուհամմադ ալ-Ագերին և Աբու Ահիբ ալ-Ագերին սպանվել են Իրաքի եզդիաբնակ Մինջարում, իսկ Արդ ալ-Ուսահաբ ալ-Ագերին՝ Միրիայի քրդաբնակ Թալ Թամրում:

Имя / Ҳисаб	Эра / Ҳисоб	Ҳисоб / Ҳисоб	Ҳисоб / Ҳисоб	Ҳисоб / Ҳисоб	Ҳисоб / Ҳисоб
Ибраһим КАЗ Желазыак	1	1	08.01.2014	1	1
Абу Шаар Абуама КАЗ	1	1	12.12.2014	2	2
Абу Әли Кабач КАЗ	2	2	16.02.2015	3	3
Абу Убаидул Каримов	1	1	21.12.2014	4	4
Абу Мухаммад Азаров	2	1	16.01.2015	5	5
Абу Саид КАЗ	4	2	27.01.2015	6	6
Абу Хуррада Ханов	1	1	23.02.2015	7	7
Абу Бакар КАЗ	3	1	23.02.2015	8	8
Абу Исраил КАЗ	2	1	23.02.2015	9	9
Абу КАЗ	1	1	23.02.2015	10	10
Абу Бакар Азаров	1	1	23.02.2015	11	11
Абу Султан Туркестани	1	1	23.02.2015	12	12
Абу Хасан КАЗ	1	1	23.02.2015	13	13
Абу Мухаммад (Ташки) Туркестани	2	1	23.02.2015	14	14
Абу Мухаммад	4	1	23.02.2015	15	15
Абу Ахмед Тадрани	2	2	28.02.2015	16	16
Абу Саид КАЗ	1	1	03.03.2015	17	17
Абу Хуррада Малайя	1	1	03.03.2015	18	18
Абу Хуррада аль-Башари	1	1	03.03.2015	19	19
Абу Хасан Тадрани	1	1	03.03.2015	20	20

Имя / Ҳисаб	Эра / Ҳисоб	Ҳисоб / Ҳисоб	Ҳисоб / Ҳисоб	Ҳисоб / Ҳисоб	Ҳисоб / Ҳисоб
Абу Хуррада КАЗ	5	2	05.03.2015	21	21
Абу Хасан (Ташки) Туркестани	4	1	08.03.2015	22	22
Абу Хасан (Тадрани) Туркестани	1	1	07.03.2015	23	23
Абу Мухаммад Туркестани	2	1	08.03.2015	24	24
Абу Хуррада	2	1	08.03.2015	25	25
Абу Хасан	3	1	08.03.2015	26	26
Абу Хасан	3	1	10.03.2015	27	27
Абу Хасан	3	1	14.03.2015	28	28
41 31					
Абу КАЗ	1	1	20.12.2014	1	29
Абу КАЗ	1	1	21.12.2014	2	30
Абу КАЗ	1	1	21.12.2014	3	31
Абу Туркестани	1	1	21.12.2014	4	32
Абу Туркестани	1	1	21.12.2014	5	33
Абу Туркестани	1	1	21.12.2014	6	34
Абу Туркестани	1	1	05.01.2015	7	35
Абу Туркестани	1	1	05.01.2015	8	36
Абу Туркестани	1	1	05.01.2015	9	37
Абу Туркестани	1	1	05.01.2015	10	38
Абу Туркестани	1	1	05.01.2015	11	39
Абу Туркестани	1	1	14.02.2015	12	40
Абу Туркестани	1	1	20.02.2015	13	41
Абу Туркестани	1	1	23.02.2015	14	42
Абу Туркестани	1	1	23.02.2015	15	43
Абу Туркестани	1	1	23.02.2015	16	44
Абу Туркестани	1	1	23.02.2015	17	45
Абу Туркестани	1	1	23.02.2015	18	46
Абу Туркестани	1	1	23.02.2015	19	47
Абу Туркестани	1	1	23.02.2015	20	48
Абу Туркестани	1	1	23.02.2015	21	49
Абу Туркестани	1	1	23.02.2015	22	50

**ԻԹԻԿ ԾՐԱԿՑԻԱՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԻՒՀ ՍՏՉԼԻՍՈՒՄ (ԱԶԱՐԻՆԵՐԻ ԵՎ ՔՐԴԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

(Հեղինակ՝ ԵՊՀ ՀՀԻ հայ-քրդական առնչությունների բաժնի գիտաշխատող Անգելինա Գաբրիելյան)

**Քանախի բառեր:** Իրանի Իսլամական Հանրապետություն, Մեջլիս, ֆրակցիա, ազարիներ, քրդեր

**Ընդհանուր դրույթներ**

Չեկույցի շրջանակներում փորձ է կատարվում քննելու ԻԻՀ Մեջլիսում քաղաքական խմբակցությունների ստեղծման գործընթացը, դրա իրավական հիմունքները և էթնիկ ֆրակցիաների տեղն ու դերը երկրի օրենսդիր մարմնի աշխատանքներում: Որպես օրինակ վերցնել ենք ազարիական և քրդական ֆրակցիաների իրողությունները, դրանց զարգացման գործընթացը և հեռանկարները:

**Խնդրի էությունը**

ԻԻՀ կուսակցական-քաղաքական համակարգն ունի իր որոշակի առանձնահատկությունները: Քաղաքագիտության մեջ ընդունված ավանդական կուսակցությունների փոխարեն ԻԻՀ-ում տեսնում ենք պահպանողական-քաղաքական գաղափարական առանցքի հիման վրա ձևավորված երկու ճամբարներ: Թե՛ մախազահական, թե՛ պառլամենտական ընտրություններին որպես հիմնական երկու ուժեր ներկայանում են առանձին ցուցակներով: Ի տարբերություն մախազահական ընտրությունների, երբ յուրաքանչյուր ճամբարի հիմնական նպատակն է դառնում միասնական թեկնածուի շուրջ հնարավորինս համախմբվելը, պառլամենտական ընտրությունների ժամանակ երկու ճամբարները հրապարակում են իրենց թեկնածուների անունները երկու տարբեր ցուցակների տեսքով: Արդյունքում վերոնշյալ գաղափարական տարանջատման հիման վրա ձևավորված ցուցակներով թեկնածուները մասնակցում են ընտրություններին և դառնալով պատգամավորներ՝ ձևավորում համապատասխան ֆրակցիաներ, որոնք սովորաբար կրում են մախազահական ցուցակների անվանումները:



Հարկ է նշել, որ այս բաժանումը ևս հաճախ ունենում է ձևական, անվանական բնույթ, և դժվար է ուրվագծել սահմանը՝ երկու քաղաքական ճամբարների միջև: Հետևյալ փաստի ապացույցը տեսնում ենք պատգամավորներից շատերի՝ մի քանի ֆրակցիաներին միաժամանակ անդամակցելու իրողության մեջ<sup>1</sup>:

Խորհրդարանի ֆունդամենտալ գաղափարական բաժանման կողքին առկա են նաև այլ հիմքերով միմյանցից զատված խմբեր<sup>2</sup>, որոնք ևս կրում են ֆրակցիա անվանումը: Ուսումնասիրելով ԻԻՀ Մեջլիսի ֆրակցիաների ցուցակները՝ կարող ենք եզրակացնել, որ այդ փոքրաթիվ խմբերը ներկայացնում են սոցիալական զանազան հարցերով զբաղվող աշխատանքային խմբեր, որոնց գործառույթները շատ հաճախ համընկնում են խորհրդարանի աշխատանքներում մեծ դեր և կշիռ ունեցող կոմիտեների գործառույթներին:

ԻԻՀ խորհրդարանի այսպիսի ֆրակցիոն խայտաբղետ պատկերն է հայտ է եկել Մեջլիսում ֆրակցիաների ստեղծման, դրանցում անդամակցության պայմաններն ու պահանջները կարգավորող օրինական ակտի բացակայության արդյունքում: Կարևորում ենք այն իրողությունը, որ «ֆրակցիաներ» հասկացությունը չի հիշատակվում ո՛չ ԻԻՀ սահմանադրու-

<sup>1</sup> Որպես վերոնշյալ իրողության ցայտուն օրինակ կարող ենք ներկայացնել 10-րդ գումարման Մեջլիսում ֆրակցիոն բաժանման պատկերը. տարանջատվեցին Մեջլիսի երեք հիմնական քաղաքական ֆրակցիաները՝ բարեփոխական «Օմիդը», պահպանողական «Վելայաթ» և «Անկախներ»: «Օմիդ» ֆրակցիան ստեղծվեց համանուն ընտրական ցուցակի հիման վրա, սակայն ցուցակի անդամների թվի նկատմամբ զգալի տարբերությամբ: «Օմիդ» ընտրացուցակը պառլամենտում ստացավ 123 մանդատ, սակայն «Օմիդ» ֆրակցիան ուներ արդեն 167 մանդատ (տե՛ս Թաբեշ: 167 հոգի անդամակցեցին Մեջլիսի 10-րդ շրջանի «Օմիդ» ֆրակցիային, Iranian Republic News Agency (IRNA), [http://www.ima.ir/fa/News/82064572/\(07.05.2016\)](http://www.ima.ir/fa/News/82064572/(07.05.2016))), «Վելայաթ» ֆրակցիան, որն էլ իր հերթին ձևավորվել է պառլամենտում 80 տեղ ձեռք բերած պահպանողականների կոալիցիայի ընտրացուցակի հիման վրա, իր պնդումների համաձայն ունի 188 մանդատ (տե՛ս منتخب ۱۸۸ با حضور «فراکسیون ولایت» تشکیل «Վելայաթ» ֆրակցիայի սրեղծումը՝ 188 պարզամտվորի ներկայությամբ, <http://www.chandsanich.ir/News/ShowNews.aspx?Code=14496> (28.05.2016)): Երրորդ քաղաքական ֆրակցիան պաշտոնական թիվ չի ներկայացնում, սակայն առաջին երկու ֆրակցիաների անդամների թվերի հանրագումարը (355) համադրելով ԻԻՀ Մեջլիսի մանդատների ընդհանուր թվի հետ (290)՝ ակնհայտ է դառնում մի պատգամավորի՝ երկու քաղաքական ֆրակցիաներին միաժամանակյա անդամակցման փաստը:

<sup>2</sup> Տվյալ իրողության մասին է վկայում ԻԻՀ տարբեր գումարման խորհրդարանների ֆրակցիաների ցուցակների քննությունը, ինչի արդյունքում ակնհայտ է դառնում, որ դրանք առավելապես նման են տարբեր սոցիալական հարցերով զբաղվող փոքրաթիվ աշխատանքային խմբերի: Տե՛ս <http://www.parliran.ir/majles/fa/Content/cat/3801/8%209>:

թյան<sup>3</sup>, ո՛չ էլ Մեջլիսի ներքին կանոնադրության մեջ<sup>4</sup>: Սա իր հերթին թույլ է տալիս ենթադրել, որ ֆրակցիաները չէին դիտարկվում առաջնային նշանակության միավորներ թե՛ Մեջլիսի գլխավոր հանձնաժողովի, թե՛ պատգամավորների կողմից:

Մեջլիսում ֆրակցիաների տարերային աճն ու զարգացումը 10-րդ գումարման Մեջլիսում ակնհայտ դարձրեց ֆրակցիաների ստեղծման պայմանները կարգավորող համապատասխան կարգի վերաբերյալ հատուկ կանոնագիրք ստեղծելու անհրաժեշտությունը: Ըստ ընթացակարգի՝ դրանք նախապես քննարկվեցին և հաստատվեցին Մեջլիսի գլխավոր հանձնաժողովի կողմից: Հարկ է նշել, որ իրանական աղբյուրներում չլուսաբանվեցին կանոնագրքի շուրջ քննարկումների գործընթացի վերաբերյալ մանրամասներ կամ տեսակետներ: Այդուհանդերձ 2016 թվականի նոյեմբերի սկզբներին իրանական ՁԼՄ-ներում շրջանառվեց Մեջլիսի գլխավոր հանձնաժողովի կողմից տվյալ կանոնագրքի հաստատման մասին տեղեկատվությունը: Կանոնագրքի ամբողջական տեքստը մինչ օրս չի հրապարակվել, սակայն առկա տեղեկատվական արտահոսքի համաձայն<sup>5</sup>՝ Մեջլիսի գլխավոր հանձնաժողովի կողմից հաստատված կանոնագիրքը սահմանում է ֆրակցիաների ստեղծման հիմնական կարգը, որը պետք է հետագայում կցվեր Մեջլիսի ներքին կանոնադրությանը<sup>6</sup>: Կանոնագիրքը հստակորեն տարբերակում է մտցնում Մեջլիսի ֆրակցիաների միջև՝ բաժանելով դրանք երկու հիմնական խմբի՝ քաղաքական և ոլորտային: Մեջլիսի գլխավոր հանձնաժողովի անդամ Ղուլամռեզա Քաթեբի պնդմամբ գործում են որոշակի թվային շեմեր. ոլորտային ֆրակցիայի գրանցման համար անհրաժեշտ է ունենալ 50 պատգամավորի անդամակցություն, իսկ քաղաքականի դեպքում այդ շեմը բարձրացվում է մինչև 100<sup>7</sup>: Սահմանափակվում է նաև պատգամավորների տարբեր ֆրակցիաներին միաժամանակ անդամակցե-

<sup>3</sup> Տե՛ս ԻԻՀ Սահմանադրությունը՝ <http://www.iranonline.com/iran/iran-info/government-constitution-2.html>:

<sup>4</sup> Տե՛ս ԻԻՀ Մեջլիսի ներքին կանոնադրության տեքստը տե՛ս [http://rc.majlis.ir/fa/content/interior\\_rule](http://rc.majlis.ir/fa/content/interior_rule):

<sup>5</sup> Լրագրողների հետ տարաբնույթ հարցազրույցների ընթացքում հիշյալ գործընթացի և փաստաթղթի բովանդակության մասին որոշակի տվյալներ են հաղորդել Մեջլիսի գլխավոր հանձնաժողովի անդամներ Ահմադ Ամիրաբադի Ֆարահանին և Ղուլամռեզա Քաթեբը:

<sup>6</sup> ایننامه نحوه تشکیل فراکسیونهای مجلس به تصویب هیئت رئیسه رسید. *Մեջլիսում ֆրակցիաների սրեղծման կարգի մասին կանոնագիրքը հաստատվեց Մեջլիսի գլխավոր հանձնաժողովի կողմից*, Mashregh News Agency, <https://goo.gl/Q9EC1u> (08.11.2016):

<sup>7</sup> Գիտության նախարարի հանդեպ մեղադրանքը 29 ստորագրությամբ հանձնվեց Մեջլիսի գլխավոր հանձնաժողովին, Mashregh News Agency, <https://goo.gl/tmWR72> (08.11.2016):

լու հնարավորությունը. համաձայն նախագծի՝ յուրաքանչյուր պատգամավոր իրավունք կունենա անդամակցելու միայն մեկ քաղաքական և երկու ոլորտային ֆրակցիաների<sup>8</sup>:

Այս նոր զարգացումները համընկան ԻԻՀ խորհրդարանում որակական նոր երևույթի՝ էթնիկ ֆրակցիայի ստեղծման առաջին հաջող նախադեպի հետ: Մեջլիսի մի խումբ թյուրքախոս պատգամավորներ՝ խորհրդարանի փոխնախագահ Մասուդ Փեզեշքիանի գլխավորությամբ, նախաձեռնեցին «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» ստեղծումը:

### «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» ստեղծման գործընթացը

2016 թվականի հոկտեմբերի 30-ին հայտարարվեց ԻԻՀ Մեջլիսում «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» ստեղծման մասին<sup>9</sup>: Ֆրակցիայի նախագահն է ԻԻՀ Մեջլիսի առաջին փոխնախագահ, Թավրիզի, Օսբուի և Ազարշահրի ներկայացուցիչ Մասուդ Փեզեշքիանը:

Որպես ֆրակցիայի ստեղծման գլխավոր նպատակ ներկայացվում է «թյուրքաբնակ շրջանների զարգացումը և խնդիրների լուծումը»<sup>10</sup>:

Թյուրքախոսների ֆրակցիայի ստեղծմանն ուղղված աշխատանքները սկսել էին Մեջլիսի 10-րդ նստաշրջանի առաջին նիստերից: 2016 թվականի հունիսից ընթանում էին քննարկումներ՝ թյուրքախոս պատգամավորների ֆրակցիայի ստեղծման մասին<sup>11</sup>:

2016 թվականի սեպտեմբերին Մասուդ Փեզեշքիանը հայտարարում է, որ շարունակվում են ֆրակցիայի ստեղծմանը միտված աշխատանքները՝ նշելով, որ ֆրակցիայի ստեղծումը թույլ է տալիս Սահմանադրությունը, և

<sup>8</sup> «*Անին-նամե Նուհե*» Թյուրքաբնակ շրջանների ստեղծման կարգի մասին կանոնադրությունը հաստատվեց Մեջլիսի գլխավոր հանձնաժողովի կողմից, Mashregh News Agency, <https://goo.gl/Q9EC1u> (08.11.2016):

<sup>9</sup> «*Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի*» ստեղծումը՝ Փեզեշքիանի գլխավորությամբ, ISNA, <https://goo.gl/EwAzAN> (30.10.2016):

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>11</sup> Այդ մասին 2016 թվականի հունիսի 9-ին հայտարարեց Թավրիզի, Ազարշահրի և Օսբուի պատգամավոր Ահմադ Ալիոեզա Բեյգին: Ըստ նրա հայտնած տեղեկության՝ աշխատանքներ են տարվում 60 հոգուց բաղկացած «Թյուրքախոս պատգամավորների ֆրակցիայի» (ընդգծումը՝ հեղինակի) ստեղծման ուղղությամբ, և ֆրակցիայի առաջին նիստից հետո արդեն նշմարելի է զգալի առաջընթաց. Ալիոեզա Բեյգին և 4 այլ ներկայացուցիչներ Թեհրանից, Ռուսիայից, Մեջլիսի նախագահի և Խոզդարանից ընտրվել են ֆրակցիայի ժամանակավոր կենտրոնական կոմիտեի անդամներ:

Տե՛ս նաև «*Մեջլիսում 60 անդամով թյուրքախոսների ֆրակցիայի ստեղծումը*», Ocaq.ir News site, <https://goo.gl/rZRZkh> (09.06.2016):

նրանք գործում են օրենքի սահմաններում<sup>12</sup>: Գործընթացի վերջնական էլ արդեն դարձավ հոկտեմբերի վերջին ֆրակցիայի ստեղծման մասին հայտարարությունը<sup>13</sup>:

Փաստորեն՝ ֆրակցիայի ստեղծման առաջին քայլերից հետո ընկած 5 ամիսների ընթացքում (2016 թ. հունիս - հոկտեմբեր) էական փոփոխություններ տեղի ունեցան:

1. **Փոխվեց ֆրակցիայի անվանումը:** Ի սկզբանե նախատեսվող «Թյուրքախոս պատգամավորների ֆրակցիա» անվանումից անցում կատարվեց դեպի «Թյուրքաբնակ շրջանների պատգամավորների ֆրակցիա» անվանմանը<sup>14</sup>: Անվանման փոփոխման արդյունքում ձևավորվում է որոշակի տարածքային արեալ, քարտեզ, ինչն ավելի շոշափելի և ծանրակշիռ է դարձնում խնդիրը<sup>15</sup>: Բացի դրանից՝ քաղաքականացնելով անվանումը՝ ստեղծվում է նաև որոշակի տարածքային նույնականացում (իդենտիֆիկացիա), ինչի արդյունքում ֆրակցիայի կազմում են ներկայանում տվյալ

<sup>12</sup> «*Յիգիր Կասիմ Գրասիմով*», «*Հեղափոխությունը լինում է թյուրքախոս պատգամավորների ֆրակցիայի ստեղծմանը*», Yol Press, <http://yolpress.ir/?p=17581> (14.09.2016):

<sup>13</sup> «*Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի*» ստեղծումը՝ Փեզեշքիանի գլխավորությամբ, ISNA, <https://goo.gl/EwAzAN> (30.10.2016):

<sup>14</sup> Անվանման հենց այս տարբերակի մասին է վկայում ֆրակցիայի ստեղծման համար կազմված հատուկ ֆորմում որպես ֆրակցիայի անվանում նշված ձևակերպումը՝ պարսկերեն՝ «*Ֆրակցիայի անվանման մասին քննարկումներ*», Տե՛ս փաստաթղթի նկարը հղումով՝ <https://goo.gl/g9eUme>:

<sup>15</sup> Ֆրակցիայի անվանման մասնակերպումն անխուսափելիորեն ի հայտ բերեց թե՛ հասարակական տարբեր խմբերի ուշադրությունը, թե՛ զգալի խնդիրներ խորհրդարանում ֆրակցիայի գործունեության համար. ֆրակցիայի քարտուղար Շահաբ Էդ-դին Բիմեղդարը մի քանի անգամ բարձրաձայնել է Մեջլիսի գերագույն խորհրդի՝ ֆրակցիայի անվանումը պաշտոնապես ճանաչելու որոշման բացակայության փաստի մասին: Տե՛ս «*Հեյտ Ռեյսե*»-ի «*Մեջլիսի գերագույն խորհրդի պաշտոնապես չի ճանաչում «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» անվանումը*», <https://goo.gl/rNsEUM> (26.08.2017):

Բիմեղդարի դիրքորոշման մեջ աչքի են ընկնում երկու անկյունաքարային փաստեր. 1. Բիմեղդարը փաստում է, որ ֆրակցիայի անվանման ձևակերպման հարցի շուրջ նա խորհրդակցել է նախագահ Ռուհաննի Էթնիլի խմբերի և ազգային փոքրամասնությունների հարցերի գծով խորհրդական Ալի Յունեսիի հետ, և վերջինս հավանություն տվեց ֆրակցիայի անվանման հետևյալ ձևակերպմանը: Մա ուղղակի վկայում է այն մասին, որ ֆրակցիայի ստեղծումը անակնկալ չէր կառավարության համար, և վերջինս որոշակիորեն վերահսկում էր խմբակցության ստեղծման գործընթացը: 2. Բիմեղդարն անհնար է համարում ֆրակցիայի անվանման որևէ փոփոխություն՝ հիմնավորելով դա նրանով, որ Իրանի թյուրքախոս համայնքի տեղաբաշխվածության առանձնահատկություններից ելնելով՝ նրա խնդիրներին հետամուտ լինելուն միտված ֆրակցիայի համար դա լավագույն անվանումն է: Տե՛ս նույն տեղում:

արեալի սահմաններում գտնվող ոչ թյուրքախոս պատգամավորները: Վերջին փաստի օրինակով կարող ենք առանձնացնել առնվազն երկու դեպք.

- Ասորի պատգամավոր Յոնաթան Բոքթոլիյայի անունն առկա է ֆրակցիայի ստեղծման ձևաթուղթը ստորագրած պատգամավորների ցուցակում (18-րդը):
- Ֆրակցիայի անդամների թվում նշվող Մահմուդ Բահմանին, ըստ ամենայնի, թաթ է, քանի որ ծնվել է Ալբորզի գերագանցապես թաթաբնակ Ֆաշանդ կամ Փաշանդ գյուղում: Նաև նրա ոչ թյուրքախոս լինելու փաստի հավաստիության մասին է խոսում Մեջլիսի «թուրք» անդամների՝ ազարիական կայքերից մեկում բերվող ցուցակում<sup>16</sup> նրա անվան բացակայությունը:

2. **Աճեց ֆրակցիայի անդամների թվաքանակը՝ 60-ից մինչև, ըստ ամենայնի, 100 (ըստ ֆրակցիայի կողմից ներկայացվող թվի):**

3. **Վերաձևավորվեց ֆրակցիայի «կորիզը»:** Մասնավորապես Ալիոնգա Բեյգին չի նշվում ֆրակցիայի կենտրոնական կոմիտեի անդամների թվում, սակայն նրա անունն առկա է ֆրակցիայի անդամների մինչ այժմ ներկայացված ցուցակում<sup>17</sup>:

### **Ֆրակցիայի կազմը**

Ֆրակցիայի տարբեր գործիչներ հակասող տվյալներ են ներկայացնում «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի», թվային տվյալների վերաբերյալ: Որպես ֆրակցիայի պաշտոնական թիվ՝ ֆրակցիայի խոսնակ Չահրա Սային ներկայացնում է 100-ը<sup>18</sup>, իսկ ֆրակցիայի նախագահն ինքը՝ Մասուդ Փեզեքիանը, հերքում է այդ թիվը՝ չնշելով, սակայն, իրականը<sup>19</sup>:

<sup>16</sup> Տե՛ս 72 թուրք պատգամավոր Իրանի պառլամենտում, Yol Press, <http://yolpress.ir/?p=8296> (23.05.2016 թ.)

<sup>17</sup> Ալիոնգա Բեյգին, ինչպես հայտնի է, դեկավարում է Մեջլիսի՝ Թուրքիա, Վրաստան, Բուլղարիա, Շվեդիա և Դանիա երկրների հետ ընկերության խումբը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Մեջլիսի համապատասխան խմբերի հրապարակված ցուցակում չի նշվում Ադրբեյջանի Հանրապետությունը:

<sup>18</sup> «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» , تشکیل فراکسیون مناطق ترک نشین به ریاست پزشکیان , *«Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» ստեղծումը՝ Փեզեքիանի գլխավորությամբ*, ISNA, <https://goo.gl/EwAzAN> (30.10.2016):

<sup>19</sup> پزشکیان: تعداد اعضای فراکسیون 100 نفر نیست , *Փեզեքիան*. «Ֆրակցիայի անդամների քանակը 100 հոգի չէ», Azariha News site, <https://goo.gl/UZVbzZ> (07.11.2016 թ.):

Թյուրքաբնակ շրջանների պատգամավորների մոտավոր թվաքանակի մասին որոշակի պատկերացում կազմելու համար նախևառաջ պետք է առանձնացնել մեծ մասամբ թյուրքախոսներով բնակեցված Արևելյան և Արևմտյան Ազարբայջան, Արդաբիլ, Ջենջան, Համադան, Ղազվին, Մարքազի նահանգները, որոնք ընդհանուր առմամբ Մեջլիսում ունեն 63 մանդատ: Մասամբ թյուրքախոսներով են բնակեցված Սպահանը և Թեհրանը, որոնք Մեջլիսում ներկայացված են համապատասխանաբար 35 և 19 պատգամավորներով<sup>20</sup>: Ազարիական «YolPress» կայքը ներկայացնում է Մեջլիսում տեղ ստացած, այսպես ասած, «թյուրքերի» մի ցուցակ, որում տեղ են գտել 72 պատգամավոր հանրապետության 19 նահանգներից, այդ թվում՝ Խորասանից (Կենտրոնական և Հյուսիսային), Չահարմահալ վա Բախթիարիից, Ֆարսից, Ղոմից, Քահգիլույե վա Բոյերահիմադից, Գուլեսթանից, Գիլանից, Ալբորզից<sup>21</sup>: Թեհրև այս նիշը (72 պատգամավոր) կարող ենք համարել ԻԻՀ Մեջլիսի 10-րդ նստաշրջանում թյուրքախոս պատգամավորների թվաքանակի առավելագույն շեմ, ինչն էլ իր հերթին կասկածի տակ է դնում ֆրակցիայի անդամների թվաքանակի համար բերվող 100 թվի հավաստիությունը:

Որոշակի արհեստականություն է հաղորդում փաստին նաև այն իրողությունը, որ ֆրակցիայի թվաքանակի համար ներկայացվող թիվը (100) լիովին համընկնում է այն թվին, որը, ըստ նախնական տվյալների, պետք է պահանջվեր ֆրակցիաների ստեղծման կարգի վերաբերյալ կանոնագրքով՝ **քաղաքական** ֆրակցիա գրանցելու համար: Այստեղ հարկ է նշել, որ Մեջլիսի գլխավոր հանձնաժողովը, որն էլ անմիջականորեն քննարկում և նախապատրաստում էր կանոնագիրքը, իր կազմում ունի առնվազն երկու պատգամավոր, որոնք «Թյուրքաբնակ պատգամավորների ֆրակցիայի» անդամներ են, ընդ որում՝ նրանցից մեկը հենց ֆրակցիայի նախագահ և Մեջլիսի առաջին փոխնախագահ Մասուդ Փեզեքիանն է, իսկ երկրորդը՝ Ահմադ Ամիրաբադի Ֆարահանին, ով էլ հենց հանդես էր եկել կանոնագրքի վերաբերյալ հայտարարությամբ:

<sup>20</sup> آیا تعداد نمایندگان هر استان منصفانه است؟ , *Արդյո՞ք արդար են քաղաքացիական Մեջլիսի արժույթը՝ ըստ նախնականների*. Serat News Agency, <https://goo.gl/NAvccu> (19.03.2016):

<sup>21</sup> 72 نماینده ترک در مجلس شورای اسلامی دهم+لیست اسامی , 72 թուրք պարզամավոր Իրանի պառլամենտում (+ անունների ցանկ), Yol Press, <http://yolpress.ir/?p=8296> (23.05.2016):

Ֆրակցիայի ամբողջական կազմը՝ անդամների անուններով, դեռևս չի հրապարակվում, սակայն ներկայացվում են ֆրակցիայի կենտրոնական կոմիտեի անդամների անունները՝ Նադեր Ղազիփուր (ֆրակցիայի նախագահի առաջին տեղակալ), Ռեզա Քարիմի (երկրորդ տեղակալ), Մոհամմադ Հասաննեժադ (քարտուղար), Շահաբադդին Բիմեդդարի (քարտուղար), Չահրա Սայի (խոսնակ)<sup>22</sup> և մոտավորապես 40 անդամների անուններ:

Նորաստեղծ քաղաքական խմբավորման առանցքային գործիչների քաղաքական կողմնորոշման մեջ նկատելի են զգալի հակահայկական և ադրբեջանամետ տարրեր, ինչը ցայտուն կերպով դրսևորվեց 2016 թվականի ապրիլի առաջին օրերին՝ Իրանի պառլամենտական ընտրությունների թեժ շրջանում:

Հայ-ադրբեջանական հակամարտության սրացման վերաբերյալ ԻԻՀ-ի ընդհանուր առմամբ զուսպ և չեզոք դիրքորոշման ֆոնի վրա առանձնացնում են ԻԻՀ որոշ պաշտոնյաների (հետագայում՝ Մեջլիսի պատգամավորների և ֆրակցիայի կենտրոնական կոմիտեի անդամների) բացահայտ հակահայկական և ադրբեջանամետ ելույթներն ու կարծիքները:

Ֆրակցիայի նախագահի առաջին տեղակալ Նադեր Ղազիփուրը 2016 թվականի ապրիլյան դեպքերի ժամանակ ադրբեջանական «APA» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում հանդես էր եկել Հայաստանի և հայկական զինած ուժերի նկատմամբ խիստ քննադատությամբ՝ վկայակոչելով, որ «Ղարաբաղը ադրբեջանական հող է, և Հայաստանի զինված ուժերը պետք է հեռանան այդտեղից»<sup>23</sup>:

Ի լրումն դրա՝ ֆրակցիայի մի խումբ անդամներ՝ Նադեր Ղազիփուրը, Չահրա Սային, Շահաբ էդ-դին Բիմեդդարին, երկու այլ թյուրքախոս պատ-

<sup>22</sup> 72 نماینده ترک در مجلس شورای اسلامی دهم+لیست اسامی պատղամենդում (+ անունների ցանկ), Yol Press, <http://yolpress.ir/?p=8296> (23.05.2016):

<sup>23</sup> İran İslam Şurası Meclisinin üzvü: "Ermənistan ordusu Azərbaycan ərazilərini tərk etməlidir", *Ըսր Իրանի Մեջլիսի անդամի՝ «Հայաստանը պիրի հեռանա Ադրբեջանի րարածրից»*, APA News Agency, [http://m.apa.az/az/dagliq\\_qarabag/iran-islam-surasi-meclisinin-uzvu-ermenistan-ordusu-azerbaycan-crazilerini-terk-etmelidir](http://m.apa.az/az/dagliq_qarabag/iran-islam-surasi-meclisinin-uzvu-ermenistan-ordusu-azerbaycan-crazilerini-terk-etmelidir) (04.04.2016): Պետք է նշել, որ այդ հարցազրույցը արտատպվել է մաս ադրբեջանական «Խաղ» թերթում՝ <http://www.xalqazeti.com/az/news/news/69444>, և ներկայացվել է IRNA-ում՝ ԻԻՀ-ի կառավարական լրատվական գործակալության կայքում՝ որպես հայ-ադրբեջանական բախումների վերաբերյալ ադրբեջանական մամուլում տրված տեղեկությունների ամփոփագրի մի մաս, <http://www.irna.ir/fa/News/82022605/> (05.04.2016):

գամավորների՝ Միր Ալի Ալմուսավիի և Աբբաս Աբբասզադեի հետ Ապրիլյան պատերազմի ժամանակ հանդես են եկել կոլեկտիվ մամակով՝ ուղղված ԻԻՀ-ի արտաքին գործերի նախարարությանը՝ պահանջելով «ներդնել ամբողջ ուժերն ու ջանքերը այդ աղետարեր ճգնաժամին և ուրիշների հողն ուժով բռնագավթելուն վերջ տալու համար»: Նամակում մասնավորապես ասվում է. «Մենք՝ որպես Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, վշտով և ցավով լի սրտով, ինչպե՞ս կարող ենք անտարբեր գտնվել այն դառը և աղետաբեր իրադարձությունների նկատմամբ, որոնք կատարվում են մեր հարևանությամբ Ղարաբաղի անիրավ գավթման արդյունքում, և չողջունել Ադրբեջանի Հանրապետության ժողովրդի՝ իր իշխանության իրավունքի պաշտպանությունը»<sup>24</sup>:

Ինչ վերաբերում է ֆրակցիայի նախագահ և Իրանի Մեջլիսի նախագահի առաջին տեղակալ Մասուդ Փեգեշբիանին, ապա վերջինս հրապարակայնորեն համանման հայտարարություններով հանդես չի եկել՝ բավարարվելով միայն դպրոցներում ազարիի դասավանդման պահանջով՝ շեշտելով միաժամանակ նաև քրդերենի դասավանդման պահանջի մասին<sup>25</sup>: Հարկ է նշել, որ էթնիկ փոքրամասնությունների՝ մայրենի լեզվով ուսանելու, մայրենին մեղիայում և մամուլում կիրառելու իրավունքն ամրագրված է ԻԻՀ սահմանադրության 15-րդ կետում<sup>26</sup>:

Չմայած ֆրակցիայի քաղաքական կոչվելու հավակնությանը և անդամների մեծաքանակ լինելուն, ԻԻՀ-ում 2017 թվականի կարևորագույն քաղաքական առիթի՝ մայիսին ԻԻՀ-ում կայացված նախագահական ընտրությունների շեմին ֆրակցիան զերծ մնաց որևէ թեկնածուի սատարելու մասին հայտարարության տարածումից՝ ի տարբերություն Մեջլիսի ավանդական ֆրակցիաների՝ «Օմիդի» և «Վելայաթի», որոնք հայտնեցին իրենց կողմից համապատասխան ճամբարի ներկայացուցչի սատարման մա-

<sup>24</sup> Օմիդ ցուցակում Թավրիզի չորս թեկնածուների նամակը՝ Ղարաբաղի դեպքերի մասին, հրապարակվել է թյուրքախոս պատգամավոր Ալ-Մուսավիի բլոգում, <https://t2m.io/hY-tdvZhY> (04.04.2016):

<sup>25</sup> Դոկտոր Փեգեշբիանի քննադատությունը՝ բորբերենի և քրդերենի դասավանդման բացակայության վերաբերյալ, Tabnak Professional News site, <https://t2m.io/1VLzUHrc> (26.02.2016):

<sup>26</sup> <http://www.iranonline.com/iran/iran-info/government/constitution-2.html>:

սին<sup>27</sup>: Չնայած այս հանգամանքին՝ նախագահական ընտրությունների արդյունքները ցույց տվեցին, որ քյուրդախոսներով բնակեցված նահանգների մեծ մասում ձայների մեծամասնությունը ստացել էր Հասան Ռուհանին<sup>28</sup>:

### **Ֆրակցիայի ուժեղ և թույլ կողմերը**

«Թյուրքարևակ շրջանների ֆրակցիայի» գոյության սկզբնական և որոշիչ փուլում տեսանելի դարձան այդ խմբավորման ուժեղ կողմերն ու դրանց վրա հիմնված հետագա հնարավորությունների հեռանկարը: Դրանք են.

- **Կոնսոլիդացման մեծ պոտենցիալը.** Այս հանգամանքը դրսևորվում է և՛ ֆրակցիայի ստեղծման կազմակերպչական աշխատանքների պլանավորված և սահուն իրականացման, և՛ անուղղակիորեն՝ ֆրակցիայի ձևավորումը Մեջլիսի քյուրդախոս զանգվածի առաջին ձեռքբերման մեջ՝ Մասուդ Փեզեշքիանի ընտրվելը որպես Մեջլիսի փոխնախագահ:

- **Թվաքանակը.** Եթե ֆրակցիայի կողմից ներկայացվող 100 նիշն իրականում հավաստի է, ապա մենք գործ ունենք Մեջլիսի մոտավորապես մեր երրորդը կազմող քաղաքական ուժի հետ, որի ներսում չի գործում ավանդական պահպանողական-բարեփոխական գաղափարական բաժանումը, և ֆրակցիան կարող է որոշումներ կայացնելու գործընթացում ներկայանալ որպես միասնական ճակատ՝ ազդելով տվյալ որոշումների վրա՝ հոգուտ իր ծրագրային մոտեցումների և շահերի:

- **Ֆրակցիայի նախագահի՝ Մեջլիսի փոխնախագահ լինելու հանգամանքը.** Այս փաստը որոշակի հեղինակություն և կշիռ է տալիս ֆրակցիային՝ միաժամանակ ապահովելով Մեջլիսի ղեկավարության ներքին բննարկումներին, որոշումներին և ծրագրերին ծանոթ լինելու առավելությունը:

Միաժամանակ պետք է հաշվի առնել ֆրակցիայի խոցելի կողմերը, ինչը հնարավոր է դարձնում ֆրակցիայի կայացման ճանապարհին մեծ խոչընդոտների ի հայտ գալու հավանականությունը:

<sup>27</sup> مجلسیها در انتخابات ریاستجمهوری از چه کسی حمایت میکنند؟ *Մեջլիսի ներկայացուցիչները նախագահի ընկրություններում ո՞ւմ են սպասարում*, <https://goo.gl/GTrLDT> (26.04.2017):

<sup>28</sup> Sina քարտեզը՝ <http://www.bbc.com/persian/iran-features-40012330>

- **Բացասական վերաբերմունքը և ընկալումը էթնիկ ֆրակցիայի երևույթի նկատմամբ.** Ֆրակցիայի ստեղծումը գրավեց հասարակության որոշակի շերտերի ուշադրությունը տվյալ երևույթի նկատմամբ, հնչեցին կառուցողական և ոչ կառուցողական մի շարք բննադատություններ, կարծիքներ, մտավախություններ՝ ԻԻՀ խորհրդարանում մնանօրինակ զարգացման և դրա հետևանքների հետ կապված: Կարծում ենք՝ ԻԻՀ-ի էթնիկ ոչ միատարր պատկերի իրողության պայմաններում խմբավորման հետագա գործունեությունը ևս շարունակելու է գտնվել ԻԻՀ որոշակի շրջանակների ուշադրության կենտրոնում, ինչն անխուսափելի է դարձնում հետագա, առավել լայնամասշտաբ անհանգստությունների ի հայտ գալը և հիշյալ զարգացումների նկատմամբ բացասական դիրքորոշում ունեցող ուժերի կոնսոլիդացումը:

- **Երկրում առկա պանքյուրքական հոսանքների գոյության փաստը.** ԻԻՀ-ում ակտիվորեն գործում են պանքյուրքական կազմակերպություններ և խմբավորումներ, որոնք հովանավորվում են դրսից, և ԻԻՀ-ի հյուսիսային նահանգների հետ առնչվող զարգացումներին մեծ ուշադրությամբ հետևում են Ադրբեջանի Հանրապետությունում: Դիտարկվող ֆրակցիայի հետագա գործունեությունը կարող է շահարկման թեմա դառնալ վերոնշյալ շրջանակներում, ինչը սպառնում է հեղինակազրկել քաղաքական խմբավորումը. միտում, որն անխուսափելիորեն կարող է փոխել ֆրակցիայի օրակարգը՝ ստիպելով թե՛ ֆրակցիային, թե՛ պետական կառույցներին որոշակիորեն արձագանքել մնանատիպ ազդակներին: Ֆրակցիայի և այդ շրջանակների միջև կապի առկայության կամ բացակայության փաստը հանրության բացասական ընկալման պայմաններում կունենա երկրորդական նշանակություն, և տվյալ համաշարում ֆրակցիայի շուրջ ստեղծված բննարկումները որոշակիորեն կազդեն ֆրակցիայի հեղինակության վրա: Այս հարցում ֆրակցիայի համար վտանգ են ներկայանում ֆրակցիայի որոշ անդամների անհավասարակշիռ և խմբավորման ներկայացրած ծրագրի, գաղափարների սահմաններից ակնհայտորեն դուրս եկող ելույթները<sup>29</sup>, որոնք

<sup>29</sup> Մասնավորապես Մեջլիսի 2017 թ. փետրվարի 15-ի նիստի ժամանակ ֆրակցիայի անդամ, Ուրմիայի շրջանի պատգամավոր Հադի Բահադորին խորհրդարանում իր ելույթի վերջում արտասանել է Ադրբեջանի Հանրապետությունում մեծ հոչակ ունեցող Մամադ Վյուդունի «Ադրբեջան» հայրենասիրական բանաստեղծությունը, ինչն անմիջապես ար-

զգալիորեն ստվերում են ֆրակցիայի ներկայացրած ծրագրերի հավաստիությունը՝ որոշակիորեն կասկածի տակ դնելով դրա նպաստակների և հետագա գործունեության կանխատեսելիության և վերահսկելիության հարցը:

- **Միայն մեկ քաղաքական ֆրակցիայի անդամակցելու սահմանափակման իրողությունը.** Այս դեպքում ֆրակցիայի անդամների մեծ մասը առավել հեռատեսորեն կմոտենա և գուցե կվերանայի «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» անդամակցության հարցը, և դա կարող է զգալիորեն ազդել ֆրակցիայի թվաքանակի վրա՝ զրկելով ֆրակցիային «քաղաքական ֆրակցիա» կոչվելու հանգամանքից, ինչը, դատելով ֆրակցիայի անդամների թիվ ներկայացվող «100» թվից, կարևոր կետ է ֆրակցիայի օրակարգում:

Այսպիսով՝ ամփոփելով վերոնշյալը՝ հանգում ենք հետևյալ առանցքային եզրակացություններին.

- ԻԻՀ-ի Մեջլիսում ներկայումս ընթանում են ներքին խմորումները, որոնք, դատելով վերոնշյալ տեսանելի ու աննախադեպ զարգացումներից, ծավալվող քննարկումների և ծրագրերի մասշտաբներից (առաջին էքնիկ ֆրակցիայի ստեղծման հաջող փորձ՝ Մեջլիսի փոխնախագահի ղեկավարությամբ և առնվազն խորհրդարանի մեկ քառորդը կազմող թվաքանակի անդամակցությամբ, ֆրակցիաների ստեղծման կարգի մասին կանոնադրի ստեղծման նախատեսում), անկասկած, կարող են կրել հիմնարար և արմատական բնույթ:

- «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» ստեղծումը տվյալ զարգացումներում և գործընթացներում ունի բավականին կարևոր նշանակություն, քանի որ փաստացիորեն իրենց հիմքում ավանդական պահպանողական-բարեփոխական բաժանումն ունեցող «Վելայաթ» և «Օմիդ» ֆրակցիաների կողքին հիմնվեց և կայացման փուլում է «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիան», որի հիմքում, չնայած ֆրակցիայի անդամների հավաստիացումներին, ընկած է էքնիկ պատկանելությունը: Դրանով ԻԻՀ-ի Մեջլիսի թյուրքախոս պատգամավորներն անուղղակիորեն հայտարար-

ձագանք գտավ Ադրբեջանի լրատվական կայքերում: Տեսաձայնագրությունը տես <https://goo.gl/SdtHGw>:

րում են, որ 10-րդ Մեջլիսում մտադիր են ծավալել հստակ ուղղվածություն ունեցող լուրջ գործունեություն:

- Ֆրակցիայի անդամների համար ներկայացվող թիվը և դրա համընկնումը քաղաքական ֆրակցիա ստեղծելու համար պահանջվող շեմին թույլ են տալիս ենթադրել, որ այդ գործունեությունն ունենալու է նաև քաղաքական բնույթ, և ֆրակցիան հավակնում է դեր ունենալ նաև երկրի քաղաքական գործընթացներում:

- Մեջլիսի առաջին փոխնախագահի ղեկավարությամբ առնվազն 100 հոգանոց ֆրակցիան պատգամավորի միայն մեկ ֆրակցիայի անդամակցության կետի հաստատման դեպքում կարող է լուրջ մրցակցություն դառնալ Մեջլիսի երեք հիմնական ֆրակցիաներին և, անկասկած, մեծ կշիռ ունենալ Մեջլիսի ամբողջ օրենսդրական գործունեության մեջ:

- Միաժամանակ միայն մեկ ֆրակցիայի անդամակցության սահմանափակման իրողությունը կարող է նաև խոցելի դարձնել Մեջլիսի տվյալ ֆրակցիայի գոյությունը, քանի որ դրա ոչ թյուրքախոս և ոչ ռադիկալ անդամների առաջ անուղղակիորեն կղրվի անդամակցության համար առավել շահավետ և հեռանկարային քաղաքական խմբակցություն ընտրելու հարցը, ինչն էլ անխուսափելիորեն կանդրադառնա ֆրակցիայի անդամների թվաքանակի վրա:

- Անգամ ֆրակցիայի պաշտոնապես չհաստատվելու դեպքում անհերքելի է այն հանգամանքը, որ Մեջլիսում արդեն առկա է թյուրքախոսների զգալի թիվ կազմող մի խումբ, որը մարտահրավեր է նետում «ավանդական» պահպանողական-բարեփոխական բաժանմանը (չնայած ֆրակցիայում առկա են և՛ բարեփոխական, և՛ պահպանողական թևի պատգամավորներ), հետևաբար ավելի միասնական ճամբար է և 290 անդամ ունեցող Մեջլիսում ունի որոշումների վրա ազդելու և նոր որոշումներ առաջադրելու մեծ պոտենցիալ:

- Կարևորում ենք նաև էքնիկ խմբերի և ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող խորհրդականի պաշտոնի ստեղծումը և գործարկումը Հասան Ռուհանիի կառավարման 1-ին շրջանում և դրա շարունակությունը նախագահության 2-րդ շրջանում՝ առանց հիշյալ պաշտոնը զբաղեցնող անձի փոփոխության (Ալի Յունեսի): Կարող ենք ենթադրել, որ Ռուհանիի նախընտրական ծրագրում հատուկ տեղ է հատկացված Իրանի էքնիկ խոցելիության խնդրի ուսումնասիրմանն ու այդ ոլորտում որոշակի

փոփոխություններ և բարենորոգումներ իրականացնելու հարցին: Հետևաբար համանման ֆրակցիան ևս պետք է դիտարկել Ռուհանիի էքնիկ քաղաքականության համատեքստում, ինչն էլ վերահսկողության խիստ սահմաններ է ենթադրում խմբակցության հետագա գործունեության համար:

### **Քրդական ֆրակցիայի ստեղծման փորձերն ու հեռանկարները**

Ի տարբերություն ԻԻՀ Մեջլիսի թյուրքախոս պատգամավորների, որոնք ֆրակցիայի կազմում միավորվելու որոշում կայացրել են 10-րդ գումարման Մեջլիսում, քուրդ պատգամավորները դեռևս 6-րդ նստաշրջանում (2000-2004 թթ.) հանդես էին եկել քուրդ պատգամավորների ֆրակցիա ստեղծելու նախաձեռնությամբ: Հիշյալ նախաձեռնության հիմքում էին կանգնած Բահաեդդին Ադաբը<sup>30</sup> և Ջալալ Ջալալի Ջադեն<sup>31</sup>: Չնայած այդ տարիների Իրանում քարեփոխական նախագահ Խաթամիի նախաձեռնությամբ հաստատված համեմատաբար ազատ քաղաքական մթնոլորտին՝ ֆրակցիայի նախաձեռնողները խմբավորման ստեղծման և կայացման աշխատանքներում չկարողացան ներդնել բարձր արդյունավետություն ունեցող և հեռանկարային ծրագրեր՝ սահմանափակվելով ընդամենը քրդերենի դասավանդման որոշ տարերային ծրագրերի իրականացմամբ<sup>32</sup>:

Ֆրակցիայի աշխատանքները 7-րդ նստաշրջանի Մեջլիսում աստիճանաբար մարեցին: Սրա պատճառը, թերևս, այն էր, որ քրդական ֆրակցիայի ստեղծման գաղափարի երկու հիմնադիրները՝ Ադաբը և Ջալալի Ջադեն, չկարողացան ընդգրկվել խորհրդարանի նոր կազմի մեջ: Սակայն նվազ կարևոր չէ նաև Մեջլիսում քրդերի խիստ սահմանափակ և սակավ լի-

<sup>30</sup> Բահաեդդին Ադաբը քուրդ քաղաքական գործիչ էր: 6-րդ գումարման Մեջլիսում ընտրվել է որպես պատգամավոր Մանանդաջ, Քամյարան և Դիվանդարբեհ շրջաններից: 7-րդ գումարման Մեջլիսի ընտրություններին մասնակցությանը չբույլատրվեց Պահապանների խորհրդի կողմից: 2006 թվականին հիմնել է Քրդական միասնական ճակատ քաղաքական կազմակերպությունը, որի առաջամարտիկներից է Լեյլե մինչև իր մահը՝ 2007 թվականը:

<sup>31</sup> Ջալալ Ջալալի Ջադեն ևս քուրդ քաղաքական գործիչ է ԻԻՀ 6-րդ գումարման Մեջլիսի պատգամավոր է՝ Մանանդաջ, Քամյարան և Դիվանդարբեհ շրջաններից: 2005 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ իր ունեցած կույրի համար մեկ տարով ձեռք բերվել է ԻԻՀ-ի դեմ քարոզչական գործունեության մեղադրանքով: 2016 թվականին մասնակցել է ԻԻՀ խորհրդարանական ընտրություններին (Տևս՝ جلال جلالی زاده کاندیدای مجلس دهم، 2015.12.21), սակայն չի կարողացել հավաքել անհրաժեշտ քվե՝ խորհրդարան անցնելու համար:

<sup>32</sup> «ايران، مجلس و فراکسیون نمایندگان کرد»، Radio Farda, <http://www.radiofarda.com/a/b11-viewpoints-iran-majlis-and-kurdish-representatives-fraction/28129367.html> (20.11.2016 p.):

նելու հանգամանքը, ինչը անհեռանկարային էր դարձնում Մեջլիսում քուրդ պատգամավորների ֆրակցիա ստեղծելու և դրա միջոցով որոշակի գործունեություն ծավալելու տեսլականը՝ նպաստելով քուրդ սակավաթիվ պատգամավորների՝ այլ ֆրակցիաները նախընտրելու հեռանկարին:

Քրդական ֆրակցիա ստեղծելու առաջին փորձը, ֆրակցիայի գաղափարի ջատագովների հետագա ճակատագիրն ու գործունեությունը վկայում են, որ վերջիններս ունեին որոշակի ընդդիմադիր դիրքորոշում, ինչի արդյունքում Մեջլիսում ստեղծվելիք քրդական ֆրակցիան դիտարկվում էր քրդական շարժման կոնտեքստում և հավակնում դառնալ ԻԻՀ օրենսդիր իշխանության մեջ քրդական ազդեցիկ ուժ: Հարկ է նշել, որ Ջալալի Ջադեն 6-րդ Մեջլիսում, ի լրումն քրդական ֆրակցիայի կայացման, ձգտում էր նաև իր ներկայությունն ապահովել Մեջլիսի գերագույն խորհրդում: Նրան հաջողվեց դառնալ Գերագույն խորհրդի ժամանակավոր կազմի անդամներից մեկը, սակայն խորհրդի մշտական կազմի ընտրությունների ժամանակ նա չկարողացավ նույն հաջողությանը հասնել<sup>33</sup>: Սա գալիս է փաստելու, որ քրդական ֆրակցիայի ստեղծման գործընթացի համար մեկնարկ համարվող այս փուլում քրդական ֆրակցիան ուներ առավել արմատական, իշխանությունների նկատմամբ ոչ լոյալ և քրդամետ դիրքորոշում<sup>34</sup>, որն ար-

<sup>33</sup> «ایران، مجلس و فراکسیون نمایندگان کرد»، Radio Farda, <http://www.radiofarda.com/a/b11-viewpoints-iran-majlis-and-kurdish-representatives-fraction/28129367.html> (20.11.2016 p.):

<sup>34</sup> Օրենսդիր մարմնում ներկայացված քուրդ պատգամավորների՝ իշխանության, քրդական շարժման և քրդական դիսկուրսի նկատմամբ ունեցած դիրքորոշման կրած փոփոխությունը, որը նաև կարող ենք համարել քաղաքական որևէ նախաձեռնության բացակայության և քրդական համայնք - քուրդ պատգամավորներ կապի վերացման պատճառներից մեկը, առավել ակնհայտ է դառնում տարածաշրջանային քրդական զարգացումների նկատմամբ այդ պատգամավորների ներկայիս պաշտոնական դիրքորոշման հետ համեմատության մեջ: Եվ այդ փոփոխության ցայտուն օրինակ է 2017 թվականի սեպտեմբերին ՔՌԿ-ում տեղի ունեցած անկախության հանրաքվեի վերաբերյալ քուրդ լայն զանգվածների և ԻԻՀ Մեջլիսում քուրդ պատգամավորների արձագանքների հակադրությունը: Իրաքի հետ սահմանամերձ բնակավայրերում քրդերը մասսայական մեծաթիվ ցույցեր և այլ միջոցառումներ էին կազմակերպում՝ պաշտպանելով հանրաքվեի գաղափարն ու դրա արդյունքները (տես՝ Iran's Kurds are growing restless, too, <https://www.economist.com/middle-east-and-africa/2017/09/30/irans-kurds-are-growing-restless-too>), մինչդեռ ԻԻՀ խորհրդարանի քրդերը հանդես եկան հայտարարությամբ, որում խստորեն քննադատում են Իրաքից քրդաբնակ շրջանների անկախացման գաղափարը՝ պաշտպանելով Իրաքի տարածքային ամբողջականության սկզբունքը (واکتن نمایندگان کرد مجلس به همه پرسى اقليم کردستان), «Մեջլիսի քուրդ պատգամավորների արշազանքը՝ Քրդարանի հանրաքվեի վերաբերյալ», <https://goo.gl/o9a7Ud> (24.09.2017 p.):

տահայտվեց համեստ և ոչ հեռանկարային գործունեությամբ, սակայն անմիջապես իր վրա հառեց իշխանությունների ուշադրությունը, և ֆրակցիայի գաղափարի հետագա զարգացումը կասեցվեց՝ գաղափարի առաջամարտիկներին երկրի օրենսդիր մարմին մտնելու հնարավորությունից զրկելու եղանակով:

Քրդական ֆրակցիա ստեղծելու մասին ակտիվ քննարկումներն առաջին անհաջող փորձից հետո առժամանակ դադարեցին և վերստին սկսեցին շրջանառվել 10-րդ գումարման Մեջլիսում՝ 2016 թվականի մայիսին, երբ Սանանդաջ, Դիվանդարբե և Քամյարան շահրեսթանների ներկայացուցիչը Մեջլիսում՝ Մեյեդ Ահսան Ալավին, հայտարարեց, որ Քորդեսթան նահանգի բնակիչների խնդիրներին հետամուտ լինելու և դրանք լուծելու համար նպատակահարմար է գտնում Մեջլիսում քրդերի ֆրակցիայի ստեղծումը<sup>35</sup>: Այս գաղափարը, սակայն, չունեցավ լայն արձագանք, և դրան չհաջորդեցին ծրագրի իրականացմանը միտված գործնական լուրջ քայլեր:

Հարկ է նշել, որ արդեն 2016 թվականի հունիսին հայտնի դարձավ Քորդեսթան նահանգի բոլոր 6 պատգամավորների՝ Մեջլիսի 4 կոմիտեներին անդամակցության մասին<sup>36</sup>, ինչն աննախադեպ երևույթ է քրդական զարգացումների համատեքստում: Նշված 6 պատգամավորներից երկուսը դարձան պլանավորման, բյուջեի և ֆինանսավորման, իսկ մնացած երեքը՝ բարեկարգման, երկրագործության և տնտեսության կոմիտեների անդամներ<sup>37</sup>:

Հետագայում ֆրակցիայի ստեղծման դիսկուրսը ստանում է իներցիոն և ձևական բնույթ:

Մեջլիսի աշխատանքներում մեծ դեր և կշիռ ունեցող կոմիտեներում ներկայացվածությունը զգալիորեն շեղեց քուրդ պատգամավորների ուշադրությունը ֆրակցիա ստեղծելու գաղափարից:

Կարևոր գործոն է նաև Մեջլիսի քուրդ պատգամավորների շրջանում միասնական քրդական ֆրակցիայի ստեղծման նպատակահարմարության գաղափարի բացակայությունը:

Քրդական ֆրակցիայի ստեղծման մասին քննարկումները վերստին ակտիվացան «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» ստեղծումից կարճ ժամանակ անց: Բորանի շրջանի քուրդ պատգամավոր Մոհամմադ Ղասիմ Օսմանին 2016 թվականին նոյեմբերին հայտարարեց, որ «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» կայացման դեպքում քրդերը ևս կնախաձեռնեն համանման ֆրակցիայի ստեղծումը<sup>38</sup>: Պետք է նշել, որ կարծես թե, «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» անդամները ևս արտաքուստ միտված են աջակցելու քրդական ֆրակցիայի ստեղծմանը: Այդ մասին է վկայում ֆրակցիայի անդամ Հեմայուն Հաշեմիի հայտարարությունն առ այն, որ քրդական ֆրակցիայի ստեղծման դեպքում թյուրքախոսների ֆրակցիան կաջակցի քրդերին<sup>39</sup>:

Վերոհիշյալ հայտարարություններին դարձյալ չհաջորդեցին գործնական քայլերը, ինչի արդյունքում ԻԻՀ Մեջլիսում քրդերը համախմբված չեն սեփական ֆրակցիայի շրջանակներում և փաստացիորեն բաժանված են մի քանի ֆրակցիաների միջև: Քուրդ պատգամավորները գերազանցապես ներկայացված են Չագրոսաբնակ շրջանների և սուննիների ֆրակցիաներում:

Չագրոսաբնակ շրջանների ֆրակցիան իր գոյության մասին հայտարարեց դեռևս 9-րդ գումարման Մեջլիսում՝ 2014 թվականին<sup>40</sup>: Ֆրակցիայի նախագահը Գաչսարան և Բաշթ շրջանների պատգամավոր Ղուլամնեզա Թաջգյարդունն է: 9-րդ Մեջլիսում ֆրակցիային անդամակցում էին 75 պատգամավոր Իրանի արևմտյան նահանգներից, այդ թվում՝ նաև քրդա-

<sup>35</sup> تشکیل فراکسیون نمایندگان کرد مجلس دهم، 10-րդ Մեջլիսի քուրդ պատգամավորների ֆրակցիայի ստեղծումը, Mehr News Agency, <https://goo.gl/69OUc1>, (03.05.2016):

<sup>36</sup> نمایندگان کردستان به کدام کمیسیون ها رفتند؟ حضور بی سابقه در کمیسیون برنامه و بودجه، *Քրդարանի պարզամասվորների և ֆինանսավորման կոմիտեի անդամները գնացին. Քրդերի աննախադեպ ներկայությունը պլանավորման, բյուջեի և ֆինանսավորման կոմիտեի անդամներում*, Entekhab.ir Professional News site, <https://goo.gl/CmDVnH> (15.06.2016):

<sup>37</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>38</sup> واکنش نماینده بوکان به تشکیل فراکسیون مناطق آذری نشین، *Բորանի շրջանի պատգամավորի արշազանքը ազարիսաբնակ շրջանների ֆրակցիայի ստեղծմանը*, Kurdpress, <https://goo.gl/OPKjVz> (30.10.2016):

<sup>39</sup> در صورت تشکیل فراکسیون کرد زبان ها از آن حمایت می‌کنیم، *Քրդախոսների ֆրակցիայի ստեղծման դեպքում կաջակցենք նրան*, ISNA, <http://kordestan.isna.ir/Default.aspx?NSID=5&SSLID=4-6&NID=25304> (12.11.2016):

<sup>40</sup> نماینده گچساران و باشت رئیس فراکسیون زاگرس نشینان مجلس شد، *Քրդախոսների և Բաշթի պատգամավորը դարձավ Մեջլիսի «Չագրոսաբնակների ֆրակցիայի» նախագահը*, ILNA, <https://goo.gl/ts63yz> (23.07.2013):



բնակ Արևմտյան Ազարբայջանից, Քորդեսթանից, Քերմանշահից, Իլամից<sup>41</sup>:

Ֆրակցիան իր գոյությունը վերահաստատեց նաև 10-րդ գումարման Մեջլիսում՝ նույն ղեկավարությամբ: 2016 թվականի ապրիլին տեղի ունեցավ «Չագրոսաբնակների ֆրակցիայի» առաջին նիստը, որին ներկա էր 80 պատգամավոր<sup>42</sup>:

Պետք է նշել, որ ֆրակցիան, ըստ ամենայնի, սերտ կապի մեջ է ԻԻՀ նախագահ Ռուհանիի և նրա կառավարության հետ: Մասնավորապես, 2014 թվականի ֆրակցիայի նիստերից մեկին ներկա էր Ռուհանիի խորհրդական Մոհամմադ Բադեր Նոբախթը<sup>43</sup>, ով զբաղեցնում է Պլանավորման և բյուջեի կազմակերպության նախագահի և կառավարության խոսնակի պաշտոնը: Սա փաստում է այն իրողությունը, որ ֆրակցիան բավական լոյալ վերաբերմունք և դիրքորոշում ունենալով կառուցողական համագործակցության ծրագրեր: Բացի այդ՝ ֆրակցիան բացահայտորեն կերպով հայտնում էր Ռուհանիի հետ հանդիպելու իր ծրագրերի մասին, որի կայանալու և արդյունքների մասին ֆրակցիայի անդամների կողմից հայտարարություններ չեն արվել, սակայն ֆրակցիայի կողմից առկա նախաձեռնությունն ինքնին խոսում է այս խմբավորման իշխանամետ քաղաքական ուղղվածության մասին:

Չագրոսաբնակ շրջանների ֆրակցիային քուրդ պատգամավորների անդամակցությունն ունի ձևական և անվանական բնույթ, ինչն ակնհայտ է դառնում քրդական աղբյուրներում ֆրակցիայի և քրդական խնդիրների լուծման հարցում ֆրակցիայի քուրդ պատգամավորների ոչ հետևողական դիրքորոշման և գործունեության նկատմամբ արտահայտած բողոքից<sup>44</sup>:

<sup>41</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>42</sup> «Չագրոսաբնակների ֆրակցիան» ստեղծվեց 10-րդ Մեջլիսում՝ 80 անդամով, Tasnim News, <https://goo.gl/buQXi3> (11.05.2014):

<sup>43</sup> «Չագրոսաբնակների ֆրակցիայի» նիստը նախագահի խորհրդականի ներկայությամբ, <https://goo.gl/j4msQq> (10.05.2014):

<sup>44</sup> «Չագրոսաբնակների ֆրակցիայի» ստեղծման փոխարեն հեղափոխության եղանակով շրջանների խնդիրներին, Kurdtoday.ir, <https://goo.gl/JXDWLN> (18.09.2016):

Ըստ Բոքանի քուրդ պատգամավոր Մոհամմադ Ղասիմ Օսմանի՝ քուրդ պատգամավորները քրդական որոշ խնդիրների հետամուտ են լինում նաև սուննիների ֆրակցիայի աշխատանքների շրջանակներում<sup>45</sup>:

ԻԻՀ Մեջլիսում քրդական ֆրակցիայի ստեղծման հավանականությունը և դրա կայացման հնարավորությունները գնահատելիս պետք է հաշվի առնել ներքոհիշյալ գործոնները, որոնք զգալիորեն ազդում են ֆրակցիայի ստեղծման հեռանկարների վրա:

• **Պատմական փորձը** - Ի տարբերություն «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի»՝ քրդական ֆրակցիան՝ որպես քաղաքական երևույթ, նորույթ չէ և ունի որոշակի պատմական փորձ: Այդ փորձի անհաջող բնույթը ի վերջո հանգեցրել է «քրդական ֆրակցիա - քրդական խնդիրների լուծում» շղթայի գիտակցման վերացմանը և առաջ է բերել հիասթափություն քրդական ֆրակցիայի ստեղծման, կայացման և հետագա արդյունավետ գործունեության գաղափարի նկատմամբ: Ուստի ֆրակցիան ունի նվազ հնարավորություն քրդերի շրջանում աջակցություն ձեռք բերելու գործում: Որպես քրդերի շրջանում օրենսդիր մարմնում ներկայացված քուրդ պատգամավորների և նրանց կողմից ֆրակցիա ստեղծելու գաղափարի նկատմամբ ձևավորված թերահավատության պատճառ կարող ենք ներկայացնել վերևում մեր կողմից ներկայացված այն հանգամանքը, որ խորհրդարանում ներկայացված քուրդ պատգամավորներն ունեն առավել կենտրոնամետ և իշխանության ու նրա ներքին և արտաքին քաղաքականության նկատմամբ լոյալ դիրքորոշում, ինչը երբեմն խստորեն հակադրվում է քուրդ լայն զանգվածների տեսակետներին:

• **Թվաքանակը** – Այս կամ այն չափով քրդաբնակ օսթաններն Իրանում՝ Քորդեսթան, Քերմանշահ, Հյուսիսային Խորասան, Իլամ և Արևմտյան Ազարբայջան, Մեջլիսում ունեն ընդամենը 33 ներկայացուցիչ: Ֆրակցիաների ստեղծման համար նախնական նվազագույն շեմի՝ 50-ի հաստատման դեպքում ֆրակցիան զրկվում է ստեղծվելու հնարավորությունից: Ի լրումն դրա՝ 290 պատգամավոր ունեցող Մեջլիսում 33-ը թիվը նվազ է ներկայանում՝ որոշումների վրա ազդելու, նոր քննարկումներ օրակարգ բերելու համար: Պետք է հաշվի առնել նաև, որ եթե ընդունվի և հաս-

<sup>45</sup> واكتش نماینده بوکان به تشکیل فراکسیون مناطق آذری نشین , *Բոքանի շրջանի պատգամավորի արշազանը ազարիսթանի շրջանների ֆրակցիայի ստեղծմանը*, Kurdpress, <https://goo.gl/OPKjVz> (30.10.2016):

տատվի ֆրակցիաների ստեղծման նոր կանոնագիրքը, ապա դրա հիմնական դրույթներից մեկը՝ կապված ֆրակցիաների անդամակցության սահմանափակման հետ, քուրդ սակավաթիվ պատգամավորներին կկանգնեցնի բարդ ընտրության առաջ՝ հրաժարվելու արդեն իսկ կայացած ֆրակցիաների անդամակցությունից (դրանցից բխող բոլոր հետևանքներով հանդերձ)՝ հոգուտ նոր ստեղծվելիք քրդական ֆրակցիայի կամ հրաժարվելու քրդական ֆրակցիա ստեղծելու բարդ ու խնդրահարույց նախաձեռնությունից:

• **«Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» հետ հետագա հնարավոր հակասությունները** – Չնայած քրդական ֆրակցիայի ստեղծման հետ կապված «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» անդամների խրախուսական մոտեցմանը, որը, ըստ ամենայնի, պայմանավորված է «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» ստեղծումը «լեգիտիմացնելու» և բացասական ընկալման խիստ մթնոլորտը տարրալուծելու ցանկությամբ, այդ ֆրակցիայի ստեղծումը թյուրքաբնակ և քրդաբնակ շրջանների սահմանագատման հարցում անխուսափելիորեն կհանգեցնի քուրդ-ազարիական հակասությունների<sup>46</sup>:

#### Ամփոփում

- Ի տարբերություն թյուրքաբնակների ֆրակցիայի՝ քրդական ֆրակցիայի ստեղծման գաղափարը ԻԻՀ քաղաքական դաշտում նորույթ չէ, և այն ունի կայացման անհաջող պատմական փորձ:
- Ֆրակցիայի անհաջող պատմական փորձը նպաստել է ԻԻՀ քրդերի և օրենսդիր մարմնում ստեղծվելիք քրդական ֆրակցիայի միջև կապի վերացմանը, ինչն էլ զրկում է ֆրակցիային քրդական լայն

<sup>46</sup> Քուրդ-ազարիական այսօրինակ հակասությունները մեծապես կապված են Արևմտյան Ազարբայջան նահանգի հետ: Մասնավորապես, 2014 թվականի հունվարին ԻԻՀ ներքին գործերի նախարարի հայտարարությունից հետո՝ երկրում 10 նոր նահանգի ավելացման վերաբերյալ, Մեջլիսում Բորանի շրջանի պատգամավոր Մոհամմալ Ղասիմ Օսմանին իր ելույթում առաջարկեց Արևմտյան Ազարբայջան նահանգի մի մասի հիման վրա ստեղծել Հյուսիսային Քորդեսթան նահանգը՝ Մահաբադ կենտրոնով: Պատգամավորի այս ինքնաբերական հայտարարությունը առաջացրեց Ուրմիայի պատգամավոր, «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» ներկայիս փոխնախագահ Նադեր Ղազիփուրի վրդովմունքը, ով հայտարարեց, որ ոչ մի դեպքում բույլ չի տա Ազարբայջան նահանգի պատակտումը: Տե՛ս «کردستان شمالي» واکش به درخواست تشکیل «کردستان شمالي» Հյուսիսային Քորդեսթանի ստեղծման պահանջի արչագանքը, Tabnak, <https://goo.gl/7UZ4xM> (05.01.2014):

շրջանակների հովանավորությունը և աջակցությունը ստանալու հնարավորությունից:

- Թե՛ քվաքանակային, թե՛ կոնսուլիդացման հիմքերով ֆրակցիան ունի ստեղծվելու և կայանալու առավել նվազ, անհեռանկարային պոտենցիալ ու մոտիվացիա, և քրդերի ֆրակցիայի ստեղծման գաղափարները հիմնականում կրում են ինտերցիոն բնույթ՝ չհանգեցնելով գործնական քայլերի և արդյունքների:

#### Այլ էթնիկ ֆրակցիաների ստեղծման նախաձեռնությունները և դրանց գնահատումը

Էթնիկ ֆրակցիաների ստեղծման փորձերը, հատկապես հաջող կայացման դեպքում, ի հայտ են բերում տվյալ գործընթացի ինտերցիոն կիրառման փորձեր այլ էթնիկ խմբերի շրջանում: Այդ փորձերը, ելնելով իրենց ոչ ինքնաբերական բնույթից, որպես կանոն ունենում են ոչ համակարգված, տարերային բնույթ, ուստի առանձնակի չեն փոխում Մեջլիսի ընդհանուր պատկերը:

Անկասկած, այս հարցում իր որոշիչ դերն է խաղացել կառավարության խրախուսական և լավատեսական դիրքորոշումը էթնիկ ֆրակցիաների ստեղծման գաղափարի նկատմամբ, ինչն արտահայտվեց կառավարության խոսնակ Մոհամմադ Բադեր Նոբախթի հայտարարության մեջ: Վերջինս հայտարարել է, որ ողջունում է «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» ստեղծման նախաձեռնությունը, և քրդերը, բելուջները և մնացյալ ազգությունները ևս կարող են Մեջլիսում ֆրակցիա ստեղծել<sup>47</sup>:

Կառավարության խոսնակի հետևյալ դիրքորոշումը և մինչ այդ՝ 2014 թվականը, նրա մասնակցությունը «Չագրոսաբնակների ֆրակցիայի» միստերին, անուղղակիորեն խոսում է Ռուհանիի և նրա կառավարության դրական կարծիքի և դիրքորոշման մասին՝ տվյալ գործընթացների առիթով: Սա կարող է պայմանավորված լինել երկու գործոնով.

1. նախևառաջ, խրախուսելով և աջակցելով էթնիկ ֆրակցիաների ստեղծման գործընթացին, Ռուհանին Մեջլիսում ունենում է իր նկատմամբ

<sup>47</sup> نوبخت: کردها و بلوچها نیز میتوانند در مجلس فراکسیون داشته باشند «Էրդերն ու բելուջները ևս կարող են Մեջլիսում ֆրակցիա ստեղծել», Asr-e Iran Analytic site, <https://goo.gl/iv2UOR> (11.11.2016):

լոյալ դիրքորոշում ունեցող խմբեր, որոնք կարող են նրա համար հեռարան դառնալ երկրի օրենսդիր մարմնում,

2. Ի լրումն դրա՝ էթնիկ ֆրակցիաները ներկայանում են որպես նախընտրական քարոզարշավի ժամանակ Ռուհաննի կողմից ներկայացված էթնիկ քաղաքականության ծրագրի<sup>48</sup> իրականացման պտուղներ և երկրի էթնիկ խմբերի խնդիրներին հետամուտ լինելու Ռուհաննի նախաձեռնության արդյունքներ: Ուստի «Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» ստեղծումից որոշ ժամանակ անց էթնիկ ֆրակցիայի ստեղծման գաղափարը դրական արձագանք ստացավ Մեջլիսի բելուջ պատգամավորների կողմից: Այդ մասին հայտարարել է Լոնդոնի բելուջագիտական հետազոտությունների կենտրոնի ներկայացուցիչ Աբդուլսեթար Դուշուքին<sup>49</sup>:

Ի լրումն դրա՝ ֆրակցիա ստեղծելու վերաբերյալ քննարկումներ ի հայտ եկան նաև լուրերի շրջանում, ինչի մասին բարձրաձայնեց լուր քաղաքական ակտիվիստ Ղոլանոեզա Թահերի<sup>50</sup>: Վերջինս կարծում է, որ մեծ մասամբ շիա լուրերի ներկայացուցիչների կողմից ֆրակցիայի ստեղծումը ոչ միայն կնպաստի լուրաբնակ շրջանների սոցիալական բազմաթիվ խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների կոորդինացմանը, այլև չի ներառի որևէ սպառնալիք՝ ԻԻՀ անվտանգության տեսանկյունից:

Ժամանակ առ ժամանակ շրջանառվող մանատիպ հայտարարությունները չունեցան լայն արձագանք և գործնական նշանակություն:

### Եզրակացություններ

• ԻԻՀ-ում կուսակցական համակարգը և պատկերացումները դեռևս գտնվում են ինստիտուցիոնալիզացման փուլում: Կուսակցությունների և քաղաքական խմբավորումների ստեղծման գործում շարունակում է արդիական մնալ պահպանողական-բարեփոխական լայն՝ ոչ քաղաքական, գաղափարական բաժանումը, սակայն դրան զուգահեռ արդեն իսկ փորձեր

<sup>48</sup> *Iranian Kurds and Tehran's policy on Ethnic Minorities*, International Middle Eastern Studies club, <http://www.imesclub.org/research/item/328-iranian-kurds-and-tehran-s-policy-on-ethnic-minorities>.

<sup>49</sup> *Կառավարության աջակցությունը քրդերի և բելուջների ֆրակցիաների ստեղծմանը*, Մոհամադ Թահերի, Deutsche Welle, <http://p.dw.com/p/2Si7t> (15.11.2016):

<sup>50</sup> *«Լուրական ֆրակցիայի ստեղծումը շահավետ է ազգային անվտանգության համար»*, <https://goo.gl/NJvQ3G> (14.11.2016):

են կատարվում ստեղծելու այլ՝ էթնիկ առանցքի վրա հիմնվող **լեգիտիմ** քաղաքական ուժեր:

• Էթնիկ պատկանելության ընդունումը և էթնիկ ֆրակցիաների ստեղծումն ԻԻՀ խորհրդարանի խայտաբղետ և ոչ կանոնակարգված ֆրակցիոն համակարգում որակական նոր երևույթ է, հետևաբար ենթակա է կառուցողական և ոչ կառուցողական քննադատության: Ի լրումն դրա՝ էթնիկ ֆրակցիաներն իրենց կայացման ճանապարհին ունեն նաև սոցիալական, քաղաքական, տնտեսական և իրավական մի շարք մարտահրավերներ:

• Տվյալ պատկերը ոչ միատարր երկրի պարագայում օրակարգ է բերում դաշտը կանոնակարգելու, վերահսկելու պահանջ, և դա հրատապ է դառնում նախևառաջ օրենսդիր մարմնում:

• Մեջլիսում տարբեր էթնիկ խմբերի շրջանում ի հայտ եկած նմանօրինակ քննարկումները ի հայտ են բերում որոշակի մարտահրավերներ, որոնք սպառնալիքի վերածման պոտենցիալ ունեն:

1. Քանի դեռ չկա ֆրակցիաների ստեղծումը, դրանց անդամների նվազագույն շեմը հաստատող և հետագա գործունեությունը կարգավորող օրինական ակտ, որի պարագայում վերոնշյալ էթնիկ ֆրակցիաներից ստեղծումը կզրկվի իրավական հիմքից, այսպիսի ֆրակցիաներն ունեն տարերային ստեղծման մեծ պոտենցիալ, ինչը և՛ խճողում է Մեջլիսի համընդհանուր պատկերը, և՛ ի հայտ է բերում միջէթնիկ հակասությունների ծագման մեծ վտանգ:

2. Տվյալ ֆրակցիաները, անգամ չլինելով մեծաթիվ և չունենալով մեծ կշիռ, ինչպես նաև Մեջլիսի աշխատանքներում որակական փոփոխություններ իրականացնելու պոտենցիալ, այդուհանդերձ, նպաստում են երկրի օրենսդիր մարմնի քաղաքական պատկերի աղճատմանը, ինչի արդյունքում քաղաքական, սոցիալ-տնտեսական, համապետական լայն ծրագրեր և նախաձեռնություններ ունեցող քաղաքական խմբավորումներին գալիս են փոխարինելու առավել նեղ՝ էթնիկ, հարցեր հետապնդող փոքր խմբեր:

3. Կուսակցական համակարգի ոչ լիարժեք կայացման պայմաններում մնան ֆրակցիաները քաղաքական կուսակցությունների նախահիմքը դառնալու պոտենցիալ ունեն, ինչը, հաշվի առնելով ԻԻՀ-ի ոչ միատարր էթնիկ պատկերը, կարող է հանգեցնել արտաքին ուժերի առավել քիթախավորված գործունեությանն ու անջատողականության խթանմանը:

4. Կարևոր ենք համարում նաև ֆրակցիայի ոչ համայնքային կամ լեզվական, այլ տարածքային իդենտիֆիկացիայի վրա հիմնած լինելու գործոնը («Թյուրքաբնակ շրջանների ֆրակցիայի» դեպքում), քանի որ տվյալ դեպքում որոշակիորեն ստեղծվող տարածքային արեալը և քարտեզը հետագա զարգացման, շահարկման և սպառնալիք դառնալու ներուժ ունեն:

5. Չնայած այն հանգամանքին, որ էթնիկ ֆրակցիաների նկատմամբ Հասան Ռուհանիի կառավարության դրական վերաբերմունքը ներկայանում է որպես Ռուհանիի էթնիկ հավասարակշիռ քաղաքականության մի մաս, այդուհանդերձ գործընթացն ունի վերահսկողությունից դուրս գալու մեծ ներուժ:

## ԻՐԱՔՅԱՆ ՔՈՒՐԴԻՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ

*(Հեղինակ՝ ԵՊՀ ՀՀԻ հայ-քրդական առնչությունների բաժնի վարիչ,  
ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության  
ամբիոնի վարիչ, պ. գ. ք., դոցենտ Վահրամ Պևրոսյան)*

**Բանալի բառեր՝** Քուրդիստանի ռեզիդնալ կառավարություն (ՔՌԿ), «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցություն» (ՔԴԿ), «Քուրդիստանի հայրենասիրական միություն» (ՔՀՄ), «Փոփոխություններ» («Գորրան») կուսակցություն, «Քուրդիստանի իսլամական միություն» (ՔԻՄ), «Քոնալա-յե Էսլամի», «Արդարություն և զարգացում կուսակցություն» (ԱԶԿ), «Քուրդիստանի աշխարհավորական կուսակցություն» (ՔԱԿ կամ ՔԿԿ):

### ԸՆԳՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

Փորձագիտական զեկույցի ձևով մշակված վերլուծական հոդվածում դիտարկվում են 2017 թվականի սեպտեմբերի 25-ին Իրաքյան Քուրդիստանում անցկացված անկախության հանրաքվեի նպատակներն ու արդյունքները՝ հետադարձ հայացքի գնահատմամբ՝ մեկ տարի անց ստեղծված իրադրության տեսանկյունից:

### ԽՆԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

2017 թվականի սեպտեմբերի 25-ին Իրաքյան Քուրդիստանում անկախության հանրաքվե անցկացվեց: Հանրաքվեի օրինականությունն ի սկզբանե մերժվեց Իրաքի դաշնային կառավարության կողմից: Սակայն կանխել հանրաքվեի անցկացումը Բաղդադն անկարող էր: Քուրդիստանում անցկացված անկախության հանրաքվեի արդյունքները միանգամայն տպավորիչ էին, անկախության օգտին արտահայտվեց հանրաքվեին մասնակցած քուրդիստանցիների 93.25 %-ը: Քուրդիստանի ռեզիդնալ կառավարությունը (ՔՌԿ-ն<sup>1</sup>) պնդում էր, որ հանրաքվեի դրական արդյունքը ոչ թե անմիջապես կհանգեցնի Քուրդիստանի անկախության հռչակմանը, այլ կնպաստի Իրաքի հետ բանակցությունների և պետական շինարարու-

<sup>1</sup> «Քուրդիստանի ռեզիդնալ կառավարություն (ՔՌԿ)» հասկացությունը ներառում է Իրաքյան Քուրդիստանի օրենսդիր, գործադիր և դատական մարմինների ամբողջությունը:

քյան մեկնարկին: Թեև անկախության հանրաքվեից ամիսներ առաջ հաճախ էր նշվում, որ անկախության հանրաքվեն պարտավորեցնող բնույթ չի կրի, թե՛ Իրաքի դաշնային կառավարության ու արտաքին ուժերի բացասական դիրքորոշումն այս հարցում, թե՛ Քուրդիստանի ռեզիդենտ կառավարության (ՔՌԿ) անկախության հանրաքվե անցկացնելու հաստատակամությունը հիշյալ հանրաքվեին գնալով ավելի պարտավորեցնող բնույթ էին տալիս:

2017 թվականի սեպտեմբերի 25-ին Իրաքյան Քուրդիստանում անցկացված անկախության հանրաքվեն ուներ պատմական ու քաղաքական աննախադեպ նշանակություն ինչպես Մերձավոր ու Միջին Արևելքի տարածաշրջանային զարգացումների, այնպես էլ քրդական գործոնի վերագնահատման ու վերաիմաստավորման տեսանկյունից: Քուրդիստանի ռեզիդենտ կառավարությունը (ՔՌԿ-ն) և մասնավորապես Իրաքյան Քուրդիստանում ամենաազդեցիկ «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցությունն» (ԶԴԿ-ն) ու վերջինիս հարող քաղաքական ուժերն ու անհատ գործիչներն ամենևին չեն հրաժարվել անկախության նպատակից: Արտաքին ուժերի ճնշման և ներքին ուժերի պառակտվածության պայմաններում ԶԴԿ-ն պարզապես վերանայել է ռազմավարական այս նպատակին տանող մարտավարական քայլերի ժամանակացույցը: Հիշյալ տեսանկյունից կարևորում ենք 2017 թվականի սեպտեմբերի 25-ին անցկացված Իրաքյան Քուրդիստանի անկախության հանրաքվեի նպատակների ու արդյունքների հետազոտումը Քուրդիստանի ներքին դիսկուրսի համատեքստում:

### Անկախության հանրաքվեի գաղափարի շրջանառումը

Դեռ 2003 թվականի հուլիսին մի խումբ քուրդ մտավորականներ Սուլեյմանիեում նախաձեռնեցին «**Քրդական հանրաքվեի շարժումը**»: Նրանք մի խնդրագիր (պետիցիա) տարածեցին՝ պահանջելով քրդերի հետագա կարգավիճակի վերաբերյալ պաշտոնական հանրաքվե անցկացնելու իրավունքի տրամադրում:

Միջնորդագրի ներքո առկա էր ավելի քան 1,7 միլիոն (1,732,535) ստորագրություն, այն է՝ հիշյալ նախաձեռնությունը պաշտպանել էր ՔՌԿ-ի քվեարկության տարիքի բնակչության մեծամասնությունը<sup>2</sup>:

<sup>2</sup> Nancy E. Soderberg (Chair), David L. Phillips (Project Director), Task Force Report: State-Building in Iraqi Kurdistan (October 2015),- Institute for the Study of Human Rights, Columbia

2004 թ. փետրվարին «Հանրաքվեի շարժման» կազմակերպիչները, Բաղդադ գալով, նպատակ ունեին իրենց պետիցիան հանձնել Իրաքի կուլիցիոն ժամանակավոր կառավարության<sup>3</sup> ղեկավար Փոլ Բրեմերին<sup>4</sup>, որն Իրաքում բարձրագույն պաշտոնյա էր: Սակայն ո՛չ Բրեմերը, և ո՛չ էլ Կուլիցիոն ժամանակավոր կառավարության որևիցե այլ պաշտոնյա չցանկացան հանդիպել Քուրդիստանի «Հանրաքվեի շարժման» կազմակերպիչների հետ<sup>5</sup>: Հետագայում՝ 2004 թվականի դեկտեմբերի 22-ին, «Քուրդիստանի հանրաքվեի շարժումը» ներկայացնող՝ Հյուսիսային Ամերիկայի, Եվրոպայի և Քուրդիստանի քուրդ հասարակական գործիչներից կազմված պատվիրակությունը Նյու Յորքում ՄԱԿ-ի համապատասխան պաշտոնյաների հետ հանդիպման ժամանակ նրանց հանձնեց 1,7 մլն իրաքյան քրդերի՝ Քուրդիստանում անկախության հանրաքվե անցկացնելու վերաբերյալ վերոհիշյալ խնդրագիրը<sup>6</sup>:

Թեև քրդերի հետագա կարգավիճակի վերաբերյալ պաշտոնական հանրաքվե անցկացնելու տարբերակը բացառվեց, վերոհիշյալ պետիցիան ուղի հարթեց 2005 թվականի հունվարի 30-ին ոչ պաշտոնական հանրաքվե անցկացնելու համար<sup>7</sup>:

University, New York, p. 15; <http://thekurdishproject.org/wp-content/uploads/2015/10/State-Building-in-Iraqi-Kurdistan.pdf>.

<sup>3</sup> Իրաքի կուլիցիոն ժամանակավոր կառավարությունը (Coalition Provisional Authority of Iraq) բազմազգ կուլիցիոն ուժերի՝ Իրաք ներխուժելուց (2003 թ. մարտի 19) հետո ձևավորված անցումային իշխանության մարմին էր: Այն գործեց 2003 թվականի ապրիլի 21-ից մինչև 2004 թվականի հունիսի 28-ը (14 ամիս, 1 շաբաթ) և լուծարվեց: Վկայակոչելով ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի քիվ 1483 բանաձևը (2003) և պատերազմի օրենքները՝ ԻԿԺԿ-ն ինքն իրեն օժտել էր իրաքյան կառավարության օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լիազորություններով:

<sup>4</sup> Փոլ Բրեմերը գլխավորում էր Իրաքի կուլիցիոն ժամանակավոր կառավարությունը 2003 թվականի մայիսի 12-ից մինչև 2004 թվականի հունիսի 28-ն ընկած ժամանակահատվածում:

<sup>5</sup> Վերջիններս Բաղդադում մամուլ ասուլիս կազմակերպեցին, որտեղ ներկայացրին իրենց պետիցիան աջակցողների ստորագրությունները ներառող արկղերը, սակայն ձեռնունայն ու հիասթափված վերադարձան Քուրդիստան: Քուրդիստանի «Հանրաքվեի շարժման» հանրաքվեի մասին տե՛ս Peter W. Galbraith, *The End of Iraq: How American Incompetence Created a War Without End*, New York, London, Toronto, Sydney 2006, pp. 170-171:

<sup>6</sup> Տե՛ս «Kurdistan Referendum At The United Nations – Today: Press Release. Referendum Movement in Kurdistan». «E Kurd Daily», 22.12. 2004, <http://ekurd.net/mismas/articles/misc/newyork.htm>); «Iraqi Kurds hand petition to the UN for independence»,- «E Kurd Daily», 25.12.2004, <http://ekurd.net/mismas/articles/misc/newyork3.htm>:

<sup>7</sup> Nancy E. Soderberg (Chair), David L. Phillips (Project Director), Task Force Report: State-Building in Iraqi Kurdistan (October 2015),- Institute for the Study of Human Rights, Columbia

2005 թվականի հունվարին Իրաքի համընդհանուր և Իրաքյան Քուրդիստանի՝ ռեգիոնալ ընտրությունների հետ մեկտեղ Իրաքյան Քուրդիստանում անցկացվեց անկախության հանրաքվե, որը կրում էր ոչ պաշտոնական բնույթ: Այն կազմակերպել էր Իրաքյան Քուրդիստանի և քրդական սփյուռքի գործիչների ստեղծած «Քուրդիստանի հանրաքվեի շարժում» կազմակերպությունը<sup>8</sup>: Ընտրողներին տրվում էր երկու տարբերակ՝ մնալ Իրաքի կազմում որպես նրա մի հատվածը կամ լինել անկախ: Ընդհանուր առմամբ շուրջ երկու միլիոն (1,998,061) մարդ մասնակցեց հանրաքվեին, որը տեղի ունեցավ Հյուսիսային Իրաքի քրդաբնակ բոլոր շրջաններում, այդ թվում՝ Քիրքուկում, Խանաքինում և Մոսուլի (Նինվեի) մարզի քրդաբնակ տարածքներում<sup>9</sup>: Անկախության տարբերակը հավաքեց քվեարկողների 98,8 %-ի աջակցությունը, այն է՝ գրեթե բոլորը կողմ էին քվեարկել անկախությանը (կողմ՝ 1,973412, դեմ՝ 19650)<sup>10</sup>:

Թեև հանրաքվեի շուրջ 2 միլիոն մասնակիցների 98,8 %-ն արտահայտվեց հոգուտ անկախության<sup>11</sup>, այն կրում էր **ոչ պաշտոնական բնույթ**, և ԶՌԿ-ն պարզապես օգտագործեց տվյալ փաստն ԱՄՆ-ի, հատկապես Իրաքի դաշնային կառավարության հետ բանակցություններում՝ էապես ամրապնդելով Իրաքում իր ունեցած կիսանկախ վիճակը:

2014 թվականի հունիսին ԶՌԿ-ի և Իրաքի դաշնային կառավարության միջև հարաբերությունների սրման, վեճերի խորացման, ինչպես նաև Իրաքում և Լևանտում Իսլամական պետության (ԻԼԻՊ-ի) ռազմական առաջխաղացման պայմաններում<sup>12</sup> Իրաքյան Քուրդիստանի ղեկավար

University, New York, p. 15; <http://thekurdishproject.org/wp-content/uploads/2015/10/State-Building-in-Iraqi-Kurdistan.pdf>; տես նաև Press Release, Kurdistan Referendum Movement, International Committee, London, February 8, 2005, տե՛ս նույն տեղում:

<sup>8</sup> Տե՛ս «98 percent of the people of South Kurdistan vote for independence». «KurdMedia», 9 February 2005 ([https://www.indybay.org/newsitems/2005/02/09/1720\\_5061.php](https://www.indybay.org/newsitems/2005/02/09/1720_5061.php)):

<sup>9</sup> Բաղդադում և արաբական այլ քաղաքներում բնակվող քրդերը չէին ընդգրկվել հանրաքվեի ցուցակներում:

<sup>10</sup> Nancy E. Soderberg (Chair), David L. Phillips (Project Director), Task Force Report: State-Building in Iraqi Kurdistan (October 2015),- Institute for the Study of Human Rights, Columbia University, New York, p. 15; <http://thekurdishproject.org/wp-content/uploads/2015/10/State-Building-in-Iraqi-Kurdistan.pdf>; տես նաև Press Release, Kurdistan Referendum Movement, International Committee, London, February 8, 2005, տե՛ս նույն տեղում:

<sup>11</sup> Տե՛ս «98 percent of the people of South Kurdistan vote for independence», «KurdMedia», 9 February 2005 ([https://www.indybay.org/newsitems/2005/02/09/1720\\_5061.php](https://www.indybay.org/newsitems/2005/02/09/1720_5061.php)):

<sup>12</sup> ԻԼԻՊ-ը Մոսուլը և Թիքրիտը գրավեց համապատասխանաբար 2014 թվականի հունիսի 10-ին և 11-ին:



Վահրամ Պետրոսյանը  
Քուրդիստանի նախագահ Մասուդ  
Բարզանու հետ



ԵՊՀ ՀՀԻ հայ-քրդական առնչությունների բաժնի վարիչ, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ Վահրամ Պետրոսյանը Քուրդիստանի ռեգիոնալ կառավարության արտաքին հարաբերությունների ղեկավարության ղեկավար (արտաքին գործերի նախարար) Ֆալլահ Մուստաֆայի հետ հանդիպման ընթացքում

(Էրբիլ, 2017)




Քուրդիստանի ռեզիստնալ կառավարության փոխվարչապետ Քուբաթ Թալարանին և Վահրան Պետրոսյանը



Վահրան Պետրոսյանը «Քուրդիստանի հայրենասիրական միություն» (ՔՀՄ) խոսնակ Սադի Փիրեի հետ



ՔՌ-Կ մայրաքաղաք Էրբիլը (2017)



2017 թվականի սեպտեմբերի 25-ի անկախության հանրաքվեի գովազդային պաստառներից



2017 թվականի սեպտեմբերի 25-ի անկախության հանրաքվեի գովազդային պաստառներից



Էրբիլ (սեպտեմբերի 25, 2017)





Iranian presidential election, 2017  
Results by province



Rouhani  
Raisi

2017 թ. ԻԻՀ նախագահական ընտրությունների արդյունքները՝ ըստ նահանգների

ՀՀ Արևելա-Կուրդիստանի մարզում 2014 թվականից հունիսի 27-ին ԵՊՀ-ում արդյունաբերական փոփոխություններ են իրականացվում:

ՀՀ Արևելա-Կուրդիստանի մարզում 2014 թվականից հունիսի 27-ին ԵՊՀ-ում արդյունաբերական փոփոխություններ են իրականացվում:

مجلس شورای اسلامی  
آمور و سیاه گازی

فرم شماره یک

نول و ناظر بر انتخابات هیئت رئیسه فراکسیونها

ما نمایندگان امضاء کنندگی ذیل از حوزههای انتخابیه مختلف، با آگاهی و اتمام به مفاد آئین نامه و شرایط کیل فراکسیونها، آمادگی خود را جهت عضویت و تشکیل فراکسیون ساطق آرزو نمیشیم و انتخاب اعضای هیئت ره آن را اعلام می‌داریم.

۱۹. کلمه فرزند  
۲۰. کلمه فرزند  
۱۸. کلمه فرزند  
۱۷. کلمه فرزند

ردیف	نام و نام خانوادگی	حوزه انتخابیه	امضاء	شماره تلفن
۱	محمد حسن نوروزی	مرند رحلینا		۰۹۱۲۳۸۰۳۵۱
۲	احمد علی صابری	تبریز آذربایجان		۰۹۱۲ ۱۰۵۳۶۷۳
۳	تارا در تاران پور	ارومیه		۱۶۱ . ۴۱۹
۴	علی اکبر بیگاری	تبریز		۰۹۱۲۳۱۷۴۱۴۳
۵	رضا کریمی	ارمنستان		۰۹۱۴۴۵۲۹۶۲۴
۶	عقیده سیرابی	میان کنتیا تبریز		۰۹۱۲۴۴۰۴۸۰
۷	مجتهد الدین محمدی	تبریز آذربایجان		۰۹۱۲۴۰۱۲۰۰۴
۸	ابوالحسن محمدی	کولان		۰۹۱۲۰۱۲۵۰۳۳۳
۹	سفره آینه پورعلی	شیراز		۰۹۱۲۰۱۸۰۴۵۵۵
۱۰	زهرا سعیدی	تبریز آذربایجان		۰۹۱۴۴۳۵۷۴۰۰
۱۱	فریدون احمدی	فولادشاه		۰۹۱۲-۴۰۷-۴۵۸۶
۱۲	محمد محمدی	تبریز آذربایجان		۰۹۱۲۲۲۲۲۴۴۱
۱۳	محمد علی محمدی	ساکت جلال آباد		۰۹۱۲ ۴۴۹۴۵۷
۱۴	محمد علی محمدی	تبریز آذربایجان		۰۹۱۴۴۰۸۹۷۹۴
۱۵	محمد علی محمدی	تبریز آذربایجان		۰۹۱۴ ۴۴۱۷۴۹۲

۹۱۲۳۹۱۵۵۹۱  
۹۱۲۳۹۱۵۵۹۱  
۹۱۲۳۹۱۵۵۹۱

Թուրքարնակ շրջանների խմբակցության ստեղծման ձևաթղթի բնօրինակը

շրջանները կրկին առաջ քաշեցին անկախության հանրաքվե անցկացնելու գաղափարը: Այս անգամ հանրաքվեն պետք է կրեր **պաշտոնական բնույթ**: Խնդիրն այն է, որ Իրաքյան Քուրդիստանի անկախության հարցը սկսեց ինտենսիվ կերպով շրջանառել Հյուսիսային Իրաքի ուղղությամբ ԻԼԻՊ-ի առաջխաղացման պարագայում<sup>13</sup>, երբ Իրաքի դաշնային կառավարության զորքերը լքեցին իրենց վերահսկողության տակ գտնվող մի շարք տարածքներ, փաստացի կտրվեց Քուրդիստանի ռեգիոնալ կառավարության և իրաքյան մյուս տարածքների միջև ցամաքային կապը: ՔՌԿ զինյալներն անմիջապես իրենց վերահսկողությունը հաստատեցին Էրբիլի և Բաղդադի միջև գտնվող մի շարք վիճելի տարածքների, մասնավորապես Քիրքուկի նկատմամբ<sup>14</sup>: Այդուհանդերձ, ԻԼԻՊ-ը սպառնում էր նաև Էրբիլին, սակայն ՔՌԿ-ին հաջողվեց ԱՄՆ-ի և ԻԻՀ-ի աջակցությամբ կանխել վտանգը: Տվյալ փաստը վկայում էր, որ ՔՌԿ-ն դեռ լիովին պատրաստ չէր անկախության, առավել ևս՝ ԻԼԻՊ-ին հարևան ունենալու պարագայում: Հետևաբար Իրաքյան Քուրդիստանի ղեկավարությունը համաձայնեց հետաձգել անկախության հանրաքվեի անցկացումը<sup>15</sup>:

Այդուհանդերձ, որոշ ժամանակ անց՝ 2016 թվականի փետրվարի 2-ին, Իրաքյան Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանին կրկին հանդես եկավ ՔՌԿ տարածքում, այսպես կոչված, «չպարտադրող անկախության հանրաքվե» անցկացնելու կոչով: Ընդ որում՝ այդ ելույթում Քուրդիստանի նախագահը արտահայտում էր երկու տարբեր գաղափարներ: Մի կողմից նա նշում էր, որ տարածաշրջանի քրդերին սահմաններով բաժանելը «մեծ սխալ է եղել», և որ «ժամանակն է եկել, և իրավիճակն այժմ քուրդ ժողովրդի համար հարմար է, որ նա իր ճակատագրի վերաբերյալ հանրաքվեի միջոցով որոշում կայացնի»: Սակայն, մյուս կողմից, Մասուդ Բարզանին անում էր որոշակի վերապահումներ. «Այդ հանրաքվեն չի նշանա-

<sup>13</sup> Իրաքյան Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանին հայտարարել է, որ Իրաքը, ըստ էության, մասնատվել է, ու թեև քրդերը որոշակի դեր կխաղան ԻԼԻՊ-ի ստեղծած ճգնաժամի կարգավորման գործում, սակայն իրաքյան քրդերն ունեն անկախության իրավունք (տե՛ս «Iraq Kurdistan independence referendum planned». «BBC News», 1 July 2014 (<http://www.bbc.com/news/worldmiddleeast28103124>)):

<sup>14</sup> Իրաքի դաշնային կառավարության զորքերը Քիրքուկից հեռացել են 2014 թվականի հունիսի 13-ին:

<sup>15</sup> St'iu Roy Gutman. Kurds agree to postpone independence referendum. «Toronto Star Newspapers», 5 September 2014 ([http://www.thestar.com/news/world/2014/09/05/kurds\\_agree\\_to\\_postpone\\_independence\\_referendum.html](http://www.thestar.com/news/world/2014/09/05/kurds_agree_to_postpone_independence_referendum.html)):

կում լեռնակառնության հռչակում, այլ ավելի շուտ նպատակ ունի իմանալու անկախության վերաբերյալ քուրդ ժողովրդի կարծիքն ու կամքը և քրդական քաղաքական ղեկավարության համար է, որ նա համապատասխան ժամանակ ու համապատասխան պայմաններում կատարի ժողովրդի կամքը»<sup>16</sup>:

Թեև ՔՌԿ նախագահի հայտարարությունը կարող է դիտվել որպես ներքին<sup>17</sup> և արտաքին ճակատներում<sup>18</sup> հնարավոր լծակներ ստանալու հերթական մարտավարական քայլ, այդուհանդերձ նա հետևողականորեն պնդում էր, որ անկախության հանրաքվեն պետք է տեղի ունենա մինչև 2016 թվականի հոկտեմբեր<sup>19</sup>, ցանկացած դեպքում՝ ԱՄՆ-ի նախագահական ընտրություններից առաջ<sup>20</sup>: Ընդ որում՝ քրդերը մտադիր չէին մինչ այդ ձեռնարկելու ԻԼԻՊ-ի վերահսկողության տակ գտնվող Մոսուլի ազատագրումը, քանի որ այդ հարցում ևս կարող էին իրենց աջակցությունն օգտագործել որպես լծակ: ՔՌԿ-ն նաև գիտակցում է, որ Մոսուլի գրավումը կամ-

<sup>16</sup> St'u «Iraqi Kurdish Leader Calls For Nonbinding Vote On Independence». «Radio Free Europe. Radio Liberty», 3 February 2016 ([http://www.rferl.org/content/iraqikurdishleaderbarzani\\_callsforonbindingvoteindependence/27529166.html](http://www.rferl.org/content/iraqikurdishleaderbarzani_callsforonbindingvoteindependence/27529166.html)):

<sup>17</sup> Էական գործոն էր դարձել ՔՌԿ-ում տիրող նախագահական ճգնաժամը (տե՛ս *Kawa Sheikh Abdullah*. Iraq's Kurdistan's next big crisis: Its presidency. «E Kurd Daily», 17 April 2015 (<http://ekurd.net/iraqikurdistansnextbigcrisisitspresidency20150417>); «Barzani calls for solution to Iraqi Kurdistan presidential crisis». «PressTV», 16.08.2015 (<https://www.youtube.com/watch?v=cUo2pn6y0p8>):

<sup>18</sup> Հայտնի քուրդ քաղաքական գործիչ Մուհամեդ Հաջի Մահմուդը (որը հայտնի է նաև որպես Կարա Համա), ելույթ ունենալով Քեմերիջի համալսարանում (Մեծ Բրիտանիա), տվեց հետևյալ պարզաբանումը. «Հանրաքվեի նպատակը անկախության անհավաղ հռչակումը չէ...: Այն քրդերի ձեռքում մի քարտեզ ու մանդատ է, որը Իրաքի կառավարությանը հնարավորություն կտա տարածաշրջանային տերությունների ու Արևմուտքի հետ այլ բնույթի համաձայնության գալու...: Մենք ուզում ենք աշխարհին ապացուցել, որ քրդերի 99 տոկոսը փաստացի հանդես է գալիս անկախության օգտին» (տե՛ս «Курдский лидер: Референдум должен быть проведен перед наступлением на Мосул и выборами в США». «RIA TA ZA», 29.04.2016 (<http://www.riataza.com/#!КурдскийлидерРеферендум.долженбытьпроведенпереднаступлениемнаМосуливыборамиивСША/cjds/57231d7c0cf232b075d1ba59>):

<sup>19</sup> Մինչդեռ Իրաքյան Քուրդիստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2016 թվականի հուլիսի 25-ին հայտարարեց, որ անկախության հանրաքվեի անցկացման համար անհրաժեշտ կլինի չորսամսյա նախապատրաստական աշխատանք (տե՛ս «Подготовка к референдуму о независимости займет 4 месяца», Kurdistan.ru (26.07.2016), [http://kurdistan.ru/2016/07/26/news26942\\_Podgotovka\\_k\\_referendumu\\_o\\_nezavisimosti\\_zaymet\\_4\\_mesyaca.html](http://kurdistan.ru/2016/07/26/news26942_Podgotovka_k_referendumu_o_nezavisimosti_zaymet_4_mesyaca.html)):

<sup>20</sup> St'u *Mewan Dolamari*. Barzani: Kurdistan will hold referendum before October. «Kurdistan24», 23 March 2016 (<http://www.kurdistan24.net/en/news/05609d3735694a8fa39e9-8b97c732503/BarzaniKurdistanwillholdreferendumbeforeOctober>):

րապնդի Բաղդադի դիրքերը, քանզի գրեթե բացառվում էր, որ Մոսուլը կարող էր ներառվել ՔՌԿ սահմաններում:

### **2017 թվականի սեպտեմբերի 25-ին անցկացված Իրաքյան Քուրդիստանի անկախության հանրաքվեի նպատակներն ու արդյունքները**

2017 թվականի հունիսի 7-ին Իրաքի քուրդ պաշտոնյաները որոշում կայացրին նույն տարվա սեպտեմբերի 25-ին Քուրդիստանի անկախության հանրաքվե անցկացնելու վերաբերյալ: Հիշյալ որոշումը միանգամայն համապատասխանում էր Քուրդիստանի ռեզիոնալ կառավարության (ՔՌԿ)<sup>21</sup> նախագահ Մասուդ Բարզանու՝ Իսլամական պետության պարտությունից հետո Քուրդիստանում անկախության հանրաքվե անցկացնելու խոստմանը: 2017 թվականի հունիսի 7-ից սկսած՝ ՔՌԿ-ի առնվազն ՔԴԿ-ական գործիչների ելույթներում «չպարտադրող անկախության հանրաքվե» եզրը հիմնականում դուրս բերվեց շրջանառությունից: Դրանով իսկ շեշտվում էր միանշանակ դեպի անկախություն գնալու ՔՌԿ-ի մտադրությունը:

Այդուհանդերձ, առանց Բաղդադի և միջազգային հանրության հավանության կամ առնվազն ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամների մեծամասնության աջակցության հանրաքվեն ինքնուրույն չէր կարող պետականության վերաբերյալ քրդական ծրագրերն իրականություն դարձնել: Իրաքյան Քուրդիստանի ղեկավարությունը դա գիտակցում էր: Փոխարենը անկախության հանրաքվեում ստացված հավանության ձայները, որ, անկասկած, կգերիշխեին, կարող էին բարդացնել Քուրդիստանի մայրաքաղաք Էրբիլի և կենտրոնի՝ Բաղդադի միջև առանց այդ էլ լարված հարաբերությունները: Նույնը վերաբերում էր նաև Թուրքիային և Իրանին, որոնց հետ տնտեսական հարաբերություններում և քաղաքական

<sup>21</sup> «Քուրդիստանի ռեզիոնալ կառավարություն» (ՔՌԿ, անգլերեն՝ Kurdistan Regional Government-KRG) հավաքական անվանմամբ կոչվում են Իրաքյան Քուրդիստանի օրենսդիր, գործադիր և դատական մարմինները՝ որպես մեկ ամբողջություն: Ներկայումս ՔՌԿ-ի անմիջական վերահսկողության ներքո գտնվող տարածքները կազմում են շուրջ 40 հազ. կմ<sup>2</sup>: Էրբիլի և Բաղդադի միջև կան տարածքային վեճեր: Երև դրանք կարգավորվեն ՔՌԿ-ի օգտին, ապա նրա վերահսկած տարածքը կկրկնապատկվի:

շփումների մեջ կենսականորեն շահագրգռված է Էրբիլը՝ իր որպես առանձին կազմավորման գոյատևման տեսանկյունից:

Այսպիսով՝ ի սկզբանե հայտնի էր, որ անկախության քվեարկությունը հանրաքվեն կարող էր լարվածություն առաջ բերել տարածաշրջանում և չէր հանգեցնելու անկախ քրդական պետականության ստեղծմանը: Այդուհանդերձ, ՔՌԿ-ն (եթե ոչ բացառապես, ապա առնվազն գերազանցապես «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության» (ՔԴԿ-ի) պնդմամբ) հաստատականորեն գնաց վերոհիշյալ քայլին:

Իրաքյան Քուրդիստանի՝ հիշյալ որոշմանն առնչվող, ասպարեզում առկա աղբյուրների հետազոտումը, ինչպես նաև քուրդ քաղաքական գործիչների և քրդագետ փորձագետների հետ մասնագիտական քննարկումների և ռազմավարական գնահատումների խտացումը թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

❖ ՔՌԿ-ն մտադիր էր իր օգտին կարգավորել Էրբիլ-Բաղդադ հարաբերություններում առկա նավթային եկամուտների խնդիրը: Նավթային եկամուտների շուրջ բարդ վիճաբանությունների արդյունքում Բաղդադը, 2014 թվականից սկսած, կտրականապես դադարեցրել էր ՔՌԿ-ին արվող դաշնային վճարումները: Քրդերը դրան պատասխանեցին՝ դադարեցնելով հում նավթի առաքումները կենտրոնական կառավարությանը, փոխարենը նոր կառուցված նավթային խողովակաշարով անմիջականորեն նավթ վաճառելով Թուրքիային կամ վերջինիս տարածքով այն հասցնելով միջազգային շուկա: Բաղդադի հետ պաշտոնական Էրբիլի բանակցությունները տեղի էին ունենում Իսլամական պետության դեմ ռազմական գործողությունների անհրաժեշտության պատճառով: Սակայն հետագայում, երբ Իսլամական պետությունը մոտ էր պարտությանը, նավթի բաշխման պայմանավորվածություններն արդեն չէին կատարվում: Հետևաբար ՔՌԿ պաշտոնյաները կարող էին հույսեր ունենալ, որ հանրաքվեն կբարձրացնի Բաղդադի հետ սակարկելու իրենց գործարքային ներուժը՝ ստիպելով Բաղդադին ամսական ավելի մեծ ֆինանսական հատկացումներ կատարել ՔՌԿ-ին: Էրբիլը պնդում էր, որ 2005 թվականին Բաղդադի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ այն պետք է ստանա նավթի

արտահանման դաշնային եկամուտների շուրջ 17 %-ը<sup>22</sup>, որն այդ պահի դրությամբ կազմում էր ամսական շուրջ 1 մլրդ ԱՄՆ դոլար (785 միլիոն ֆունտ ստեռլինգ)<sup>23</sup>:

❖ Իրաքի քուրդ պաշտոնյաները կարող էին նաև հավակնություններ ունենալ իրենց վերահսկողության ներքո հայտնված վիճահարույց մի շարք տարածքների նկատմամբ: Նախկինում Իսլամական պետությունը վերահսկողություն էր հաստատել Իրաքի հյուսիսարևմտյան ծավալուն տարածքների նկատմամբ և ուղղակիորեն սպառնում էր նավթային հարուստ պաշարներ ունեցող Քիրքուկին<sup>24</sup>: Սակայն քրդական «փեշմարգայի» զինյալներն անցան հակահարձակման և 2014 թվականից սկսած՝ փաստացի վերահսկողություն հաստատեցին Քիրքուկի և վիճելի մի շարք այլ տարածքների նկատմամբ: ՔՌԿ-ի վերահսկած տարածքը գրեթե կրկնապատկվեց<sup>25</sup>: Քրդերը նույնիսկ իրենց դրոշը բարձրացրին Քիրքուկ քաղաքի վարչական կարևորության շենքերում՝ արժանանալով քե՛ Թուրքիայի<sup>26</sup>, քե՛ տեղացի թուրքմենական համայնքի<sup>27</sup> քննադատությանը: Եթե Քիրքուկում և վիճարկվող այլ տարածքներում 2017 թվականի սեպտեմբերին կայանալիք հանրաքվեի արդյունքում «այո» քվեները գերիշխեին, ՔՌԿ-ի՝ վիճելի

<sup>22</sup> Իրաքի ֆեդերալ եկամուտներից մասնաբաժին ստանալու ՔՌԿ իրավունքն ամրագրված է 2005 թվականին ընդունված իրաքյան սահմանադրությունում, սակայն նշված տոկոսաչափը (17 %) մեկրնգմիշտ ամրագրված չէ, այլ ամեն տարի, Իրաքի խորհրդարանում ֆեդերալ բյուջեի հաստատմանը զուգահեռ, որոշվում է նաև ՔՌԿ-ին տրվող մասնաբաժնի չափը:

<sup>23</sup> Adrian Florea, Kurdistan's referendum won't lead to independence – so why hold it?, June 15, 2017 <http://theconversation.com/kurdistan-referendum-wont-lead-to-independence-so-why-hold-it-79447>.

<sup>24</sup> Քիրքուկի հարցում ՔՌԿ պաշտոնական դիրքորոշման մասին տե՛ս Kirkuk: A constitutional issue, - Kurdistan Regional Government, KRG (16 May 2007), <http://cabinet.gov.krd/a/d.aspx?s=010000&l=12&a=17953>:

<sup>25</sup> Այդ իրավիճակը շարունակվեց ընդհուպ մինչև 2017 թվականի հոկտեմբերի 16-ը:

<sup>26</sup> Türkiye'den Kerkük'e 'bayrak' tepkisi, - Milliyet.com.tr (20.03.2017), <http://www.milliyet.com.tr/turkiye-den-kerkuk-e-bayrak--dunya-2417019/>, Erdoğan'dan Kerkük Tepkisi: Hemen O Bayraklarınızı İndirin, - Haberler.com (4 Nisan 2017) -<https://www.haberler.com/erdogan-dan-kerkuk-tepkisi-hemen-o-bayraklarinizi-9458455-haberi/>, Erdoğan'dan Kerkük Meclisi'ne 'bayrak' tepkisi (4 Nisan 2017), <http://www.bbc.com/turkce/haberler-dunya-39492528>.

<sup>27</sup> Kerkük'te Türkmenler'den bayrak protestosu, - Sabah (30.3.2017) <https://www.sabah.com.tr/aktuel/2017/03/30/kerkukte-turkmenlerden-bayrak-protestosu>.

տարածքների նկատմամբ վերահսկողությունն ու նույնիսկ հիշյալ տարածքների քրդական կառավարումը կարող էին օրինականացվել<sup>28</sup>։

❖ Հանրաքվեի արդյունքներն այնուհետև կարող էին լրացուցիչ առավելություններ տալ ՔՌԿ-ին Բաղդադի հետ բանակցություններում, որոնց օրակարգում կարող էին լինել եկամտների բաշխման, կառավարման հետագա ապակենտրոնացման կամ իշխանության լիազորությունների հետագա հանձնման, ՔՌԿ սահմանների դեմարկացիայի (տարածքների սահմանազատման) խնդիրները, առավել ևս, որ ՔՌԿ-ն հավակնում է ոչ միայն Քիրքուկին, այլև վիճելի մյուս տարածքներին, մասնավորապես Մախմուրին, Շանգալին և Խանաբինին։

❖ «Կենտրոնական» դաշնային կառավարության՝ ՔՌԿ-ին արվող ֆինանսական վճարումների դադարեցումը, Իսլամական պետության դեմ պատերազմի մեջ ներգրավված լինելը, փախստականների խնդիրն ու նավթի գների աննախադեպ անկումը ՔՌԿ-ին կանգնեցրել էին տնտեսական փլուզման եզրին։ Հետևաբար հանրաքվեն կարող էր նաև շեղել իրաքյան քրդերի ուշադրությունը Իրաքյան Քուրդիստանի ծանր տնտեսական իրավիճակից, որ շարունակվում էր 2014 թվականից<sup>29</sup>։

❖ Անհանդուրժողականությունն Իրաքյան Քուրդիստանում գնալով ուժեղանում էր։ 2015 թվականից ի վեր Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանը դադարեցրել էր իր գործունեությունը Մասուդ Բարզանու նախագահական պաշտոնավարության ժամկետի երկարաձգման որոշման շուրջ տեղ գտած քննարկումների արդյունքում<sup>30</sup>։ Օրենսդիր և գործադիր մարմնից դուրս էին բերվել ընդդիմադիր «Փոփոխություններ» («Գորրան») կուսակցության գործիչները<sup>31</sup>։ Ընդդիմությունը գնալով աճում էր։ Ակնհայտ ճեղքեր էին առաջացել «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության» (ԶԴԿ) և «Քուրդիստանի հայրենասիրական միության» (ԶՀՄ) միջև

<sup>28</sup> Adrian Florea, Kurdistan's referendum won't lead to independence – so why hold it?, - June 15, 2017 <http://theconversation.com/kurdistan-referendum-wont-lead-to-independence-so-why-hold-it-79447>.

<sup>29</sup> Adrian Florea, Kurdistan's referendum won't lead to independence – so why hold it?, - June 15, 2017 <http://theconversation.com/kurdistan-referendum-wont-lead-to-independence-so-why-hold-it-79447>.

<sup>30</sup> Disputed Iraqi Kurdistan's presidency must be top priority, Gorran says, Ekurd.net (November 25, 2016) <https://ekurd.net/disputed-kurdistan-presidency-2016-11-25>.

<sup>31</sup> Professor who called President Barzani term 'illegal': disappointed with fake news, Rudaw (May 27, 2017), <http://www.rudaw.net/english/kurdistan/27052017>.

կնքված ռազմավարական դաշինքում։ ԶԴԿ-ԶՀՄ հարաբերությունների կարգավորումը կարևոր էր ՔՌԿ-ի գոյատևման համար՝ հաշվի առնելով նախկինում այս երկու քրդական կուսակցությունների միջև քաղաքական, ռազմական ու տնտեսական գերակայության համար մղված քաղաքացիական պատերազմը<sup>32</sup>։ Ներքուրդիստանյան հարթակում դժգոհ դերակատարների աճող զանգվածի պայմաններում քրդական ղեկավարությունը, թերևս, կարող էր կատարել այն հաշվարկը, որ պահը հասունացել է անկախության պայքարի շուրջ բնակչությանը համախմբելու և թանկարժեք ժամանակ շահելու համար՝ այդ ընթացքում սկսելով միջքրդական ու ներքուրդիստանյան գործերի կարգավորումը։

❖ Թեև Մասուդ Բարզանու կողմից նախագահական պաշտոնի պահպանումն ու երկարաձգումը էական պառակտումներ էին ի հայտ բերել Քուրդիստանում, հաջողված հանրաքվեի արդյունքում Մասուդ Բարզանու՝ որպես Քուրդիստանի անվիճելի առաջնորդի և ԶԴԿ-ի՝ որպես անկախության հանրաքվեն նախաձեռնած հիմնական կուսակցության դիրքերը կամրապնդվեին։ Իր հերթին Մասուդ Բարզանին նախագահական նոր ժամկետի հնարավորություն կստանար։

❖ Անկախության հանրաքվեն կարող էր նպաստել Իրաքից քուրդիստանյան հատվածի արդյունավետ անջատման գործընթացի ամրապնդմանն ու ամրագրմանը, որը սկիզբ առավ դեռ 1990-ական թվականների սկզբներին։ Այն միաժամանակ ազդանշան-ուղեոր էր, որ երկարաժամկետ հեռանկարում անկախությունից պակաս ոչինչ այլևս չի կարող բավարարել իրաքյան քրդերին։

❖ Իրաքյան Քուրդիստանում տեղ գտած անկախության հանրաքվեն կարևորվում էր նաև «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության» (ԶԴԿ) և «Քուրդիստանի աշխատավորական կուսակցության» (ԶԱԿ կամ PKK) միջև տարածաշրջանային մակարդակում և քրդական սփյուռքում ընթացող մրցակցության տեսանկյունից։ Դե յուրե ինքնուրույն, սակայն դե ֆակտո PKK-ի սիրական մասնաճյուղը հանդիսացող «Դեմոկրատական միություն կուսակցությունը» (PYD) էական ձեռքբերումներ ունեցավ Սիրիայի քրդաբնակ տարածքներում (Ռոժավայում) քրդական ինքնավար

<sup>32</sup> Denise Natali, Is Iraqi Kurdistan heading toward civil war?, Al-Monitor (January 3, 2017), <https://www.al-monitor.com/pulse/originals/2017/01/kurdistan-civil-war-iraq-krq-sulaimaniya-pkk-mosul-kurds.html>.

կանտոնների ստեղծման և Հյուսիսային Սիրիայում իր դիրքերն ամրապնդելու գործում: Իր հերթին Հյուսիսային Իրաքի Քանդիլի հատվածից Թուրքիայի դեմ ավանդաբար գործող PKK-ն ամրապնդեց իր դիրքերը նաև եզրիաբնակ Շանգալի հատվածում<sup>33</sup>: Քուրդիստանի ռեզիդենտ կառավարության (ՔՌԿ-ի) կողմից, սակայն գերազանցապես «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության» (ՔԴԿ-ի) նախաձեռնությամբ իրականացված անկախության հանրաքվեն էական առավելություններ կտար վերջինիս ՔԴԿ-PKK մրցակցության և անզիջում պայքարի պայմաններում:

❖ Անկախության հանրաքվեն նաև թույլ էր տալիս քուրդ գործիչներին գնահատել ու չափել անկախ Քուրդիստանի միջազգային ճանաչման ներուժը<sup>34</sup>:

Այսպիսով՝ 2017 թվականի սեպտեմբերի 25-ին նախատեսված անկախության հանրաքվեն ուներ ներքին և արտաքին քաղաքական նպատակահարմարություն, ինչպես նաև տնտեսական ու քարոզչական հաշվարկներ: Քրդերի անկախության ձգտման համար ունեցած իր պատմական նշանակությունից զատ՝ հանրաքվե անցկացնելու որոշումը, ըստ էության, քաբցնում էր նաև մի շարք ավելի պարզ նպատակներ՝ Մասուդ Բարզանու, ՔԴԿ-ի և ընդհանրապես բարզանիականների՝ որպես Քուրդիստանի անվիճելի առաջատարների դիրքերի ամրապնդումը: Իրաքյան Քուրդիստանում անկախության հանրաքվեի անցկացումը բացառապես կառավարող «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության» (ՔԴԿ) բարզանիականների և մասնավորապես Քուրդիստանի նախագահ ու ՔԴԿ առաջնորդ Մասուդ Բարզանու նախաձեռնությունն էր: Մնացյալ բոլոր կուսակցությունները (նույնիսկ նրանք, ովքեր բացահայտորեն դեմ չէին և նույնիսկ արտաքուստ աջակցում էին վերջիններին) փակուղային իրավիճակում էին, քանզի անկախությունը մերժելը նշանակում էր կորցնել հետևորդների ու ընտրողների ստվար բանակ ու մարզինալացվել քրդական քաղաքական

<sup>33</sup> PKK to KDP: 'We are going to stay', Rudaw July 25, 2015, <http://www.rudaw.net/english/kurdistan/250720153>.

<sup>34</sup> Adrian Florea, Kurdistan's referendum won't lead to independence – so why hold it?, June 15, 2017, <http://theconversation.com/kurdistan-referendum-wont-lead-to-independence-so-why-hold-it-79447>.

դաշտում: Հանրաքվեի արդյունքում ՔԴԿ-ն (բարզանիականները) ցանկանում էր՝

➤ **ներքին դաշտում դառնալ անվիճելի առաջադար, վերարտադրել իր իշխանությունը և ուժեղ դիրքերից մուրեհալ** 2017 թվականի նոյեմբերի 1-ին նախատեսված (հետագայում բազմիցս հետաձգված) Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանական և նախագահական ընտրություններին<sup>35</sup>,

➤ **արտաքին դաշտում** լրացուցիչ լծակներ ձեռք բերել Բաղդադի հետ բանակցություններում՝ **կարճաժամկետ հեռանկարում** Քուրդիստանի ռեզիդենտ կառավարության համար ապահովելով կոնֆեդերատիվ կարգավիճակն ու կորզելով լրացուցիչ զիջումներ քաղաքական (վիճելի տարածքներ) և տնտեսական (բյուջեով նախատեսված ՔՌԿ մասնաբաժնի ստացում, լրացուցիչ իրավունքներ էներգակիրների արդյունահանման և արտահանման հարցում) դաշտում, իսկ **երկարաժամկետ հեռանկարում** թույլ տալով ՔՌԿ-ին ոչ այնքան անկախություն հռչակել, որքան հասնել Իրաքյան Քուրդիստանի անկախության գործընթացի հստակ ժամանակացույցի ամրագրմանը, այն է՝ գնալ Չեռնոգորիայի կամ Կոսովոյի անկախացման մոդելով: Հանրաքվեն կարող էր հետաձգվել միայն այն դեպքում, եթե արտաքին դաշտի հետ կապված (կարճաժամկետ կամ երկարաժամկետ) հաշվարկների իրականացման երաշխիքներ տրվեին, որոնք իրենց հերթին կրեթեին ներքին դաշտին առնչվող հաշվարկների արդարացմանը: Հակառակ ԱՄՆ-ի պետքարտուղար Ռեքս Թիլլերսոնի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 23-ին՝ հանրաքվեից երկու օր առաջ տրված որոշակի խոստումների փաստին<sup>36</sup>, Քուրդիստանի առաջնորդ Մասուդ Բարզանին

<sup>35</sup> Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանական ընտրությունները բազմիցս հետաձգվեցին և ի վերջո կայացան միայն 2018 թվականի սեպտեմբերի 30-ին, սակայն միջբրդական հակասությունների արդյունքում նախագահական ընտրությունները Քուրդիստանում չկայացան: Ներկայումս նույնիսկ անորոշ է Իրաքյան Քուրդիստանում նախագահի ինստիտուտի պահպանման հեռանկարը:

<sup>36</sup> ԱՄՆ պետքարտուղար Ռեքս Թիլլերսոնը 2017 թվականի սեպտեմբերի 20-ին և 23-ին երկու հատուկ ու պաշտոնական նամակներով էր դիմել Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանուն: Թիլլերսոնը խոստանում էր ԱՄՆ-ի և ՄԱԿ-ի աջակցությունը Իրաքյան քրդերի և Բաղդադի կառավարությունների միջև մեկ տարվա տևողությամբ երկխոսության համար, որոնց հիմնական նպատակն էր լինելու երկկողմ հարաբերություններում առկա մի շարք չլուծված խնդիրների կարգավորումը: Սեպտեմբերի 23-ին ուղարկված նամակը ներառում էր Ռեքս Թիլլերսոնի հետևյալ խոստումը. «Այս գործընթացի վերջում, իհարկե, եթե բանակցությունները չհասնեն փոխադարձաբար ընդունելի եզրակացությանը կամ ձախողվեն Բաղդադի բարեխղճության բացակայության պատճառով, մենք կճանաչենք

դրանք դիտարկեց որպես ուշացած առաջարկներ<sup>37</sup> կամ տրված երաշխիքների բավարար չհամարեց ու չհետաձգեց Քուրդիստանի անկախության հանրաքվեն:

Իրաքյան Քուրդիստանի անկախության հանրաքվեի անցկացումը ցուցադրեց ոչ միայն և ոչ այնքան կառավարող «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության» (ԲԴԿ) ամուր դիրքերը, որքան իրաքյան քրդերի անկախության ձգտումներն ու դրանց հիման վրա քրդական քաղաքական դաշտում գործող ուժերին իր որոշումը պարտադրելու<sup>38</sup> ԲԴԿ-ի կարողությունը:

Հանրաքվեի անցկացման և իր նպատակին հասնելու համար ԲԴԿ-ն (գերագանցապես ԲԴԿ-ն) աշխատում էր երեք մակարդակով.

- **Առաջին մակարդակը** ենթադրում էր միջքրդական և ներքուրդիստանյան տարբեր հիմնախնդիրների լուծում և ճգնաժամերի հաղթահարում,

- **Երկրորդը՝** Բաղդադի հետ բանակցությունների մեկնարկ՝ «հարթ ու խաղաղ անկախություն» ապահովելու համար:

- **Երրորդ մակարդակը** ներառում էր մեծ տերություններին ու տարածաշրջանային ուժերին տրվող հավաստիացումներն առ այն, որ Քուրդիս-

---

հանրաքվեի անհրաժեշտությունը»: See The Last Written Draft – Delivered on 23rd September, <https://assets.bwbx.io/documents/users/iqjWHBFdfxIU/rsJkyXsgEaig/v0>: Մինչև 2017 թ. սեպտեմբերի 20-ի նամակի նախագծում, օրինակ, չէր խոստացվել որևէ աջակցություն հանրաքվեին, այլ նշվել էր, որ բանակցությունների ձևախոսքն ղեկավարում, «դուր չեք կորցնի ձեր՝ ներկայումս ունեցած այլընտրանքային տարբերակներից և ոչ մեկը»: Eli Lake, Tillerson Letters Show U.S. Nearly Averted Kurdish Referendum, Bloomberg (13 October 2017), <https://www.bloomberg.com/opinion/articles/2017-10-13/tillerson-letters-show-u-s-nearly-averted-kurdish-referendum>:

<sup>37</sup> US offered to back year-long talks on all issues if Barzani called off referendum, Rudaw October 14, 2017, <http://www.rudaw.net/english/kurdistan/131020174>:

<sup>38</sup> Բացառություն էին «Գորբան» և «Քոմալա-յն Էսլամի» կուսակցությունները, որոնք բացահայտորեն դեմ էին անկախության հանրաքվեի անցկացմանը՝ այն համարելով ապագայի խնդիր: Սակայն «Քոմալա-յն Էսլամի» կուսակցության ղեկավար Ալի Բաֆիրը մասնակցեց հանրաքվեին և կողմ քվեարկեց անկախությանը: Չնավորվեց նաև «Այս պահին՝ ոչ» շարժումը, որ գլխավորում էր Շասվար Աբդուլ Վահիբը: Kurdistan commission registers ‘No for Now’ in referendum process, Ekuord.net (September 5, 2017), <https://ekurd.net/no-now-auditors-blocks-2017-09-05>: Հետագայում (հանրաքվեից անմիջապես հետո) վերջինս հիմնեց «Նոր սերունդ» շարժումը:

տանի անկախությունը ոչ մի կերպ չի վնասի տարածաշրջանում ձևավորված փոխկապակցված հարաբերություններին<sup>39</sup>:

Այս բոլոր մակարդակներում ԲԴԿ-ի ձեռքբերումները համեստ էին, քե՛ն պաշտոնական էրբիլը գտնում էր, որ ճիշտ է հաշվարկել, և հնարավոր ձեռքբերումները գերակշռում ու գերագանցում են կորուստները: Քաղաքական և ռազմական ռիսկերը հիմնականում անտեսվեցին:

Անտեսվեցին նաև փորձագետների պնդումները՝ անկախության կենսագործումից առաջ ԲԴԿ-ի կողմից իրականացվելիք քայլերի մասին: Մասնավորապես ԲԴԿ-ն պետք է ապահովեր.

- քրդական միասնական ճակատի առկայությունը, ինչը նշանակում էր, որ ԲԴԿ տարածքում գործող հիմնական քաղաքական կուսակցությունները պետք է նախապես լուծեին միմյանց միջև առկա վեճերն ու սկզբունքային հակասությունները,

- լիարժեք համագործակցությունը Բաղդադի հետ, քանզի վերջինիս հետ ԲԴԿ-ն պետք է բանակցեր սահմանների, ֆինանսական և ապագա դիվանագիտական հարաբերություններին առնչվող հարցերի վերաբերյալ,

- տարածաշրջանային համագործակցությունը, քանզի նույնիսկ անկախությունը հռչակելու դեպքում նոր պետությունը կարճատև կյանք կունենար, եթե իր հզոր տարածաշրջանային հարևաններից որևիցե մեկը (մասնավորապես Թուրքիան կամ Իրանի Իսլամական Հանրապետությունը) լիովին դեմ լինեին քրդական անկախությանը,

- վստահելի միջազգային դաշինքների առկայությունը, որպեսզի հանրաքվեից հետո անկախություն հռչակելու դեպքում այդ անկախ պետականությունն ընդունվեր ու ճանաչվեր միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԱԿ-ի կողմից<sup>40</sup>:

Առանց այդ չորս, ինչպես նաև մի շարք այլ տարրերի Իրաքյան Քուրդիստանը, Իլաքից անջատվելով, չէր կարող հասնել իրական, կայուն ու տևական անկախության:

---

<sup>39</sup> Omar Sattar, Many Obstacles to Kurdistan Independence Referendum.- Iraq business news (June 11, 2017), <http://www.iraq-businessnews.com/2017/06/11/many-obstacles-to-kurdistan-independence-referendum/>.

<sup>40</sup> Iraqi Kurdistan’s independence prospects (September 14, 2016), <http://www.peacefare.net/2016/09/14/iraqi-kurdistan-independence-prospects/>.

Իրաքյան Քուրդիստանի անկախության հանրաքվեին հաջորդած զարգացումների արդյունքում Քուրդիստանի ռեգիոնալ կառավարությունն (ՔՌԿ-ն) ունեցավ մի շարք ծանր կորուստներ ու ձախողումներ քաղաքական, ռազմական, տնտեսական և իրավական հարթություններում:

- ՔՌԿ-ն կորցրեց իր վերահսկողության ներքո գտնվող տարածքների շուրջ 40 %-ը՝ վերադառնալով հիմնականում 2014 թվականի, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ 2003 թվականի սահմաններին: Տնտեսական, քաղաքական ու բարոյահոգեբանական տեսանկյունից հատկապես ծանր էր նավթաբեր Քիրքուկի շրջանի կորուստը:

- Անկախության հանրաքվեի արդյունքում Քուրդիստանը, ըստ էության, մեկուսացվեց արտաքին աշխարհից: Բաղդադն ու Իրաքին սահմանակից պետությունները փակեցին իրենց օդային տարածքը ՔՌԿ-ի առջև՝ միջազգային թռիչքների համար: Հանրաքվեին անմիջապես հաջորդած փուլում ՔՌԿ-ն նույնիսկ կանգնած էր իր երկու՝ Էրբիլի և Սուլեյմանիե միջազգային օդանավակայանների և սահմանային ու մաքսային մի շարք անցակետերի նկատմամբ վերահսկողությունը Բաղդադին զիջելու վտանգի առջև: Ելք դեպի ծով չունեցող քրդական կազմավորման համար դա էական սպառնալիք էր:

- 2017 թվականի նոյեմբերի 1-ին Իրաքյան Քուրդիստանի նախագահի պաշտոնից հեռացավ ՔԴԿ առաջնորդ Մասուդ Բարզանին<sup>41</sup>: Նախագահական լիազորությունները բաժանվեցին Քուրդիստան ռեգիոնի օրենսդիր, գործադիր և դատական մարմինների միջև: Ավելին, շրջանառության մեջ դրվեց Քուրդիստանի նախագահի պաշտոնը լուծարելու գաղափարը:

<sup>41</sup> Իրաքյան Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանին, սակայն, ներկայումս նշում է, որ նախագահի պաշտոնից հրաժարական է տվել ոչ թե անկախության հանրաքվեն իր քաղաքական սխալը համարելու պատճառով, այլ որովհետև դա օրենքն էր պահանջում: լրացել էր նախագահության ժամկետը, իսկ ժամկետի երկարաձգումը կարող էր բացասական հետևանքներ ունենալ: Մասնավորապես մեկ տարի անց Ալ Ջաֆիրային տրված հարցազրույցում՝ «Ի՞նչ էք կարծում, սխալ էք արդյոք Դ-ուք գործել՝ հանրաքվե անցկացնելով: Դ-ուք այլ պատճառով հրաժարական տվեցիք նախագահի պաշտոնից» հարցին, Մասուդ Բարզանին տվեց հետևյալ պատասխանը. «Ամենևին: Եթե ես գտնեի, որ սխալ եմ թույլ տվել, ես ներողություն կխնդրեի ժողովրդից և կխոստովանեի, որ սխալվել եմ: Ես հրաժարվեցի օրենքի պատճառով, նաև այն պատճառով, որ ժամկետի երկարաձգումը կարող էր բացասաբար անդրադառնալ իմ ժողովրդի իրավունքների համար մղված պայքարի իմ անձնական պատմության վրա»: A Year on Since Referendum: Barzani Reveals US Envoys' Position, Basnews (September 24, 2018), <http://www.basnews.com/index.php/en/interviews/46-8194>.

- Իրաքյան բյուջեում ՔՌԿ-ի մասնաբաժինը նախկինում սահմանված էր 17 %-ի չափով: Մինչդեռ ներկայումս առկա է հիշյալ մասնաբաժինը 12,6 %-ի իջեցնելու միտումը: 2018 և 2019 թվականներին իրաքյան բյուջեում ՔՌԿ-ի մասնաբաժինն ամրագրվել է 12,6 %-ի չափով<sup>42</sup>: Իրաքյան կենտրոնական կառավարությունը գտնում է, որ բյուջեով արվող հատկացումները պետք է համապատասխանեն բնակչության իրական թվաքանակին ու տոկոսային հարաբերակցությանը, և որ մինչ այժմ ՔՌԿ-ի բնակչությանը վերաբերող տվյալներն ու դրա տոկոսային հարաբերակցությունը համաիրաքյան շրջանակներում չափազանցված են եղել:

- Հանրաքվեի արդյունքում միջքրդական հակասությունները ոչ միայն չկարգավորվեցին, այլև խորացան:

- Իրաքյան Քուրդիստանում բնակչության բարոյահոգեբանական ոգին որոշակի անկում ապրեց, և շուրջ մեկ տարի գերիշխում էին եթե ոչ պարտվողական, ապա, համենայն դեպս, Բաղդադի և տարածաշրջանային պետությունների հետ ոչ միայն փոխզիջումների, այլև զիջումների գնալու տրամադրությունները:

- Առկա է Իրաքյան Քուրդիստանի ապակայունացման վտանգը: 2017 թվականի դեկտեմբերին Սուլեյմանիեում տեղ գտած հակակառավարական ցույցերը<sup>43</sup> միայն դրա առաջին նախանշաններն էին:

- Հանրաքվեից անմիջապես հետո գնալով թուլանում էին Քուրդիստանի կռալիցիոն կառավարության դիրքերը: 2017 թվականի դեկտեմբերին կառավարության կազմից դուրս եկան «Գորրան» («Փոփոխություններ») և «Քոմալա-յե Էսլամի» կուսակցությունները<sup>44</sup>: 2018 թվականի հունվարին՝ որոշակի վարանումից հետո, հաշվի առնելով առաջիկայում սպասվող ընտրությունները, կռալիցիան կառավարության կազմից դուրս եկավ

<sup>42</sup> Ahmed Rasheed, Raya Jalabi, Iraq cabinet plans to cut Kurdistan share in 2018 federal budget, Reuters (November 6, 2017), <https://www.reuters.com/article/us-mideast-crisis-iraq-kurdistan-budget/iraq-cabinet-plans-to-cut-kurdistan-share-in-2018-federal-budget-idUSKBN1D627S>.

<sup>43</sup> Iraqi Kurdish region: Five killed in anti-KRG protests, Al Jazeera Media Network (20 December 2017), <http://www.aljazeera.com/news/2017/12/171220075526896.html>.

<sup>44</sup> «Գորրան» («Փոփոխություններ») և «Քոմալա-յե Էսլամի» կուսակցությունները Քուրդիստանի խորհրդարանում ունեին համապատասխանաբար 24 (փաստացի՝ 23) և 6 պատգամավորական մանդատ, իսկ կռալիցիոն կաբինետում ունեին համապատասխանաբար 5 և 1 նախարարական պորտֆել: St'u IKBY'de iki parti kabineden çekildi, Hürriyet (21.12.2017), <http://www.hurriyet.com.tr/ikbyde-iki-parti-kabineden-cekildi-40684946>:



նան «Քուրդիստանի իսլամական միություն» կուսակցությունը<sup>45</sup>: Մինչև նոր ընտրությունների անցկացումը Քուրդիստանի կոալիցիոն կաբինետում ներառված էին բացառապես երկու ամենաազդեցիկ կուսակցությունները՝ «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության» (ՔԴԿ) և «Քուրդիստանի հայրենասիրական միության» (ՔՀՄ) ներկայացուցիչները:

• Հանրաքվեին հաջորդած ժամանակաշրջանում ի հայտ եկած ներքաղաքական ճգնաժամը, ինչպես նաև ներքին և արտաքին քաղաքական անորոշությունները հանգեցրին Քուրդիստանի հաջորդ խորհրդարանական և նախագահական ընտրությունների հետաձգմանը: Ընտրությունները սկզբնապես նախատեսված էին նոյեմբերի 1-ին, սակայն հետաձգվեցին մինչև 2018 թվականի հունիս կամ հուլիս ամիսները: Ի վերջո ՔԴԿ խորհրդարանական ընտրություններն անցկացվեցին 2018 թվականի սեպտեմբերի 30-ին: Ինչ վերաբերում է նախագահական ընտրություններին, ապա նպատակահարմար գտան այն անցկացնել միայն Քուրդիստանի խորհրդարանական ընտրություններից հետո: Հիշյալ իրողությունը մեծացնում է անորոշությունները միջքրդական, քուրդիստանյան և ներիրաքյան հարթությունում՝ հետաձգելով նաև հանրաքվեի արդյունքում ի հայտ եկած ճգնաժամի հաղթահարումը: 2018 թվականի մայիսի 12-ին Իրաքի և 2018 թվականի սեպտեմբերի 30-ին Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանական ընտրություններից հետո որոշակիորեն սրվել են ՔԴԿ տարածքում գործող քրդական կուսակցությունների միջև հարաբերությունները: Առկա հակասությունները զնալով խորանում են:

• Նախքան հանրաքվեն տարածաշրջանային տերություններն անմիջական հարաբերություններ էին հաստատել ՔԴԿ-ի հետ: Սակայն հանրաքվեին հաջորդած փուլում առկա է բացառապես Բաղդադին բանակցային գործընկեր համարելու միտումը: ՔԴԿ-ն ներկայումս հետևողական քայլեր է ձեռնարկում միջազգային հարթակում նախկինում ունեցած իր դիրքերը վերականգնելու նպատակով:

<sup>45</sup> «Քուրդիստանի իսլամական միություն» կուսակցությունը Քուրդիստանի խորհրդարանում ուներ 10 պատգամավորական մանդատ, իսկ կոալիցիոն կաբինետում ուներ 5 նախարարական պորտֆել: Su'u Kurdistan İslami Birlik Partisi hükümetten çekilme kararı aldı, Güneş (17 Ocak 2018) <http://www.gunes.com/dunya/kurdistan-islami-birlik-partisi-hukumetten-cekilme-karari-aldi-845417>, İKBY kabinesinde çatlak devam ediyor (17.01.2018), <http://www.hurriyet.com.tr/ikby-kabinesinde-catlak-devam-ediyor-40712266>:

## Եզրակացություն

### (Անկախության հանրաքվեն և Քուրդիստանի ներքին դիսկուրսը)

Իրաքյան Քուրդիստանի անկախության հանրաքվեի անցկացման որոշմանն առնչվող, ասպարեզում առկա աղբյուրների հետազոտումը, ինչպես նաև ՔԴԿ-ի գրեթե ողջ քաղաքական սպեկտրը ներկայացնող բարձրաստիճան քաղաքական գործիչների, քուրդ և քրդագետ գործընկեր փորձագետների հետ Քուրդիստանի հանրաքվեից առաջ և հետո տեղ գտած անմիջական շփումների, հրապարակային և ոչ հրապարակային շարունակական մասնագիտական քննարկումների և ռազմավարական գնահատումների խտացումը թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները:

❖ Միջազգային դերակատարները, մասնավորապես Միացյալ Նահանգները, բավարար չափով չգործեցին ինչպես հանրաքվեին նախորդած, այնպես էլ հանրաքվեին անմիջապես հաջորդած վճռորոշ ժամանակահատվածում: Հիմնականում գերիշխում էին սպասողական կեցվածքն ու հանրաքվեի գաղափարի զուսպ մերժման դիրքորոշումը, ինչը հուսադրող էր ՔԴԿ-ի համար և թյուրըմբռնումների տեղիք տվեց: Հանրաքվեին դեմ արտահայտվող պետություններն ու միջազգային կազմակերպությունները, բնականաբար, չէին կարող մերժել ազգերի ինքնորոշման գաղափարը: Հետևաբար վերջիններս ոչ թե մերժում էին Իրաքյան Քուրդիստանի անկախության գաղափարն ու հանրաքվե անցկացնելու ՔԴԿ-ի իրավունքը<sup>46</sup>, այլ պարզապես նշում էին, որ ճիշտ չեն համարում հանրաքվեի անցկացումը տվյալ պահին, և որ դա կարող է շեղել քրդերին առավել կարևոր խնդրից՝ Իսլամական պետության դեմ պայքարից:

❖ Իրաքի կենտրոնական կառավարությունից բացի՝ Քուրդիստանի անկախության հանրաքվեին սկզբունքորեն դեմ էին և իրենց այդ դիրքորոշման մասին հետևողականորեն ու բացահայտորեն հայտարարում էին երկու ռեզիդնալ տերությունները՝ Թուրքիան և Իրանի Իսլամական Հանրապետությունը (ԻԻՀ-ն): Սակայն վերջիններս ոչ թե խնդրի փոխզիջումային կամ ընդունելի լուծում էին առաջարկում, այլ սպառնում դիմել հակաքայլերի: Ավելին, Թուրքիան և Իրանը պահանջում էին ՔԴԿ-ից ոչ թե հետաձգել

<sup>46</sup> Այս առումով բացառություն էր միայն իրաքյան կառավարության ներկայացմամբ Իրաքի գերագույն դատարանի կողմից ընդունված որոշումը, որի համաձայն՝ Քուրդիստանում հանրաքվեի անցկացումը հակասահմանադրական ճանաչվեց:

հանրաքվեի անցկացումը, այլ ընդհանրապես չեղյալ հայտարարել այն և ընդմիջտ հրաժարվել Իրաքից անջատվելու գաղափարից: Այդուհանդերձ, քրդական կողմը հույսեր էր տածում, որ Իրանի կտրուկ գործողությունների ղեկավարում կներգրավվի ԱՄՆ-ն՝ Իրանի ազդեցության հետագա աճը բացառելու նպատակով: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա ՔՌԿ-ի (հատկապես ՔԴԿ-ի) գործիչների մոտ այն տեսակետն էր գերիշխում, որ Թուրքիա-ՔՌԿ աննախադեպ համագործակցությունն ու փոխկախվածությունը իրավական, քաղաքական, տնտեսական, ռազմական և անվտանգային ոլորտներում, ինչպես նաև այն փաստը, որ ՔՌԿ կիսանկախ կարգավիճակի ամրապնդմանը թերևս ամենից շատ նպաստել էր Անկարան, նվազ հավանական են դարձնում Թուրքիայի կողմից ՔՌԿ-ի նկատմամբ կտրուկ քայլերի և առավելագույն պատժամիջոցների կիրառումը: ՔՌԿ-ն Թուրքիայից չէր ակնկալում աջակցություն, սակայն կտրուկ և ասիմետրիկ հակահարված նույնպես չէր ակնկալում<sup>47</sup>: Այս տեսանկյունից Էրբիլի հաշվարկները, թերևս, մասամբ արդարացված էին:

❖ Հանրաքվեից հետո հարևան պետությունների պատժամիջոցների տարբերակն ամենևին չէր բացառվում, սակայն, քրդական ղեկավարության համոզմամբ, այն առավելագույնը կտևեր 2-3 ամիս:

Այսպիսով՝ ՔՌԿ ղեկավարության սեփական մոբիլիզացիոն պոտենցիալի գերազնահատման, միջբրդական հակասությունների թերազնա-

<sup>47</sup> Մեր կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ ՔՌԿ բարձրագույն ղեկավարությունը գտնում էր, որ իրադարձությունները կարգաճանաչ 1992 թվականի սեպտեմբերի 1992 թվականին Իրաքյան Քուրդիստանում անցկացվեցին առաջին խորհրդարանական և նախագահական ընտրությունները: Դրան նախորդել էին Թուրքիայի կտրուկ արձագանքն ու սպառնալիքները: Սակայն ընտրությունների անցկացումից և Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանի կազմավորումից հետո կրքերը հանդարտվեցին: Արդյունքում Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանն Իրաքի ֆեդերալիզացման մասին որոշում ընդունեց, ինչը միանշանակ տարու էր Թուրքիայի և մասամբ ԻԻՀ-ի համար: Սակայն այս անգամ ևս ճգնաժամը հաջողվեց հաղթահարել: Այսպիսով՝ 1992 թվականին իրաքյան քրդերին հաջողվեց հաղթահարել Թուրքիայի կողմից սահմանված մի շարք արգելքներ «քրդական ինքնավարություն», «Քուրդիստան» և «ֆեդերալիզացիա» հասկացությունների շրջանակում: Սակայն քրդական ղեկավարությունն անտեսեց այն փաստը, որ իրաքյան քրդերի նշված ձեռքբերումներից որոշ ժամանակ անց տարածաշրջանային պետությունների «չանքերով» Իրաքյան Քուրդիստանում քաղաքացիական պատերազմ սկսվեց ՔԴԿ-ի և ՔՀՄ-ի միջև (1994-1998 թթ.), որի արդյունքը դարձավ Իրաքյան Քուրդիստանի փաստացի պառակտումը նշված երկու կուսակցությունների միջև: Միայն 2003 թվականին՝ հակաիրաքյան պատերազմից առաջ, ՔԴԿ-ին ու ՔՀՄ-ին հաջողվեց համախմբել իրենց ուժերը:

հատման ու դրանց հիման վրա կառուցված հաշվարկների ու հետհանրաքվեական շրջանի գարգացումների արդյունքում ՔՌԿ-ն ունեցավ աննախադեպ կորուստներ: Սակայն միջազգային հանրությունն ու ակտորները նույնպես բավարար չափով չարձագանքեցին հանրաքվեին և նրա հետևանքներին առնչվող մարտահրավերներին: Այդ մասին է վկայում թեկուզև այն փաստը, որ Քուրդիստանի անկախության հանրաքվեի այլընտրանքային իր առաջարկը ԱՄՆ-ն ներկայացրեց միայն քվեարկության անցկացումից երկու օր առաջ: Արդյունքում ԱՄՆ-ի երկու դաշնակիցների՝ Բաղդադի և Էրբիլի միջև կարճատև զինված բախումներ տեղ գտան՝ անկայունություն ստեղծելով Իրաքի առավել կայուն հատվածում՝ Քուրդիստանում, որն ավելի քան մեկ միլիոն փախստականներ է հյուրընկալել (հիմնականում սուննի արաբների) ինչպես Իրաքի մնացյալ շրջաններից, այնպես էլ Սիրիայից:

Կարևորվում է նաև Էրբիլ-Բաղդադ հարաբերություններին առնչվող դիսկուրսը.

❖ Այն փաստը, որ Իրաքյան խորհրդարանը վարչապետ Հայդեր ալ-Աբադիին ազատ գործելու լայն լիազորություններ շնորհեց, քրդական կողմը դիտում էր որպես սպառնալիք, սակայն ոչ թե ՔՌԿ-ի, այլ իր՝ Աբադիի համար: ՔՌԿ որոշ պաշտոնյաներ այն կարծիքին էին, որ Նուրի ալ-Մալիքին ցանկանում է վերադառնալ վարչապետի պաշտոնին: Հետևաբար նրա ջանքերով իրաքյան խորհրդարանն Աբադիին շնորհում էր աննախադեպ լայն լիազորություններ՝ նախապես հաշվարկելով, որ Աբադին չի կարող հաջողության հասնել, կձախողվի և հրաժարական կտա, մինչդեռ Աբադին Իրանի և Թուրքիայի աջակցությամբ հասավ հաջողության:

❖ Ինչ վերաբերում է Բաղդադի, Անկարայի և Թեհրանի ռազմական գործողությունների հավանականությանը, ապա Մասուդ Բարզանին լուրջ չէր վերաբերվում Հայդեր ալ-Աբադիի՝ ռազմական գործողությունների դիմելու սպառնալիքին: Իրանի (այդ թվում՝ իրանամետ ուժերի) և Թուրքիայի ռազմական գործողությունները թեև չէին բացառվում, սակայն, բարզանիականների կարծիքով, դրանց արդյունքում ՔՌԿ-ն չէր ունենա լուրջ կորուստներ: Նրանց պահեստային տարբերակն այն էր, որ փեշմարգան պետք է առավելագույն դիմադրություն ցույց տա ցանկացած հակառակորդի առաջադիմող գորքերին, որպեսզի ՔՌԿ-ն բավականաչափ ժամանակ ունենա՝ միջազգային միջամտությունն ու խաղաղության հարկադրանքն ապահովելու համար:

❖ Իրաքյան կառավարության տեղեկատվական արտահոսքի համաձայն՝ Բաղդադը մտադիր է օգտագործել իր ողջ պոտենցիալը, որպեսզի հաջողի դաշնային բյուջեի ԲՌԿ-ի բաժինը (որը կարող է կրճատվել՝ 17 %-ից հասնելով մինչև 13 %-ի) փոխանցել ոչ թե Քուրդիստանի ռեզիդենտ իշխանություններին (ԲՌԿ-ին), այլ ԲՌԿ-ն շրջանցելով՝ ուղղակիորեն բաժանել, այսպես կոչված, երեք «Հյուսիսային շրջաններին» (Էրբիլ, Սուլեյմանիա և Դոհուկ)՝ միաժամանակ ապահովելով որոշակի դաշնային վերահսկողությունն ու թափանցիկությունը և խուսափելով բարգամիականների վերահսկողության ներքո մեծ իշխանական լծակներ ու ռեսուրսներ կենտրոնացնելուց: Սակայն, մեր կարծիքով, Բաղդադի համար ղեկավարին խնդիր կհանդիսանա հիշյալ նպատակին հասնելը: Ի տարբերություն Քուրդիստանում գործող մյուս կուսակցությունների՝ ԲՌԿ ամենաազդեցիկ կուսակցությունները՝ ԲԴԿ-ն և ԲՀՄ-ն, ունեն իրենց զինյալ խմբավորումները: Հետևաբար, ոչ միայն ԲՌԿ-ի շրջանցումը, այլև Քուրդիստան ռեզիդենտի սահմանադրորեն ամրագրված անվանման և ֆեդերալ կարգավիճակի վերացումը, իջեցումը կամ վերջինիս տարածքի տրոհումը կարող են նույնիսկ հանգեցնել Էրբիլի և Բաղդադի միջև լուրջ բախումների: Հաշվի առնելով իրաքյան բանակի ներկայիս վիճակը՝ հաղթել Քուրդիստանի փեշմարգաներին՝ առանց ռեզիդենտ տերությունների աջակցության, Բաղդադը թերևս չի կարող:

❖ Իրաքյան կառավարության կողմից կարևորվում է նաև այն փաստը, որ Թալաբանի ընտանիքը փորձում է վերականգնել ԲՀՄ լեգիտիմությունն ու կուսակցական կարգապահությունը՝ Բաղդադի հետ գործարքների միջոցով՝ ԲՀՄ տարածքներում ստեղծված իրավիճակը կարգավորելու համար: ԲՀՄ-ն վերաբացել է Սուլեյմանիեի միջազգային օդանավակայանը, ձգտում է վճարել քաղաքացիական ծառայողներին, ինչպես նաև ժամանակին աշխատավարձ վճարել և վերացնել Բաղդադի կառավարության պատժիչ միջոցառումները: Սակայն Բաղդադի կողմից անտեսվում է այն իրողությունը, որ ԲՀՄ-ն նույնպես ներկայումս պատակտված է, և վերջինիս՝ 2019 թվականի սկզբին կայանալիք կուսակցական կոնգրեսի արդյունքում միայն վերջնականորեն պարզ կդառնան ԲՀՄ-ին առնչվող հնարավոր սցենարային զարգացումները:

❖ Հանրաքվեից անմիջապես հետո, Իրաքյան կառավարության սուբյեկտիվ ընկալմամբ, ակնհայտ էր նաև այն փաստը, որ ԲՌԿ-ն՝ որպես քրդերին միավորող ինստիտուցիոնալ իրականություն, այլևս գոյություն չունի: Բաղդադի ընկալմամբ, նահանջը տանում է դեպի ԲՌԿ երկու հին

ադմինիստրացիաների մոդել՝ համապատասխանաբար ԲՀՄ և ԲԴԿ վերահսկողության տարածքներ: Սակայն Քուրդիստանում գործող գրեթե բոլոր քաղաքական գործիչները, ընդունելով ավանդական միջքրդական հակասությունները, միաժամանակ գիտակցում են ԲՌԿ-ի պատակտման հնարավոր կործանարար հետևանքները՝ Իրաքյան Քուրդիստանի և առանձին կուսակցությունների շահերի տեսանկյունից:

Այսպիսով՝ անկախության հանրաքվեի անցկացման արդյունքում ի հայտ եկավ միջքրդական և ներիրաքյան ճգնաժամ, մինչդեռ Քուրդիստանի ռեզիդենտ կառավարությունը հայտնվեց որոշակի միջազգային մեկուսացման մեջ: Իրենք՝ քրդերը, նման իրավիճակը կանխատեսում էին, սակայն գտնում էին, որ դա կարճատև բնույթ կկրի՝ տևելով առավելագույնը 2-3 ամիս: Այս պահի դրությամբ կարելի է արձանագրել, որ հիշյալ կանխատեսումներն ու հաշվարկները չիրականացան: Իրաքի (տե՛ս Հավելված 1) և Իրաքյան Քուրդիստանի (տե՛ս Հավելված 2) 2018 թվականի մարտի 12-ին և սեպտեմբերի 30-ին կայացած խորհրդարանական ընտրություններում ԲԴԿ-ն և ԲՀՄ-ն ունեցան որոշակի ձեռքբերումներ: Իրաքյան Քուրդիստանի կառավարությանը հաջողվել է կայունացնել իրավիճակը ներքին հարթակում, իսկ արտաքին ասպարեզում՝ նույնիսկ արձանագրել ակնհայտ հաջողություններ:

#### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Քուրդիստանի անկախության հանրաքվեին հաջորդած ժամանակահատվածում ստեղծված անկայունության ու անորոշության պայմաններում անհրաժեշտ է ոչ միայն իրականացնել քրդական զարգացումների և Բաղդադ-Էրբիլ հարաբերությունների ներքին մշտադիտարկում, այլև օրակարգում պահել Իրաքյան Քուրդիստանի կառույցների հետ համագործակցության հեռանկարը:
- ՀՀ դիրքորոշման մշակման համատեքստում իրրև մեկնակետ պետք է ընդունել այն իրողությունը, որ Իրաքյան Քուրդիստանի ռեզիդենտ կառավարությունը, չնայած հեղինակության որոշակի կորստին, ռազմաքաղաքական ու տնտեսական ծախսողումներին, շարունակում է մնալ տարածաշրջանային զարգացումների գործոն, և դուրս է գալիս մեկուսացումից:

Հավելված 1.

2018 թ. մայիսի 12-ին կայացած Իրաքի խորհրդարանական ընտրություններում քրդական կուսակցությունների արձանագրած արդյունքները:

Կուսակցությունը	Մանդատները	Մանդատների թվի աճը կամ նվազումը՝ նախորդ ընտրությունների համեմատությամբ
«Քուրդիստանի դեմոկրատական կուսակցություն» (ՔԴԿ)	25	0
«Քուրդիստանի հայրենասիրական միություն» (ՔՀՄ)	18	-3
«Փոփոխություններ» («Գորրան») շարժումը/ կուսակցությունը	5	-4
«Նոր սերունդ» շարժումը	4	Նոր կուսակցություն է, որն առաջին անգամ էր մասնակցում Իրաքի խորհրդարանական ընտրություններին
Ժողովրդավարության և արդարության կոալիցիա	2	Նոր կուսակցություն է, որն առաջին անգամ էր մասնակցում Իրաքի խորհրդարանական ընտրություններին
Քուրդիստանի իսլամական խումբ («Քոմալա-յե էսլամի»)	2	-1
«Քուրդիստանի իսլամական միություն» (ՔԻՄ)	2	-2

2018 թվականի մայիսի 12-ին կայացած Իրաքի խորհրդարանական ընտրություններում քրդական կուսակցությունների շարքում լավագույն արդյունքն արձանագրեցին ՔԴԿ տարածքում գործող ամենաազդեցիկ երկու կուսակցությունները՝ ՔԴԿ-ն և ՔՀՄ-ն՝ ստանալով համապատասխանաբար 25 և 18 մանդատ: Ընդհանուր առմամբ քրդական կուսակցությունները ստացան Իրաքյան խորհրդարանի 329 մանդատներից 58-ը:

Հավելված 2

2018 թ. սեպտեմբերի 30-ին կայացած ՔՌԿ խորհրդարանական ընտրությունների արդյունքում քրդական կուսակցությունների ստացած քվեներն ու մանդատները՝ 2013 թ. արձանագրած արդյունքների համեմատությամբ:

Կուսակցություն կամ այլանս	2013		2018	
	Խորհրդարանում ստացած մանդատները	Ընտրություններում ստացած քվեները	Խորհրդարանում ստացած մանդատները	Ընտրություններում ստացած քվեները
«Քուրդիստանի դեմոկրատական կուսակցություն» (ՔԴԿ)	38	743 984	45	688 070
«Քուրդիստանի հայրենասիրական միություն» (ՔՀՄ)	18	350 500	21	319 219
«Գորրան» («Փոփոխություններ») շարժումը	24	476 173	12	186 903
«Նոր սերունդ» շարժումը	---	---	8	127 115
«Քուրդիստանի իսլամական խումբ» («Քոմալա-յե էսլամի»)	6	118 575	7	109 494
«Դեպի բարեփոխումներ» այլանսը/դաշինքը.	10	186 741	5	79 434
«Քուրդիստանի իսլամական միություն» (Yekgirtû) + «Քուրդիստանի իսլամական շարժում» (Bizutinewe)	1	21 834		

«Ժամանակակից» (Sardam) ալյանը/դաշինքը. - «Քուրդիստանի սոցիալիստական դեմոկրատական կուսակցություն», + - «Քուրդիստանի աշխատավորական կուսակցություն», + - «Քուրդիստանի դեմոկրատական ազգային միություն»	1	12 501	1	15 581
Ազատության ցուցակ («Քուրդիստանի կոմունիստական կուսակցություն» – Իրաք)	1	12 392	1	8 063

Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանում մանդատների թիվը 111-ն է, Վերոհիշյալ աղյուսակում ներկայացված է Իրաքյան Քուրդիստանի խորհրդարանի 100 մանդատների բաշխումը՝ ՔՌԿ տարածքում գործող քրդական կուսակցությունների միջև: Մնացյալ 11 մանդատներն առանձնացված են ազգային փոքրամասնությունների համար և բաշխվում են հետևյալ կերպ. ասորիներին՝ 5, թուրքմաններին՝ 5 և հայերին՝ 1 մանդատ:

### Անդամների հրատարակված անունների ցուցակ

1. Մասուդ Փեգեշքիան – Թավրիզ, Օսբու և Ազարշահր
2. Նադեր Ղազիփուր – Ուրմիա
3. Ռեզա Քարիմի – Արդաբիլ, Նիր, Նամին և Սարեյն
4. Մոհամմադ Հասանեժադ – Մարանդ և Ջուլֆա
5. Շահաբեդդին Բիմեդդար – Թավրիզ, Օսբու և Ազարշահր
6. Ջահրա Մայի – Թավրիզ, Օսբու և Ազարշահր
7. Ահմադ Ալիեզաբեյգի – Թավրիզ, Օսբու և Ազարշահր
8. Ալի Աբբարի – Շիրազ
9. Յադուբ Շիվյարի – Միանե
10. Էլյաս Հազրաթի – Թեհրան, Ռեյ, Շամիրամաթ և Էսլամշահր
11. Մասումեհ Աղափուր – Շաբեսթար
12. Ֆերեյդուն Ահմադի – Ջենջան և Թարոմ
13. Մահմուդ Բահմանի – Սավոջբուլաղ, Թալեղան և Նազարաբաղ
14. Էյնոլլահ Շարիֆփուր – Մակու, Չարդորան, Փոլղաշտ և Շուվթ
15. Մոհամմադ Վահդաթի – Բոսթանաբաղ
16. Հեմայուն Հաշեմի – Միանդոաթ, Շահինդեժ, Թեքաթ
17. Բեհրուզ Նեմաթի – Թեհրան, Ռեյ, Շամիրամաթ և Էսլամշահր
18. Ֆարդին Ֆարմանդ – Միանե
19. Հեմայաթ Միրզադե – Գերմի
20. Շահրուզ Բարգեզար – Սալմաստ
21. Հադու Բահադուրի – Ուրմիա
22. Ահմադ Ամիրաբադի – Ղոմ
23. Ալի Վաֆադչի – Ջենջան և Թարոմ
24. Մոհամմադ Հոսսեյն Ֆարհանգի – Թավրիզ, Օսբու և Ազարշահր
25. Մոհամմադ Ֆեյզի – Արդաբիլ, Նիր, Նամին և Սարեյն
26. Ռուհոլլահ Հազրաթփուր – Ուրմիա
27. Յունաթեն Բեթթոլիա – ասորի փոքրամասնության ներկայացուցիչ
28. Մոհամմադ Ռեզա Բաղամչի – Թեհրան, Ռեյ, Շամիրամաթ և Էսլամշահր

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ**  
**Հայ-քրդական առնչությունների բաժին**

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ N 1**

### **ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ԳԻՆԱՄԻԿԱՆ ՀՀ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

**(Փորձագիտական հոդվածների ժողովածու)**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալարյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի  
Հրատ. սրբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի  
Ներդիրի լուսանկարները՝ Վ. Պետրոսյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:  
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Ստորագրված է տպագրության՝ 20.12.2018:  
Չափսը՝ 60x84<sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 6 + 8 էջ ներդիր:  
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.y-su.am](http://www.publishing.y-su.am)